



ԵՐԵՎԱՆԻ  
ՍԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵԱՀԿ

Եվրոպայում անվտանգության և  
համագործակցության կազմակերպություն  
երևանյան գրասենյակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՇԱՐՁԱԿՈՂ ՉԼՍ-ՆԵՐՈՒՄ

2012թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,  
2013թ. ՆԱԽԱԳԱԶՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
2013թ. ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



# ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

2013  
ԵՐԵՎԱՆ



ԵՐԵՎԱՆԻ  
ՍԱՄՈՒԵԼԻ ԱԿՈՒՄԲ



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵԱՀԿ

Եվրոպայում անվտանգության և  
համագործակցության կազմակերպություն  
Երևանի գրասենյակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁՎԿՎՈՂ ԶԱ-ՆԵՐՈՒՄ  
2012թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,  
2013թ. ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԵՎ 2013թ. ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ**

Սույն փաստաթուղթը պատրաստված է Հայաստանում միջազգային  
չափորոշիչներին համապատասխան ընտրական գործընթացների  
կատարելագործման ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է  
ԵԱՀԿ երեանյան գրասենյակը՝ Եվրոպական միության ֆինանսական  
օժանդակությամբ: Փաստաթղթում արտահայտված տեսակետները որևէ  
կերպ չեն կարող ընկալվել որպես Եվրամիության կամ ԵԱՀԿ պաշտոնական  
կարծիքի արտացոլում:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

5

2012թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	11
ՀՀ Ազգային ժողովի 2012թ. մայիսի 6-ի ընտրությունների արդյունքները	12
Հայաստանի հեռարձակվող ՉԼՍ-ներում ՀՀ 2012թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման հաշվետվություն	13
ՀՀ 2012թ. խորհրդարանական ընտրությունների նախաշեմին Հայաստանի հեռարձակվող ՉԼՍ-ների մշտադիտարկման միջանկյալ հաշվետվություն (2011թ. նոյեմբերի 16 - դեկտեմբերի 15)	24
ՀՀ 2012թ. խորհրդարանական ընտրությունների նախաշեմին Հայաստանի հեռարձակվող ՉԼՍ-ների մշտադիտարկման միջանկյալ հաշվետվություն (2012թ. մարտի 1-31)	29

2013թ. ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	35
ՀՀ 2013թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների արդյունքները	36
Հայաստանի հեռարձակվող ՉԼՍ-ներում ՀՀ 2013թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման հաշվետվություն	37
Հայաստանի հեռարձակվող ՉԼՍ-ներում ՀՀ 2013թ. նախագահական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման միջանկյալ հաշվետվություն (2012թ. հոկտեմբերի 1 - դեկտեմբերի 15)	45
Հայաստանի հեռարձակվող ՉԼՍ-ներում ՀՀ 2013թ. նախագահական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման միջանկյալ հաշվետվություն (2013թ. հունվարի 14-20)	51

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	53
Երեւանի ավագանու 2013թ. մայիսի 5-ի ընտրությունների արդյունքները	54
Հայաստանի հեռարձակվող ՉԼՍ-ներում Երեւանի ավագանու 2013թ. մայիսի 5-ի ընտրությունների լուսաբանման հաշվետվություն (2013թ. ապրիլի 7 - մայիսի 3)	55
Հայաստանի հեռարձակվող ՉԼՍ-ներում Երեւանի ավագանու 2013թ. մայիսի 5-ի ընտրությունների եւ հետքնտրական գործընթացների լուսաբանման հաշվետվություն (2013թ. մայիսի 4-19)	62

## **ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ՉԼՄ-ՆԵՐԻ ԺԱՆԿՅ ԵՎ ՀԱՍԱՌՈԾ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**69**

### **ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

**77**

#### **Հավելված 1.**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՄԵՏԱԴԱՏԱՐԿԱՆ ՄԱՍԻՆ / ՄԵՏԱԴԱՏԱՐԿԱՆ  
ԱՆՔԱՇՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**78**

**2012թ. խորհրդարանական ընտրություններ**

**79**

**2013թ. նախագահական ընտրություններ**

**93**

**Երեւանի ավագանու 2013թ. ընտրություններ**

**103**

#### **Հավելված 2.**

**ՄԵՏԱԴԱՏԱՐԿԱՆ ԱՊՅՈՒՍԱԿՆԵՐ**

**113**

**2012թ. խորհրդարանական ընտրություններ**

**114**

**2012թ. ապրիլի 8 - մայիսի 4**

**2011թ. նոյեմբերի 16 - դեկտեմբերի 15**

**2012թ. մարտի 1-31**

**2013թ. նախագահական ընտրություններ**

**146**

**2013թ. հունվարի 21 - փետրվարի 16**

**2012թ. հոկտեմբերի 1 - դեկտեմբերի 15**

**2013թ. հունվարի 14-20**

**Երեւանի ավագանու 2013թ. ընտրություններ**

**198**

**2013թ. ապրիլի 7 - մայիսի 3**

**2013թ. մայիսի 4-19**



# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ների կողմից 2012-2013 թվականների ընտրական շրջափուլի լուսաբանման մշտադիտարկումն անցկացրել է Երեանի մամուլի ակումբը՝ Հայաստանում միջազգային չափորոշիչներին համապատասխան ընտրական գործընթացների կատարելագործման ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է ԵԱՀԿ Երեանյան գրասենյակը՝ Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ:

**ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. մայիսի 6-ի ընտրությունների** լուսաբանման հետազոտումն իրականացվում էր Երկու փուլով. **առաջին փուլն** ընդգրկում էր 2011թ. նոյեմբերի 16-ից դեկտեմբերի 15-ը եւ 2012թ. մարտի 1-ից 31-ը (նախընտրական քարոզության նախաշեմ), **երկրորդ փուլը՝** 2012թ. ապրիլի 8-ից մայիսի 4-ը (նախընտրական քարոզություն):

**2013 թ. փետրվարի 18-ի ՀՀ նախագահական ընտրությունների** լուսաբանման մշտադիտարկումն իրականացվել է Երեք փուլով. **առաջին փուլն** ընդգրկում էր 2012թ. հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 15-ը (նախընտրական քարոզության նախաշեմ), **երկրորդ փուլը՝** 2013թ. հունվարի 14-ից 20-ը (ՀՀ նախագահի թեկնածուների պաշտոնական գրանցումից մինչեւ նախընտրական քարոզության սկիզբն ընկած ժամանակահատվածը), **երրորդ փուլը՝** 2013թ. հունվարի 21-ից փետրվարի 16-ը (նախընտրական քարոզություն):

**Երեանի ավագանու 2013թ. մայիսի 5 ընտրությունների** մշտադիտարկումն անցկացվում էր Երեք փուլով. **առաջին փուլն** ընդգրկում էր 2013թ. ապրիլի 7-ից մայիսի 3-ը (նախընտրական քարոզություն), **երկրորդ փուլը՝** 2013թ. մայիսի 4-ը եւ մինչեւ մայիսի 5-ի ժամը 20.00-ն (օրեր, երբ քարոզությունն արգելված է ընտրական օրենսդրությամբ), **երրորդ փուլը՝** 2013թ. մայիսի 5-ի ժամը 20.00-ից մինչեւ մայիսի 19-ը (հետընտրական իրավիճակի լուսաբանում):

**Խորհրդարանական ընտրությունների** ժամանակ մշտադիտարկումը ներառում էր 7 համազգային հեռուստաալիք՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ալիք (Շ1), «Շողակաթ», «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», Հայկական երկրորդ հեռուստաալիք (Շ2), «Շանթ», մեկ մայրաքաղաքային հեռուստաալիք՝ «Արմենուլ» (Հայաստանում միակ հեռուստաալիքը, որն ունի լրատվական-վերլուծական եւ միջազգային ուղղվածություն), ինչպես նաև մեկ համազգային ռադիոալիք՝ Հայաստանի հանրային ռադիոն:

**Նախագահական ընտրություններում** հետազոտված հեռարձակվող ԶԼՄ-ների թիվը փոփոխություն չկրեց (9 հեռուստառադիոալիք). սակայն ցանկից դուրս մնաց «Շողակաթ», որն ընդգրկված է Հանրային հեռուստառադիոընկերության համակարգում: Ինչպես ցոյց տվեց ՀՀ Աժ ընտրությունների մշտադիտարկումը, հետազոտության ողջ ընթացքում «Շողակաթը» հավատարիմ էր մնում իր՝ որպես հոգեւոր-մշակութային հեռուստաալիքի ուղղվածությանը, ինչով եւ պայմանավորված էր նրա եթերում ընտրական թեմայի գործեթ իսպառ բացակայությունը: Միենույն ժամանակ, ցանկը լրացվեց եւս մեկ ռադիոալիքով՝ «ԱրմՌադիո FM 107»

(Հայաստանում միակ «զրուցակցային» շուրջօրյա ռադիոհեռարձակողը, որն առաջնահերթ ուշադրություն է դարձնում հասարակական-քաղաքական գործնթացներին):

**Մայրաքաղաքի ավագանու ընտրությունների ժամանակ հետազոտվող հեռարձակվող ԶԼՄ-ների թիվը սահմանափակվեց յոթով: Չեն հետազոտվել երկու հեռուստաալիք՝ «Արմենիան» եւ «Շանթը», որոնք համազգային ընտրությունների ժամանակ համեմատաբար թույլ հետաքրքրություն էին հանդես բերել ընտրությունների նկատմամբ:**

Հեռարձակվող ԶԼՄ-ների գործունեության հետազոտումը նախընտրական քարոզչությանը նախորդող ժամանակահատվածում պայմանավորված է նրանով, որ ըստ ավանդույթի՝ Հայաստանում ոչ պաշտոնական նախընտրական քարոզարշավը զգալիորեն ավելի շուտ է մեկնարկում, քան` քարոզչության համար նախատեսված նախընտրական ամիսը: Եվ ԶԼՄ-ների, առաջին հերթին առավել զանգվածայինների՝ հեռուստաալիքների գործելակերպը տարբեր փուլերում հիմնականում կանխորոշում է ընտրազանգվածի տրամադրությունները: Նմանատիպ հետազոտությունները թույլ են տալիս երեակելու ինչպես հայկական հեռուստաառադիտերերի դերը քաղաքական գործնթացներում, այնպես էլ հեռարձակվող ԶԼՄ-ների գործունեության կարգավորման խնդիրները: Հետընտրական իրավիճակի լուսաբանումը լավագույնս հնարավորություն է ընձեռում դասեր քաղել ինչպես թեկնածուների, կուսակցությունների դրսեւորած քաղաքական վարքից, այնպես էլ բուն ընտրական գործնթացից: Նման վերարժեվորման պակասը սահմանափակում է ընտրությունների՝ որպես կարեւորագույն ժողովրդավարական ինստիտուտի, կատարելագործման հեռանկարները: Հետեւաբար, հետընտրական մշտադիտարկումը թույլ է տալիս հասկանալ, թե որքանով են ԶԼՄ-ները նպաստում այդ գործնթացին:

## 2012-2013թթ. ԸՆՏՐԱԿԱՆ ԾՐՋԱՓՈԽՎԼԻ ՀՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՃՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**1. Լուսաբանման հավասարակշռվածությունը:** Հետազոտված հեռարձակվող ԶԼՄ-ները հիմնականում խտրականություն կամ բացահայտ կողմնակալ վերաբերմունք չեն դրսեւորել խորհրդարանական, նախագահական եւ մայրաքաղաքի ավագանու ընտրությունների մասնակիցների նկատմամբ: Հիմնականում հավասար պայմաններ են ապահովել ընտրազանգվածին թեկնածուների, կուսակցությունների/դաշինքների ծրագրերին ու հայացքներին ծանոթացնելու համար: Բնականաբար, ընտրությունների ոչ բոլոր մասնակիցների մասին են ընտրողները համարժեք տեղեկություններ ստացել, սակայն դա եղել է քաղաքական ուժերի՝ ընտրարշավ կազմակերպելու հնարավորությունների եւ ցանկության հետեւանքը: Այս առումով հայաստանյան հեռարձակվողները նախորդ համազգային ընտրությունների համեմատ անվիճելի առաջընթաց են ցուցաբերել: Եվ եթե խորհրդարանական ընտրությունների ժամանակ հավասարակշռված լուսաբանում ապահովվել էր միայն պաշտոնական քարոզչության ժամանակ, ապա նախագահական ընտրություններին նմանատիպ գնահատական կարելի է տալ նաեւ դրան նախորդող ժամանակահատվածին: Դրանով հանդերձ, նախընտրական քարոզչությանն անմիջապես նախորդող ժամանակահատվածների եւ արագընթաց

նախընտրական քարոզչության միջեւ որոշ դեպքերում դեռևս առկա զգալի տարբերությունը հերթական անգամ ապացուցում է ոչ թե քարոզարշավային 4 շաբաթների, այլ ավելի տեսական ժամանակահատվածի կանոնակարգման եւ դիտարկման անհրաժեշտությունը: Հակառակ պարագայում դժվար է խոսել թեկնածուների համար տեղեկատվական հավասար հնարավորությունների մասին:

**2. Նշանային բնութագրիչներով լուսաբանումը:** Համագգային ընտրությունները ՀՀՄ-ների լուսաբանման տոնայնության դրական դինամիկա ի հայտ բերեցին: Այսպես, խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ժամանակ մրցակցող կուսակցությունների՝ նշանային բնութագրիչներով լուսաբանման տեսակարար կշիռը կազմել է հետազոտված բոլոր ալիքներում անդրադարձների հանրագումարի 3.5%-ը (ինչն էական նվազում էր՝ նախորդ բոլոր համապետական ընտրարշավների համեմատությամբ): Նախագահական ընտրություններին այդ ցուցանիշը նվազեց մինչեւ 2.2%: Մինչդեռ Երեանի ավագանու ընտրությունների ժամանակ մրցակցող քաղաքական ուժերի նշանային բնութագրիչով անդրադարձների տեսակարար կշիռը մեկուկես անգամ ավելի բարձր էր խորհրդարանական եւ նախագահական ընտրություններից (5.3%): Սա վկայում էր անգիծում պայքարի մասին եւ հաստատում այն, որ մայրաքաղաքային ընտրությունները դիտարկվում էին որպես այս շրջափուլում վճռորոշը: Քաղաքական մրցակցության շիկացումն անդրադարձել է ընտրությունների տեղեկատվական քաղկացուցչի վրա եւ խախտել վերջին ընտրությունների ընթացքում ուրվագծված միտումը՝ երկրի քաղաքական կյանքի առավելապես չեզոք լուսաբանումը: Ընդ որում, նշանային լուսաբանման տեսակարար կշռի աճը հիմնականում տեղի է ունեցել Ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության շրջանի վերջին մեկ երրորդում: Այդ 9 օրերի ընթացքում նշանային բնութագրիչներով անդրադարձները կազմել են 8%, ինչը զգալիորեն բարձր էր, քան ընդհանուր առմամբ նախընտրական քարոզչության 27 օրերին:

**3. Թաքնված քաղաքական գովազդը:** Ընտրությունների լուսաբանման սույն եւ նախորդ մշտադիտարկումները ցույց են տալիս, որ եւ նախընտրական քարոզչությանը նախորդած ժամանակաշրջանում, եւ պաշտոնական քարոզչության ժամանակահատվածում որոշ հեռուստաալիքների խմբագրական նյութերում պահպանվում է քաղաքական գովազդի անուղղակի հատկանիշներ պարունակող, նույն կամ գրեթե նույն սյուժեների (ինչպես տեսաշարով, այնպես էլ տեքստով) օգտագործման պրակտիկան: Այդ հատկանիշները հիմք են տալիս ենթադրելու, որ նշյալ սյուժեներն իրենցից ներկայացնում են ոչ թե իրադարձությունների խմբագրական լուսաբանում, այլ՝ թաքնված քաղաքական քարոզչություն, որն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը հակասող պայմաններով: Այսպիսի երեւոյթներ արձանագրվել են հիմնականում լրատվական այն նյութերում, որոնք նվիրված են եղել որոշ կուսակցությունների բարեգործական ակցիաներին, սոցիալական ուղղվածության նախաձեռնություններին եւ նախընտրական հանդիպումներին: Սա ստիպում է հերթական անգամ հարց բարձրացնել քաղաքական կուսակցությունների համար կանխապես անհավասար պայմանների, օրենսդրական-նորմատիվ կարգավորման հստակեցման, ինչպես նաև ոչ միայն նախընտրական քարոզչության կարծ ժամանակաշրջանում, այլ նաև դրան նախորդող շրջանում մշտադիտարկում անցկացնելու անհրաժեշտության մասին:

**4. Հանրային եւ մասնավոր հեռարձակողների դերը:** Որպես ես մեկ խնդրահարուց միտում կարող է նշվել ընտրությունների եւ ընդհանրապես քաղաքական կյանքի լուսաբանման գործում հանրային հեռարձակվողների դերի նվազումը: Այս գործոնն առանձնակի նշանակություն է ստանում մի շարք մասնավոր հեռուստաալիքների ուժգնացող քաղաքականացման պայմաններում, որոնք, առնչված լինելով կոնկրետ կուսակցությունների, որոշակի առումով համապատասխան տեղեկատվական օրակարգ են իրականացնում: Այս վերջին հանգամանքը կարող է երկակի գնահատվել: Մի կողմից՝ հեռարձակվող ԶԼՄ-ներում զանազան քաղաքական շահերի արտացոլումը հանդիսանում է ընտրարշավների լուսաբանման ժամանակ բազմակարծության ապահովման գրավականը, բայց, մյուս կողմից, հանրային ռեսուրսը (հաճախականությունները) փաստորեն օգտագործվում է ներ քաղաքական նպատակներով, ինչը հակասում է ՀՀ օրենսդրության էությանը: Բացի դրանից, հայկական եթերում նման իրավիճակը սահմանափակում է այն քաղաքական ուժերի տեղեկատվական հնարավորությունները, որոնք հեռարձակվողների վրա ազդեցության լծակներ չունեն, իսկ փոքրիշատե հավասարակշիռ լուսաբանման երաշխիքներ (օրենսդրություն եւ մշտադիտարկում) առկա են լինում միայն պաշտոնական նախընտրական քարոզարշավի կարծ ժամանակահատվածներում: Այդ սահմանափակումը որոշակի չափով առնչվում է նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, անկախ փոքրագետներին: Նշված հանգամանքներն ավելորդ անգամ ընդգծում են Հայաստանում հեռարձակման լիցենզավորման՝ ձեւավորված պրակտիկայի խնդրահարուց լինելը, որը հնարավոր է դարձնում եթերի, առաջին հերթին՝ հեռուստաեթերի բովանդակության նկատմամբ քաղաքական շահերի գերակայությունը:

**5. Լուսաբանումը «լրության օրերին»:** Այն օրերի մշտադիտարկումը, երբ նախընտրական քարոզարշավն արգելվում է, երեւան է հանել հայկական ընտրահամակարգի համար ակնհայտ օրենսդրական-նորմատիվ բացերը: Բացակայում են ինչպես հստակ սահմանումները, այնպես էլ պարզաբանող մեկնաբանություններն առ այն, թե ինչն է հանդիսանում քարոզչություն: Որպես դրա հետեւանք՝ ավելի շատ բացառություն, քան կանոն է՝ քվեարկությանն անմիջապես նախորդող այս կարծ, բայց կարեւոր ժամանակաշրջանում ԶԼՄ-ներին խախտումների համար պատասխանատվության ենթարկելը: Տարբեր հեռուստառադիտիաղորդումներում այնպիսի դրվագներ են հայտնվում, որոնք կարող են անմիջական ազդեցություն ունենալ քաղաքացիների ընտրության վրա: Մինչեւ, եւ «լրության օրերը», եւ քվեարկությունից անմիջապես հետո տեղի ունեցող գործընթացները որոշակի իմաստով նվազ կարեւոր չեն, քան նախընտրական քարոզչությունը: Ընտրողին իրավես 1-2 օր է պետք, որպեսզի ինքնուրույն «մարսի» տեղեկատվության այն հարածուն հոսքը, որը նրա վրա է տեղացել արշավի նախորդ օրերին: Եվ քարոզչության ցանկացած տարր կարող է խանգարել իմաստավորման եւ վերջնական որոշում կայացնելու գործընթացին: Ընտրողներին ուղղորդող նմանատիպ դրվագների ամենամեծ թիվը գրանցվել է երեւանի ավագանու ընտրություններին՝ ընդհանուր առմամբ՝ 60 նյութ, մշտադիտարկման խմբի կողմից որակված որպես «պայմանական խախտումներ» կամ «պայմանական քարոզչություն»: Այլ կերպ ասած, «լրության օրերի» նորմերի պահպանման առնչվող խնդիրները չեն կարող վերացվել առանց ընտրական օրենսդրությունում «քարոզչություն» հասկացության կոնկրետացման:

**6. Մայրաքաղաքի ավագանու ընտրությունների գնահատականը:** Յետքնտրական իրավիճակի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հետազոտված հեռարձակվողների եթերում հայ հանրության տարբեր կատեգորիաների կողմից ընտրություններին տրված գնահատականը հիմնականում բացասական էր: Բացասականի ամենամեծ ինտենսիվությունն արձանագրվել է լրագրողների խոսքում, որոնք նշել են բազմաթիվ թերություններ ու խախտումներ: Երեանի ավագանու ընտրություններն ինտենսիվորեն քննադատել է քաղաքական ընդդիմությունը (նրա ներկայացուցիչների կարծիքների կեսից ավելին բացասական վերաբերմունք էր պարունակում ընտրարշավի նկատմամբ), իսկ տեղացի դիտորդների գնահատականներում բացասականի տեսակարար կշիռը կեսից փոքր-ինչ պակաս էր: Յիմնականում խոսվել է ընտրողների կաշառման, վարչական ռեսուրսի օգտագործման, քաղաքացիների վրա ծնշում գործադրելու գանազան ձեւերի մասին:

**7. Քաղաքական բանավեճերի բացակայությունը:** Շարունակում է լուրջ խոչընդոտ հանդիսանալ հայաստանյան քաղաքական գործիչների՝ եթերում բաց քննարկումներին եւ բանավեճերին ոչ բավարար կերպով պատրաստ լինելը: Հնարավոր է, հենց բանավեճերի բացակայությունն է Հայաստանի հեռարձակվող ՀԼՍ-ների կողմից նախընտրական արշավի լուսաբանման գլխավոր խնդիրը: Սա հավասարապես վերաբերում է նաև հեռարձակվող ՀԼՍ-ներում արդյունավետ հետքնտրական դիսկուրսի բացակայությանը, ինչը խոչընդոտում է ապագայի համար դասեր քաղելուն:



# **2012թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2012թ. ՄԱՅԻՍԻ 6-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ Ազգային ժողովի 2012թ. մայիսի 6-ի ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցել են 8 կուսակցություններ եւ 1 կուսակցական դաշինք:

2012թ. մայիսի 13-ին ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է ՀՀ ԱԺ ընտրությունների քվեարկության վերջնական արդյունքները: Կուսակցություններին/դաշինքին տրված ձայները բաշխվել են հետեւյալ կերպ (տոկոսներով):

	<b>Կուսակցություն/դաշինք</b>	<b>%</b>
<b>1.</b>	Հայաստանի հանրապետական կուսակցություն	<b>44.11</b>
<b>2.</b>	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	<b>30.19</b>
<b>3.</b>	Հայ ազգային կոնգրես կուսակցությունների դաշինք	<b>7.10</b>
<b>4.</b>	«Ժառանգություն» կուսակցություն	<b>5.78</b>
<b>5.</b>	«Հայ Յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն	<b>5.68</b>
<b>6.</b>	«Օրինաց երկիր» կուսակցություն	<b>5.52</b>
<b>7.</b>	Հայաստանի կոմոնիստական կուսակցություն	<b>1.06</b>
<b>8.</b>	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	<b>0.37</b>
<b>9.</b>	«Միավորված հայեր» կուսակցություն	<b>0.20</b>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՀՀ 2012թ. ՄԱՅԻՍԻ 6-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՃՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվության մեջ ամփոփված են մշտադիտարկման արդյունքները նախընտրական քարոզության ժամանակաշրջանում (2012թ. ապրիլի 8-ից մինչեւ մայիսի 4-ը), ինչպես նաև դրան նախորդած ամիսներին՝ 2011 թվականի նոյեմբերի 16-ից դեկտեմբերի 15-ը եւ 2012թ. մարտի 1-ից մինչեւ 31-ը:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ընդգրկում էր 7 համազգային հեռուստաալիք՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ալիք (Հ1), «Շողակաթ» (նոյնպես ընդգրկված է Հանրային հեռուստառադիոընկերության համակարգում), «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», Հայկական երկրորդ հեռուստաալիք (Հ2), «Ճանթ», 1 մայրաքաղաքային հեռուստաալիք «Արմենյուզ» (Հայաստանում միակ հեռարձակվողը, որի լիցենզիան ենթադրում է լրատվական ուղղվածություն), ինչպես նաև Հայաստանի հանրային ռադիոն: Թվարկված հեռուստառադիոալիքներում հետազոտվել են նախընտրական քարոզության ժամանակաշրջանում **18.00-01.00** հեռարձակված բոլոր հաղորդումները, բացառությամբ քաղաքական (նախընտրական քարոզանյութեր), առեւտրային եւ սոցիալական գովազդի: Այլ փուլերում հետազոտվել են լրատվական ծրագրերի հիմնական թողարկումները եւ հիմնական հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները, որոնք հեռարձակվել են նոյն ժամանակահատվածում:

Մշտադիտարկման առարկա են դարձել այն նյութերը, որոնցում նախընտրական քարոզության ժամանակաշրջանում առկա էին անդրադարձներ 9 քաղաքական կուսակցություններին եւ դաշինքին, որոնք ՀՀ ԿԸՆ-ում գրանցվել են ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցելու համար, իսկ նախորդ փուլերում այն քաղաքական ուժերին, որոնք այս կամ այն ձեռվ մտադրություն էին հայտնել առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու, կամ էլ ակտիվ դիրքորոշում են ունեցել քաղաքական կյանքում: Արձանագրվել են հետազոտվող ԶԼՄ-ների կողմից կուսակցություններին/դաշինքին հատկացված եթերաժամանակը, անդրադարձների հածախականությունն ու նշանային բնութագրիչները:

ՏԱՐԲԵՐ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ պայմանավորված էր նրանով, որ ըստ ավանդույթի Հայաստանում ոչ պաշտոնական նախընտրական քարոզարշավը զգալիորեն ավելի շուտ է մեկնարկում, քան քարոզության համար նախատեսված նախընտրական ամիսը: Եվ ԶԼՄ-ների, առաջին հերթին առավել զանգվածայինների՝ հեռուստաընկերությունների գործելակերպը տարբեր փուլերում հիմնականում կանխորոշում է ընտրազանգվածի տրամադրությունները: Նմանատիպ հետազոտությունները թույլ են տալիս երեակելու ինչպես հայկական հեռուստառադիոեթերի դերը քաղաքական գործընթացներում, այնպես էլ հեռարձակվող ԶԼՄ-ների գործունեության կարգավորման խնդիրները:

ՆԱԽԾՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ հետազոտված հեռարձակվող ԶԼՄ-ներն ընդհանուր առմամբ քաղաքական ուժերի համար ապահովել են հավասար պայմաններ իրենց ծրագրերն ու հայացները ընտրազանգվածին ներկայացնելու համար: Բնականաբար, ընտրությունների ոչ բոլոր մասնակիցների մասին են ընտրողները համարժեք տեղեկություններ ստացել, սակայն դա եղել է քաղաքական ուժերի ընտրարշավ կազմակերպելու հնարավորությունների եւ ցանկության հետեւանքը: Այս առումով հայաստանյան հեռարձակվողներն անվիճելի առաջընթաց են ցուցաբերել նախորդ համազգային ընտրությունների համեմատ: Դրա հետ մեկտեղ, մշտադիտարկման քանակական տվյալները վկայում են այն մասին, որ առանձին ալիքներ, հատկապես նախընտրական քարոզչության վերջին օրերին, պատշաճ ուշադրություն չեն դարձրել ընտրարշավի համաչափ լուսաբանման սկզբունքի պահպանմանը:

Թեեւ հետազոտված հեռարձակվողները նախորդ համազգային ընտրությունների, ինչպես նաեւ նախընտրական քարոզչության չորսաբարթյա ժամանակաշրջանին նախորդած ամիսների համեմատ մի քայլ առաջ են գնացել, չի կարելի ասել, որ համանման առաջընթաց է եղել նաեւ քաղաքական գործիչների վարքագծում: Ինչպես եւ նախկինում՝ վերջիններս ոչ միշտ են ԶԼՄ-ներին ժամանակին տեղեկացրել իրենց նախընտրական միջոցառումների մասին, երբեմն խուսափել են քաղաքական բանավեճերին, մտքերի փոխանակություն ենթադրող այլ բանավիճային հաղորդումներին մասնակցելուց: Որոշակի խառնաշփոթ էր պահպանվում ընտրարշավների անմիջական մաս կազմող միջոցառումների եւ այն միջոցառումների միջեւ, որոնցում քաղաքական ուժերի առաջնորդները հանդես էին գալիս ոչ թե որպես այդպիսիք, այլ որպես պետական քարձրաստիճան պաշտոնյաների կարգավիճակով: Դա, անշուշտ, որոշակի խոչընդոտներ էր ստեղծում քաղաքացիների իրազեկ եւ գիտակից ընտրության համար:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄԻ ԾԱՐՔ ԽՆԴԻՐՆԵՐ անմիջականորեն առնչվում են օրենսդրության անկատարությանը: Նախընտրական քարոզչությանը նախորդած ժամանակաշրջանում «Քարգավաճ Հայաստան» կուսակցության (ՔՀԿ) եւ, ավելի նվազ չափով, «Օրինաց Երկիր» կուսակցության (ՕԵԿ) բարեգործական ակցիաներին, սոցիալական ուղղվածության նախաձեռնություններին եւ նախընտրական հանդիպումներին նվիրված որոշ նյութեր պարունակում էին թաքնվածքաղաքական գովազդի անուղղակի հատկանիշներ: Նոյն կամ գրեթե նոյն սյուժեները (ինչպես տեսաշարուվ, այնպես էլ տեքստով) եթեր են տրվել մեկից ավելի ալիքում՝ հիմնականում «Կենտրոնում» եւ Հ2-ում, իսկ առանձին դեպքերում նաեւ «Երկիր Մերիայի», «Արմենիայի» ու «Ճանթի» եթերում: Այդ հատկանիշները հիմք են տալիս ենթադրելու, որ նշյալ սյուժեներն իրենցից ներկայացնում էին ոչ թե իրադարձությունների խմբագրական լուսաբանում, այլ թաքնված քաղաքական քարոզչություն, որն իրականացվում էր պայմաններով, որոնք հակասում են ՀՀ օրենսդրությանը: Եվ ոչ միշտ է անմիջականորեն նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում ԶԼՄ-ների անգամ կատարյալ աշխատանքն ի զորու լինում փոխհատուցել մինչ այդ ձեւավորված անհամաշխափությունը: Դա ստիպում է հերթական անգամ հարց բարձրացնել քաղաքական կուսակցությունների համար կանխապես անհավասար պայմանների մասին, նաեւ այն բանի անհրաժեշտության մասին, որ հստակեցվեն օրենսդրական-նորմատիվ կարգավորումը եւ մշտադիտարկում անցկացնել ոչ միայն նախընտրական քարոզչության կարծ ժամանակաշրջանում, այլև դրան նախորդող ժամանակաշրջանում:

Մասնավորապես, կուսակցությունների կողմից տարբեր հեռարձակվողներին ներկայացվող «մամուլի տեսահաղորդագրությունները», ԵՍՍ մշտադիտարկման խմբի կարծիքով, պետք է որպես քաղաքական գովազդ ընկալվեն, եթե դրանք անհրաժեշտ խմբագրական մշակման չեն ենթարկվում: Եթերում անփոփոխ տարբերակով դրանց հեռարձակումը չի կարող ներկայացվել որպես ԶԼՄ-ի կողմից լուսաբանում, քանի որ լսարանն իրավունք ունի իմանալու, թե երբ է իրեն լրագրողական նյութ առաջարկվում եւ որ դեպքում է դա քաղաքական գործիչների անմիջական ուղերձ:

Ընտրությունների ժամանակ ԶԼՄ-ների աշխատանքում սահմանափակումների հստակ ընկալմանը խոչընդոտել են նաեւ սոցիոլոգիական հարցումների լուսաբանման մասին օրենսդրական դրույթների տարընթերցումները: Մի կողմից՝ 2012թ. խորհրդարանական ընտրությունների նախաշեմին ՀՀ ընտրական օրենսգրքից հանվել է քվեարկության օրվան նախորդող վերջին 7 օրերին նախընտրական սոցիարցումների լուսաբանման արգելքը, բայց մյուս կողմից էլ նման լուսաբանման համար տուգանքներ առաջվա պես նախատեսված են Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում: Որպես դրա հետեւանք՝ որոշ ԶԼՄ-ներ, այդ թվում՝ հեռարձակվողներ, շարունակում էին սոցիարցումները լուսաբանել մայիսի 6-ին նախորդած վերջին շաբաթվա ընթացքում:

Յայաստանում հեռարձակվող ԶԼՄ-ների գործունեության լիցենզավորման եւ կարգավորման անընդունելի համակարգը (տես, մասնավորապես, 2010թ. դեկտեմբերին անցկացված հեռարձակման լիցենզավորման մրցույթների արդյունքների փորձագիտական դիտարկումը հայերեն եւ անգլերեն՝ ԵՍՍ կայքի «Հետազոտություններ» բաժնում՝ [http://www.ypc.am/media\\_research/In/am](http://www.ypc.am/media_research/In/am)) հանգեցրել է քաղաքական շրջանակներից, հատկապես՝ իշխանամետ, հեռուստաընկերությունների կախվածության անհանդուրժելի աստիճանի: Դա պայմանավորել է նախորդ բոլոր ընտրարշավների, ինչպես նաեւ ներկայիս խորհրդարանական ընտրությունների պաշտոնական նախընտրական քարոզությանը նախորդած ժամանակաշրջանի անհամաշխափ լուսաբանումը: Լուրջ հիմքեր կան պնդելու, որ նախընտրական քարոզության ժամանակաշրջանում արձանագրված էական առաջընթացը հետեւանք էր ոչ թե Յայաստանի փոփոխված մերիալանդշաֆտի, այլ քաղաքական ամենաբարձր մակարդակով ընդունված որոշման՝ ընտրություններին մասնակցող կուսակցություններին տրամադրել հեռուստաեթերի մատչելիության հավասար հնարավորություններ: Բայց նույնիսկ այս պայմաններում որոշ չափով զգացվեց հեռուստաալիքների քաղաքական կախվածությունը: Այսպես, մինչեւ նախընտրական քարոզության ժամանակաշրջանը հետազոտված ալիքների եթերում ընդհանուր առմամբ նկատվում էր կառավարող կուալիցիայի կուսակցությունների (Յայաստանի հանրապետական կուսակցություն, «Օրինաց Երկիր» եւ «Բարգավաճ Յայաստան») դրական եւ ընդդիմադիր Յայ ազգային կոնգրեսի (ՅԱԿ) բացասական լուսաբանման միտում: Իսկ արդեն բուն նախընտրական քարոզության ժամանակաշրջանում հեռարձակվողների մեծամասնության եթերի հարաբերական համաշափությամբ հանդերձ «Կենտրոնում» եւ «Երկիր Մեդիայում» երեակվել է ընդգծված բացասական վերաբերմունք Յայաստանի հանրապետական կուսակցության (ՅՅԿ) նկատմամբ եւ ընդգծված դրական վերաբերմունք համապատասխանաբար «Բարգավաճ Յայաստան» կուսակցության (ԲՅԿ) եւ Յայ Յեղափոխական Դաշ-

նակցության (ՀՅԴ) նկատմամբ: Յարկ է նշել, որ ԲՀԿ-ի այդօրինակ լուսաբանումը «Կենտրոնին» հատուկ է եղել նաև մինչ նախընտրական քարոզությունը:

Եթե ոչ օրենսդրական կարգավորում, ապա ինքնակարգավորում պահանջող եւս մի ավանդական եւ դեռևս հրատապ խնդիր է կուսակցությունների առաջնորդների ընտրարշավին չառնչվող գործունեության լուսաբանումը: Ներկայիս խորհրդարանական ընտրությունների ժամանակ այն գլխավորապես վերաբերում էր ՀՀԿ-ին, որի ընտրացուցակի առաջին եւ երրորդ համարներն են ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը եւ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը: Նախընտրական քարոզության ժամանակաշրջանում նրանց ոչ կուսակցական գործունեության լուսաբանումը տարբեր ալիքներում կազմել է ՀՀԿ-ի ողջ եթերաժամանակի միջին հաշվով 25%-ը: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր ալիքի եթեկոյան եթերում նրանց օրական շուրջ 3 րոպե էր հատկացվում: Այս ծավալը կարելի էր ընդունելի համարել, եթե խոսքը գնար անհետաձգելի հրապարակային միջոցառումների մասին: Սակայն երկրի երկու դեկավարների մասնակցությամբ ոչ բոլոր հրապարակային միջոցառումները կարելի էր պարտադիր համարել ընտրարշավի ժամանակաշրջանում, որում իրենք նաև թեկնածուներ են: Եթե ներքին եւ արտաքին այնպիսի միջոցառումների, իրադարձությունների մասնակցությունը, որոնց ժամկետները որոշվում են իրենց կամքից անկախ՝ Սուրբ Զատիկի տոնակատարությունը, կառավարության նիստերը եւ այլն, միանգամայն օրինաչափ է, ապա ամենատարբեր հիմնարկ-ձեռնարկություններ հաճախակի այցելությունները, հանդիսավոր արարողություններին եւ այլնին մասնակցությունը ոչ միշտ են հանդիսանում որպես մի բան, որը չէր կարող նախատեսվել ընտրարշավի ժամանակաշրջանից առաջ կամ հետո: Մանավանդ, որ կա չգրված կանոն՝ նախընտրական քարոզություն վարելու առավելագույնս հավասար պայմանների ապահովման համար քարոզարշավին մասնակցող պետության դեկավարները պիտի կրծատեն, այլ ոչ թե հաճախացնեն իրենց մասնակցությունը ընտրարշավին չառնչված հրապարակային միջոցառումներին:

Բնականաբար, հեռարձակվող ԶԼՄ-ներն ավանդաբար լուսաբանում են նախագահի եւ վարչապետի մասնակցությամբ յուրաքանչյուր հրապարակային միջոցառում, եւ, փաստորեն, եթերաժամանակի եւ անդրադարձների հաճախականությամբ մրցակիցների նկատմամբ ՀՀԿ առավելությունը ծեավորվել է գլխավորապես նրանց՝ որպես պաշտոնական անձինք գործունեության հաշվին: Դա առաջին հերթին վերաբերում է Հանրային ռադիոյին եւ «Ճանթին», որոնցում ՀՀ նախագահի եւ վարչապետի մասնակցությամբ ընտրություններին անմիջականորեն չառնչված միջոցառումների լուսաբանումը կազմել է այդ ալիքների կողմից ՀՀԿ-ին հատկացված ողջ եթերաժամանակի 41.7%-ական մասը եւ կարող է բնորոշվել որպես չափից դուրս:

Քաղաքական ուժերի առաջնորդների ոչ կուսակցական գործունեության լուսաբանման ծավալի առումով ուշագրավ է «Կենտրոնի» վերաբերմունքը ԲՀԿ ընտրացուցակի առաջին համար եւ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Գագիկ Ծառուկյանի նկատմամբ: Նախընտրական քարոզության ժամանակաշրջանում «Կենտրոնի» եթեկոյան եթերում որպես ՀԱՕԿ-ի դեկավար նրա գործունեությանը մոտավորապես նույնքան ուշադրություն է հատկացվել, որքան «Միավորված հայեր» կուսակցությանը հատկացված ողջ եթերաժամանակը:

ՆԱԽԾՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ քաղաքական ուժերի նկատմամբ առավել հետաքրքրություն է դրսետրել «Արմնյուզը» (այստեղ եւ այսուհետ մշտադիտարկման քանակական արդյունքները տես ստորեւ բերված գրաֆիկներում, ինչպես նաև Յավելված 2-ի աղյուսակներում): 2012թ. մայիսի 3-ին «Արմնյուզը» ներկայիս ընտրարշավի «քացարձակ ռեկորդ» է սահմանել քաղաքական ուժերի լուսաբանման հաճախականությամբ եւ ծավալով՝ կուսակցություններին/դաշինքին 295 անդրադարձ եւ երեկոյան եթերում նրանց հատկացրած 9,424 վայրելյան: Լուսաբանման ծավալով երկրորդը եւ երրորդը՝ առաջատարից զգալիորեն հետ մնալով, դարձել են «Կենտրոնը» եւ «Երկիր Մեդիան»: Եվ եթե այս երկու հեռուստաալիքները ակտիվություն են դրսետրել մշտադիտարկման բոլոր փուլերում, ապա «Արմնյուզը» նախընտրական գործընթացների լուսաբանման հաճախականությամբ եւ ծավալով առաջատար է դարձել՝ աստիճանաբար ավելացնելով դրանց նկատմամբ ուշադրությունը: Նախընտրական քարոզարշավի ժամանակաշրջանի նախաշեմին նրա պահիվությունը դժվարըմբռնելի էր, հատկապես նկատի ունենալով լիցենզիայով նախատեսված ուղղվածությունը՝ նա լրատվական ուղղվածություն ունեցող միակ հեռարձակվողն է Յայաստանում:


Նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում ներքաղաքական իրավիճակը հետազոտված մյուս ալիքներից քիչ են լուսաբանել **31-ը, «Արմենիան»** եւ **«Ճանթը»**: «Արմնյուզի» վերոհիշյալ «ռեկորդը» հավասար էր այս ալիքների կողմից նախընտրական իրավիճակի լուսաբանման 4-5-օրյա «չափաբաժնին»: Մշտադիտարկման նախորդ փուլերում նոյնպես այս ալիքներն էին ամենաքիչ ուշադրությունը ցուցաբերել: Ասվածն առաջին հերթին վերաբերում է **«Ճանթին»**, որն ունենալով նոյնպիսի (ընդհանուր ուղղվածության հեռուստաալիք) լիցենզիա, ինչպիսին, օրինակ, **«Կենտրոնը»**, 2012թ. մարտի 1-ից 31-ը նախընտրական գործընթացներին գոեթե 5 անգամ ավելի քիչ եթերաժամանակ է հատկացրել:

Սակայն եթե մշտադիտարկման նախորդ փուլերում նախընտրական գործընթացների նկատմամբ ուշադրության պակասը կարող էր անդրադառնալ լսարանի իրազեկվածության վրա, ապա ապրիլի 8-ից ի վեր պոտենցիալ ընտրողները ստացել են լուրերի ու կարծիքների անհրաժեշտ նվազագույնը: Յետազոտված 9 հեռարձակվողներից 8-ի լրատվական թողարկումներում ռեպորտաժներ են ցուցադրվել բոլոր 9 կուսակցությունների/դաշինքի նախընտրական հանրահավաքների եւ այլ միջոցառումների մասին, բանավիճային հաղորդումներում քաղաքական գործիչները հաճախակի են հյուրընկալվել: Բացի այդ, հեռարձակվողների եթերում ցուցադրվել են վճարովի (իսկ **31-ում** եւ **Յանրային ռադիոյում** նաև անվճար) նախընտրական հոլովակներ:


9 հեռարձակվողներից մեկը՝ **«Ճողակաթը»**, ինչպես եւ մշտադիտարկման նախորդ փուլերում, հավատարիմ է մնացել իր՝ որպես հոգեւոր-մշակութային հեռուստաալիքի ուղղվածությանը: Մշտադիտարկման մեջ ընդգրկված նրա հաղորդումներում ընդամենը 23 անդրադարձ կար քաղաքական կուսակցություններին/դաշինքին: Դրանցից 18-ը եւ եթերաժամանակի 124 վայրելյանը նվիրված էին **ՅՅԿ-ին**՝ բոլոր նշված դեպքերում էլ դա եղել է **ՅՅ** նախագահի եւ վարչապետի ընտրարշավի հետ չառնչվող գործունեության լուսաբանում: Յետեւաբար, սույն հաշվետվությունում ներկայացված վերլուծությունն ու համեմատությունները չեն վերաբերում այս հեռարձակվողին:

**ԳՐԱՖԻԿ 1. Ընտրադավագի նկատմամբ հետազոտված հեռարձակվողների  
ուշադրության աստիճանը (եթերաժամանակի ծավալով)**


**16 նոյեմբերի - 15 դեկտեմբերի, 2011**



**1-31 մարտի, 2012**



8 ապրիլի - 4 մայիսի, 2012




ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՒԾԱԴՐՈՒԹՅՈՒՆ առավել համաչափ է բաշխվել «Արմենով» եւ Հանրային ռադիոյում: Կուսակցություններին/դաշինքին հատկացված եթերաժամանակի առումով ամենաշատ տարբերություն արձանագրվել է «Կենտրոնում», ուր ԲՀԿ-ն, ինչպես եւ մշտադիտարկման բոլոր նախորդ փուլերում, լուսաբանման ծավալով ճնշող առավելություն ուներ իր մրցակիցների նկատմամբ: Իսկ անդրադարձների հաճախականությամբ ամենամեծ տարբերությունն արձանագրվել է «Շանթում»:

Հետազոտված բոլոր հեռարձակվողների հանրագումարված ցուցանիշներով ՀՀԿ-ն առաջատար է դարձել ինչպես անդրադարձների հաճախականությամբ, այնպես էլ եթերաժամանակով: Առաջին ցուցանիշով այս կուսակցությունը առաջ է անցել բոլորից եւ առանձին վերցված յուրաքանչյուր ալիքում, իսկ լուսաբանման ծավալով առաջատար է հետազոտված 8 հեռարձակվողներից 5-ի եթերում: Ինչպես նշվել է, «Կենտրոնում» այս ցուցանիշով մրցակցությունից դուրս էր ԲՀԿ-ն, «Երկիր Մեդիայում»՝ ՀՅԴ-ն, իսկ «Արմենիայում» ՀԱԿ-ն է բոլորից առաջ անցել: Հետազոտված ալիքների հանրագումարված ցուցանիշներով ԲՀԿ-ն ու ՀՅԴ-ն ՀՀԿ-ի հետ միասին առաջատարների եռյակն են կազմել ուշադրության աստիճանը բնորոշող երկու ցուցանիշներով՝ անդրադարձների հաճախականություն եւ եթերաժամանակ: Ընդսմին, չորրորդ տեղում գտնվող ՀԱԿ-ի նկատմամբ ԲՀԿ-ի ու ՀՅԴ-ի առավելությունը ծեփավորվել է իրենց նկատմամբ համապատասխանաբար «Կենտրոնի» եւ «Երկիր Մեդիայի» կողմից հատուկ ուշադրության հաշվին: «Մեծ վեցյակի» (նշված չորսից բացի՝ նաև ՕԵԿ-ը եւ «Ժառանգությունը») մյուս քաղաքական ուժերը ինչպես նախընտրական քարոզության ժամանակաշրջանում, այնպես էլ մինչ այդ նույնպես բավականին ինտենսիվ են լուսաբանվել: Ըստրարշավը նվազ ակտիվ են վարել Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը եւ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, ինչն էլ արտացոլվել է մշտադիտարկման արդյունքների նրանց ցուցանիշներում: Առանձնակի է «Միավորված հայեր» կուսակցության պարագան:

Նրա լուսաբանումը մշտադիտարկման սկզբնական փուլերում հետազոտման առարկա չէր այն պատճառով, որ այն նախկինում հրապարակային ակտիվություն չէր դրսեւորում եւ մինչեւ 2012թ. մարտի կեսերը ակնհայտ ձեռվ չէր հայտարարում խորհրդարանական ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցելու մտադրության մասին: Սույն հանգամանքը, ինչպես եւ ընտրարշավի հարաբերականորեն պասիվ վարումն անդրադարձել են ԶԼՄ-ների կողմից այդ կուսակցությանը ուշադրության վրա:

## **ԳՐԱՖԻԿ 2. Խորհրդարանական ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերի միջեւ եթերաժամանակի բաշխումը\***



\*Մշտադիտարկման առաջին փուլում «Միավորված հայեր» կուսակցությունը չի հետազոտվել:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ քաղաքական ուժերին նշանային բնութագրիչով անդրադարձների տեսակարար կշիռը կազմել է հետազոտված բոլոր ալիքներում անդրադարձների հանրագումարի 3.5%-ը: Չնայած այն բանին, որ միմյանց նկատմամբ կուսակցությունների, ինչպես նաև հանրության քննադատությունն ու գովասանքը սովորաբար խտանում են քվեարկության օրվա մոտենալուն զուգընթաց, նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում այս ցուցանիշը նվազել է 2011թ. նոյեմբեր-դեկտեմբեր ժամանակաշրջանի (9.6%) եւ 2012թ. մարտի (3.8%) համեմատ: Դա վկայում է իրենց իսկ՝ հեռուստառադիտագրողների կողմից չեզոք լուսաբանման գերակշռման մասին:


Նշանային բնութագրիչով անդրադարձների ամենամեծ տեսակարար կշիռն արձանագրվել է «Կենտրոնում» (այս ալիքի անդրադարձների ընդհանուր թվի 7.1%), ամենափոքրը՝ «Արմնյուզում» (1.4%) եւ Յանրային ռադիոյում (1.5%):

Նրանց միջակայքում են տեղաբաշխվել «Ճանթը» (2.4%), Հ1-ը (3.4%), Հ2-ը (4.3%), «Արմենիան» (5.5%) եւ «Երկիր Մեդիան» (6%):

Դրա հետ մեկտեղ, նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում մի շարք հեռարձակվողների մոտ արձանագրվել է առանձին քաղաքական ուժերի նկատմամբ բենուային՝ վերաբերմունք: «Կենտրոնում» ԲՀԿ-ն արժանացել է 65 դրական եւ ոչ մի բացասական անդրադարձի, իսկ ՀՀԿ-ն ոչ մի դրական եւ 20 բացասական անդրադարձի: «Երկիր Մեդիայում» ՀՅԴ-ն՝ 29 դրական եւ ոչ մի բացասական, ԲՀԿ-ն՝ 23 դրական եւ 5 բացասական, իսկ ՀՀԿ-ն՝ ոչ մի դրական եւ 17 բացասական անդրադարձի: «Բենուայնության» ցուցանիշով հաջորդը, այս երկու ալիքներից զգալիորեն հետ մնալով, «Արմնյուզն» է՝ ՀՀԿ-ին 12 դրական անդրադարձ՝ 5 բացասականի դիմաց եւ ՀԱԿ-ին ոչ մի դրական անդրադարձ՝ 12 բացասականի դիմաց: Յենց «Կենտրոնի» ու «Երկիր Մեդիայի» հաշվին էլ ԲՀԿ-ն ու ՀՅԴ-ն հետազոտված բոլոր ալիքների դրական ու բացասական անդրադարձների առավել բարենպաստ հանրագումարյային հաշվեկշիռն ունեն՝ համապատասխանաբար 102-26 եւ 31-1, իսկ ՀՀԿ-ն, ի տարբերություն մշտադիտարկման նախորդ փոլտերի, բացասական հաշվեկշիռ՝ 43-64: Այստեղ հարկ է նշել, որ ՀՀԿ-ին ու ԲՀԿ-ին (ինչպես եւ ՕԵԿ-ին) 22-ական բացասական անդրադարձ վերաբերում էր ողջ կառավարող կոալիցիային: Ընտրություններին մասնակցած բոլոր կուսակցություններից/դաշինքից ամենաքիչ (1-23) բարենպաստ հաշվեկշիռն ունի ՀԱԿ-ը՝ գլխավորապես «Արմնյուզի» (0-12) եւ «Արմենիայի» հաշվին (0-7): Ընդմին, դժվար է նշել մի հեռարձակվող, որտեղ նշանային բնութագրիչով անդրադարձները հարաբերականորեն համաչափ լինեն բաշխված կուսակցությունների/դաշինքի միջեւ:

Որպես «բենուային» լրաբանման պատճառներից մեկը կարելի է համարել նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում քաղաքական ուժերի միջեւ փոխադարձ ըննադատական արտահայտությունների ակտիվացումը եւ կոնկրետ կուսակցությունների/դաշինքի ներկայացուցիչների կարծիքների, գնահատականների գերակշռումը: Մասնավորապես, ՀՀԿ-ին, ՀԱԿ-ին եւ ՕԵԿ-ին նշանային բնութագրիչով անդրադարձների բացասական հաշվեկշիռը որոշակի աստիճանով պայմանավորված է նրանց կողմից մի շարք դեպքերում բանավիճային հաղորդումներին մասնակցելու հրավերի մերժմամբ: Որպես դրա հետեւանք՝ առանձին ալիքների եթերում գերակշռել է նրանց մասին քաղաքական ընդդիմախոսների կարծիքը: Պատճառներից մյուսը նախընտրական միջոցառումների լրաբանման նկատմամբ հեռարձակվողների տարբեր մոտեցումներն են: Մի կուսակցության պարագայում լրագրողները բլից-հարցազրույցներ էին վերցնում այդ միջոցառումների մասնակիցներից, ինչը դրական բնույթ էր հաղորդում ամբողջ ռեպորտաժին, իսկ մեկ այլ կուսակցության պարագայում նման հարցումներ չէին անցկացվում: Մի դեպքում ռեպորտաժին հատուկ էին լինում բարձր տրամադրությունը եւ հիացական հռետորությունը (ընդ որում՝ երբեմն նյութի հեղինակների կողմից), մեկ այլ դեպքում պահպանվում էր չեղոք տոնը, երրորդ դեպքում կարող էր հեգնական երանգ նշանարվել: Ու թեեւ ամենելին էլ ոչ միշտ էր դա հիմք տալիս արձանագրելու նշանային բնութագրիչով անդրադարձ, այնուամենայնիվ՝ հեռարձակվողների մոտ բոլոր քաղաքական ուժերի նախընտրական միջոցառումների լրաբանման միասնական մոտեցման բացակայությունը հանգեցրեց որոշակի անհամաչափության:

**ԳՐԱՖԻԿ 3. Խորհրդարանական ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերին հետազոտված հեռարձակվողների նշանային բնութագրիչներով անդրադարձների հաշվեկշիռը\***



\*«Միավորված հայեր» կուսակցությանը, Յայատանի կոմունիստական կուսակցությանը եւ Յայատանի դեմոկրատական կուսակցությանը անդրադարձները հետազոտության բոլոր երեք փուլերում էլ չեղոր են եղել:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉԻ ՄԱՍ էր դարձել հետազոտման ենթարկված բոլոր ալիքների երեկոյան եթերում հեռարձակվող «հյուր ստուդիայում» ձեւաչափով հաղորդումների մասնակիցների արձանագրումը: Նախընտրական քարոզությանը նախորդած ժամանակաշրջանում հյուրերի ընտրությունը վկայում էր ընտրությունների նախաշեմին նախընտրական պայքարի նկատմամբ հեռարձակվողների մեծ մասի բավականին սահմանափակ հետաքրքրության մասին: Թերեւս, բացառություն էր միայն «Երկիր Մեդիան», որի բանավիճային հաղորդումներում պարբերաբար հայտնվում էին տարբեր կուսակցություններ ներկայացնող քաղաքական գործիչներ: Ծայրահեղ սահմանափակ է այս ձեւաչափից օգտվել՝ Հ1-ը՝ 2012թ. մարտին միայն 4 անգամ են նրա ստուդիաներում հյուրընկալվել քաղաքական կուսակցությունների ներկայացնությունները: Դրա փոխարեն հաճախակի հյուրընկալվել են մշակույթի եւ արվեստի գործիչներ: Նման մոտեցումը դժվար է հիմնավորված համարել, քանի որ երկիրը գտնվում էր ընտրությունների նախաշեմին, Հ1-ն էլ ընդհանուր թեմատիկ ուղղվածություն ունի, իսկ Յանրային հեռուստառադիոընկերության համակարգում կա հոգեւոր-մշակութային ուղղվածության մասնագիտացված ալիք՝ «Շողակաթը»:

Նախընտրական քարոզության ժամանակաշրջանում քաղաքական ուժերի ներկայացնությունների նկատմամբ հետաքրքրությունը էապես աճել է հետազոտված բոլոր ալիքներում, ինչն արտացոլվել է նաև «հյուր ստուդիայում» ձեւաչափով հաղորդումներում: Բացառություն է կազմել միայն Յանրային ռադիոն, որը չուներ քաղաքական գործիչների՝ որպես հյուրերի մասնակցություն ենթադրող

հաղորդումներ: Քաղաքական ուժերի առավել լայն ընդգրկում ապահովել են Հ1-ը, «Երկիր Մեդիան» եւ Հ2-ը, որոնց ստուդիաներում հյուրընկալվել են ընտրություններին մասնակցած բոլոր 9 կուսակցությունների/դաշինքի ներկայացուցիչները: Միայն այս ալիքների հաղորդումներին են հրավիրվել «Միավորված հայեր» կուսակցության ներկայացուցիչները: «Ճանթում» հյուրընկալվել են ամենաքիչ քանակությամբ քաղաքական ուժերի՝ 6-ի, ներկայացուցիչները:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ վկայում են այն մասին, որ, չնայած նախընտրական քարոզության ժամանակաշրջանում հեռարձակվողների ընդհանուր առմամբ բարեխիղճ աշխատանքին, դեռեւս բավականին հնարավորություններ կան քարոզարշավի առավել արհեստավարժ լուսաբանման համար: Կատարելագործման կարիք ունի նաև ընտրությունների լուսաբանումը կարգավորող ՀՀ օրենսդրությունը: Եվ ամենագլխավորը՝ ցածր մակարդակի վրա է մնում բովանդակալից ընտրարշավ վարելու համար ԶԼՄ-ների ընձեռած հնարավորություններն օգտագործելու քաղաքական ուժերի պատրաստակամությունը:

**ՅՅ 2012թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԱԽԱՃԵՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՇԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐԻ  
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
(2011թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 16 - ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15)**

ԺԱՄԱՆԱԿԱՆԱՏՎԱԾԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ էր նրանով, որ ըստ ավանդույթի Հայաստանում ոչ պաշտոնական նախընտրական քարոզարշավը զգալիորեն ավելի շուտ է մեկնարկում, քան քարոզության համար նախատեսված նախընտրական ամիսը: Եվ ԶԼՄ-ների, առաջին հերթին առավել զանգվածայինների՝ հեռուստաընկերությունների գործելակերպն այդ ժամանակահատվածում հիմնականում կանխորոշում է ընտրազանգվածի տրամադրությունները: Նմանատիպ հետազոտությունները թույլ են տալիս երեակելու ինչպես հայկական հեռուստառադիտերերի դերը քաղաքական գործնթացներում, այնպես էլ հեռարձակվող ԶԼՄ-ների գործունեության կարգավորման խնդիրները: Սույն դիտարկումը երեանի մամուլի ակումբին էապես օգնեց ավելի լավ նախապատրաստվելու ԶԼՄ-ների դերի հետազոտմանը նախընտրական քարոզության առավել ակտիվ՝ քվեարկության օրվան անմիջապես նախորդող փուլում:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆ ընդգրկում էր 6 համազգային հեռուստաալիք՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ալիք (Բ1), «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», Հայկական երկրորդ հեռուստաալիք (Բ2), «Ճանթ», 1 մայրաքաղաքային հեռուստաալիք՝ «Ճողակաթ» (ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ այն ընդգրկված է Հանրային հեռուստառադիտընկերության կառուցվածքում, հետեւաբար՝ հատուկ առաքելությամբ է օժտված), եւ Հայաստանի հանրային ռադիոն: Թվարկված հեռուստառադիտալիքներում հետազոտվել են երեկոյան ժամերին (**18.00-01.00**) հեռարձակվող լրատվական ծրագրերի հիմնական թողարկումները եւ հիմնական հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները:

Մշտադիտարկման առարկա են եղել այն նյութերը, որոնցում անդրադարձներ կային քաղաքական այն 14 կուսակցություններին ու շարժումներին, որոնք այս կամ այն ձեռով արտահայտել էին առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու իրենց մտադրությունը, կամ էլ ակտիվ դիրքորոշում են ունեցել ընթացիկ քաղաքական կյանքում: Արձանագրվել են նաև հետազոտվող ԶԼՄ-ների կողմից այդ կուսակցություններին/շարժումներին անդրադարձների նշանային բնութագրիները եւ նրանց հատկացված եթերաժամը:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԿ ԱՄՍՎԱ ընթացքում քաղաքական կուսակցություններին առավելս ուշադրություն է դարձրել «Կենտրոն» հեռուստաալիքը, որին բաժին է ընկել 8 ալիքներում հետազոտված բոլոր հաղորդումների եթերաժամանակի ավելի քան մեկ քառորդը: Այս ցուցանիշով նրան փոքր ինչ զիջում է «Երկիր Մեդիա» հեռուստաալիքը: Իսկ քաղաքական կուսակցություններին հատկացրած եթերաժամի ծավալով երրորդը՝ զգալիորեն հետ մնալով, Հանրային ռադիոն է, որն, ընդսմին, առաջատար է կուսակցություններին

անդրադառնալու հաճախականությամբ: Այս ցուցանիշով առաջատար լինելը՝ ընդհանուր լրաբանման ծավալի առումով հարաբերականորեն հետ մնալուն զուգահեռ, գլխավորապես բացատրվում է նրանով, որ հանրային ռադիոալիքի հետազոտված եթերը բաղկացած էր բացառապես լրատվական հաղորդագրություններից:

Հետազոտված ժամանակահատվածում «Շողակաթը» հավատարիմ էր մնում իր՝ որպես հոգեւոր-մշակութային հեռուստաալիքի ուղղվածությանը: Մշտադիտարկման մեջ ընդգրկված նրա հաղորդումներում ոչ մի անդրադարձ չկար քաղաքական կուսակցություններին/շարժումներին:

«Շողակաթը» եթե նկատի չունենանք, ապա ըստ դիտարկման արդյունքների՝ ընտրությունների նախօրեին ներքին քաղաքական գործընթացներին ամենաքիչ ուշադրությունը դարձրել են «Արմենիան» եւ «Ճանթը»՝ թե ընդհանուր եթերաժամանակի ցուցանիշներով եւ թե անդրադարձների հաճախականությամբ:

**ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԲՈԼՈՐ 8 ԱԼԻՔՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՈՎ** ամենաշատը ուշադրության են արժանացել հինգ խորհրդարանական կուսակցություններ՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), «Բարգաված Հայաստան» կուսակցությունը (ԲՀԿ), «Ժառանգություն» կուսակցությունը, Հայ Յեղափոխական դաշնակցությունը (ՅՅԴ), «Օրինաց Երկիր» կուսակցությունը (ՕԵԿ), ինչպես նաև Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ), ընդ որում՝ ՀՀԿ ակնհայտ առաջատարությամբ: Մշտադիտարկման առարկա դարձած մյուս քաղաքական ուժերն էապես հետ են մնում «մեծ վեցյակից» ինչպես եթերաժամանակի ծավալով, այնպես էլ անդրադարձների հաճախականությամբ: Հետ մնացողների խմբում է հայտնվել նաև Ժողովրդական կուսակցությունը (ԺԿ), որի առաջնորդը նաև հանդիսանում էր «ԱԼՄ» հեռուստաալիքի սեփականատերը (2011 թվականի հունվարի 21-ից «ԱԼՄ»-ն դադարեցրեց եթերը թվային ցանցում հեռարձակման լիցենզավորման մրցույթներից մեկի ժամանակ, որոնց արդյունքներն ամփոփվեցին 2010 թվականի դեկտեմբերին):

Տարբեր քաղաքական ուժերի, այդ թվում հետազոտված բոլոր ԶԼՄ-ների հանրագումարված ցուցանիշներով առաջատարների նկատմամբ հետաքրքրությունն էապես զանազանվում է տարբեր ալիքներում: Հետազոտված ժամանակահատվածում «մեծ վեցյակի» քաղաքական ուժերի նկատմամբ առավել հավասարակշռված ուշադրություն է բաշխվել **Յ1-ում** եւ **Յանրային ռադիոյի** հաղորդումներում, ընդհմին **Յ1-ը** փաստորեն լիովին անտեսել է բոլոր մյուս քաղաքական կուսակցությունները: Յանրային ռադիոյում կուսակցություններին արված անդրադարձների հանրագումարային հաճախականության հաշվառումով՝ «մեծ վեցյակից» դուրս գտնվող քաղաքական ուժերի նկատմամբ այս ԶԼՄ-ի ուշադրությունը կարելի է նաև որակել որպես նվազագույն: **Յ2-ը** բավականին հավասարակշիռ էիր եթերը բաշխել խորհրդարանական հինգ կուսակցությունների միջեւ, սակայն մյուս քաղաքական ուժերի՝ ներառյալ **ՅԱԿ-ի**, նկատմամբ կամ սահմանափակ հետաքրքրություն է ցուցաբերել, կամ էլ ընդհանրապես ուշադրության չի արժանացրել: Էլ ավելի «ընտրովի» է եղել **«Ճանթի»** մոտեցումը՝ այս հեռուստաալիքի հետազոտված հաղորդումներում հետաքրքրությունը կենտրոնացվել է երեք կուսակցությունների վրա՝ ՀՀԿ, ԲՀԿ եւ «Ժառանգություն»:

Քաղաքական ուժերի գործունեությունը լուսաբանած հետազոտման ենթակա յոթ հեռուստաալիքներից հինգում անդրադարձների հաճախականության առումով առաջատարը ՀՀԿ-ն է, ընդ որում Հ1-ում եւ «Արմենիայում» նրա առավելությունը ինչպես անդրադարձների հաճախականության առումով, այնպես էլ հատկացված եթերաժամանակի ծավալով էական էր: Հ2-ում եւ «Ճանթում» հանրապետականների հետ մրցակցել է ԲՀԿ-ն. Երկու հեռուստաալիքներում էլ փոքր ինչ զիշելով անդրադարձների հաճախականության առումով՝ այն գրեթե ՀՀԿ-ի չափ եթերաժամակալ է ստացել Հ2-ում ու թեեւ ոչ զգալի չափով, բայց, այնուամենայնիվ, այդ ցուցանիշով հանրապետականներից առաջ է անցել «Ճանթում»: **Հանրային ռադիոյում** ինչպես անդրադարձների հաճախականությամբ, այնպես էլ եթերաժամանակով ՀՀԿ-ին առավել մոտեցել է՝ պահպանելով, սակայն, պատշաճ հեռավորություն, ՀԱԿ-ը: Այս դեպքում եւս դա հիմնականում բացատրվում է հանրային ռադիոալիքի առանձնահատկությամբ, այն է՝ նրանով, որ այնտեղ բացակայում են հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները եւ դիտարկման առարկա է դարձել լրատվական ծրագիրը. ՀԱԿ-ը բավականին շատ օպերատիվ առիթներ է տվել իրադարձային լուսաբանման համար:

**«ԿԵՆՏՐՈՆՈՒՄ»** ուշադրության կենտրոնում է գտնվել ԲՀԿ-ն, իսկ «Երկիր Մեդիայում»՝ ՀՅԴ-ն: Այս փաստը, ինչպես եւ վերոնշյալ իրավիճակը՝ կապված ժողովրդական կուսակցության եւ փակված «ԱԼՄ» հեռուստաալիքի հետ, հավելորդ վկայում է տեղեկատվական դաշտում այն քաղաքական ուժերի առավելությունների մասին, որոնք անմիջականորեն առնչված են կոնկրետ հեռուստաալիքների: Նոյնիսկ իշխանական կառուցներում գերիշխող եւ հեռարձակողների վրա ազդեցության բազմաթիվ լժակներ ունեցող ՀՀԿ-ն չի կարող այդ քաղաքական ուժերի հետ մրցակցել համապատասխան ԶԼՄ-ներում ուշադրության արժանանալու հարցում: Ինչպես «Կենտրոնում», այնպես էլ «Երկիր Մեդիայում» ՀՀԿ-ն երկրորդ տեղում է հայտնվել՝ զգալիորեն հետ մնալով առաջատարներից: Իսկ երրորդ տեղը (անդրադարձների հաճախականությամբ) բաժին է ընկել «Ժառանգությանը», ենթադրաբար՝ ինչպես խորհրդարանի ներսում, այնպես էլ դրանից դուրս հրապարակային ակտիվության շնորհիվ:

**ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԱԼԻՔՆԵՐՈՒՄ ԱՐԿԱ ԲՈԼՈՐ ԱՆԴՐԱՄՐՁԵՐԻ ՇՈՒՐՋ 10%-ը** նշանային բնութագրիչով (դրական եւ բացասական) ակնարկ է այս կամ այն քաղաքական կուսակցության/շարժման մասին: Ենելով ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում անցկացված նմանատիպ հետազոտությունների փորձից՝ սույն ցուցանիշը կարելի է բնորոշել որպես ավանդաբար բարձր այն ժամանակահատվածի համար, որը նախորդում է նախընտրական քարոզությանը: Այսպիսով, ներքաղաքական գործընթացների արհեստավարժ եւ անաշառ լուսաբանման խնդիրը հրատապ է մնում հայաստանյան հեռարձակողների համար: Ընդսմին, դրական ակնարկով անդրադարձները հինգ անգամ շատ են եղել, քան բացասական երանգ ունեցածները (պատճառները վերլուծվում են ստորեւ):

Նշանային բնութագրիչների տեսանկյունից քաղաքական ուժերի առավել հավասարակաշռված (անաչառ) լուսաբանում եղել է **Հանրային ռադիոյում** (տվյալ ալիքում առկա անդրադարձների ընդհանուր թվի 1.3%-ն են կազմում

նշանային բնութագրիչով նյութերը): Նաեւ բավական հավասարակշռված էր լուսաբանումը «Երկիր Մեղիայում» (2.7%): 10-տոկոսանոցից ցածր ընդհանուր ցուցանիշ է արձանագրվել նաեւ 31-ում (7.3%): Իսկ նշանային բնութագրիչով անդրադարձների առավել բարձր տոկոս գրանցվել է «Ճանթում» (28.3%): Այնուհետեւ այդ սանդղակում գալիս են 32-ը (22.2%), «Արմենիան» (13.4%) եւ «Կենտրոն» (13.3%): Յետազոտված ալիքները հիմնականում անդրադարձել են ներքաղաքական կյանքի նույն իրադարձություններին, հետեւաբար որանց լուսաբանման բնույթը պայմանավորված էր ոչ թե իրավիճակով կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաների ընտրանիով, այլ ԶԼՄ-ի ցանկությամբ ու պատրաստակամությամբ՝ հետեւելու պրոֆեսիոնալ սկզբունքներին եւ, բնականաբար, (իսկ հայաստանյան հեռարձակվողների պարագայում՝ առաջին հերթին) սեփական խմբագրական քաղաքականությունն ինքնուրույն որոշելու իրավունքով:

Նշանային բնութագրիչով անդրադարձներ ամենաշատը «կուտակել» է ԲՀԿ-ն - 43 (կամ բոլոր ալիքներով այս կուսակցությանն արված անդրադարձների 25.6%-ը), որոնցից 42-ը դրական: ԲՀԿ-ի առավել հաճախակի դրական լուսաբանումը եղել է «Կենտրոնում» (23 անգամ կամ հեռուստաալիքի կողմից այս կուսակցության արված անդրադարձների ընդհանուր թվի 36.5%-ը): ՅՅԿ-ն հետազոտված բոլոր ալիքներում ունի 21 նշանային բնութագրիչով անդրադարձ (անդրադարձների ընդհանուր թվի 8.3% -ը), որոնցից 19-ը՝ դրական: Այս կուսակցությանը մյուսներից ավելի հաճախակի դրական անդրադարձել են 31-ը (7) եւ «Արմենիան» (6): ՕԵԿ-ն արժանացել է 13 դրական եւ ոչ մի բացասական անդրադարձի (բոլոր ալիքներում անդրադարձների ընդհանուր թվի 15.7%-ը). 8 անգամ՝ 32-ում եւ 5 անգամ՝ «Արմենիայում»: Այսպիսով, հետազոտվող ալիքներում իրականացված դիտարկման ընթացքում կուսակցությունների արձանագրված բոլոր 76 դրական անդրադարձներից 74-ը բաժին է ընկել իշխանական կոալիցիա կազմող այս երեք կուսակցություններին:

ԲՀԿ-ին դրական անդրադարձների գերակշռող մեծամասնությունը (ավելի քան 80%) առկա էր բարեգործական ակցիաների եւ այս կուսակցության միջոցառումների մասին նյութերում: ՕԵԿ-ին արված գրեթե բոլոր դրական անդրադարձները եղել են Յայաստանի տարբեր մարզերում ընտրողների հետ այս կուսակցության հանդիպումների մասին ռեպորտաժներում: Երկու դեպքում էլ համանման կամ իրարից քիչ տարբերվող նյութերը հայտնվել են մի քանի հեռուստաալիքների եթերում: Սույն հանգամանքը թույլ է տալիս ենթադրելու, որ նշալ սյուժեներն իրենցից ներկայացնում էին ոչ թե իրադարձությունների խմբագրական լուսաբանում, այլ թաքնված քաղաքական քարոզչություն, որն իրականացվում էր պայմաններով, որոնք հակասում են ՅՅ օրենսդրությանը: Ընդ որում, այսպիսի հնարավորությունները մատչելի են գլխավորապես իշխանամետ կուսակցությունների համար: Նման երեւութեանը ստիպում են եւս մեկ անգամ հարց բարձրացնել քաղաքական կուսակցությունների համար կանխապես անհավասար պայմանների մասին, նաեւ այն բանի անհրաժեշտության մասին, որ հարկ է հստակեցնել օրենսդրական-նորմատիվ կարգավորումը եւ մշտադիտարկում անցկացնելոչ միայն նախընտրական քարոզչության կարծ ժամանակահատվածում,

այլ նաեւ այդ ժամանակահատվածին նախորդող ամիսների ոչ պաշտոնական ընտրարշավի ժամանակ:

Ընդդիմադիր կուսակցություններից 7 նշանային բնութագրիչ ունեցող անդրադարձ է բաժին ընկել՝ Ժառանգությանը։ Այդ թվում 6-ը բացասական, բոլորն էլ կապված արդար ընտրություններ անցկացնելու մասին՝ Ժառանգության՝ առաջնորդ Ռաֆֆի Յովհաննիսյանի կոչին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի արձագանքի հետ։ 5 նշանային բնութագրիչ ունեցող անդրադարձ կար ՅԱԿ-ին, եւ բոլորն էլ բացասական (3-ը՝ «Կենտրոնում» եւ 2-ը՝ Հանրային ռադիոյում)։ ՀՅԴ-ն ունի մեկ դրական եւ ոչ մի բացասական անդրադարձ։ Ուշագրավ է, որ «Երկիր Մեդիայի» հետազոտման ենթարկված հաղորդումներում ՀՅԴ-ին հատկացված մեծածավալ եթերաժամանակի պարագայում չի արձանագրվել այդ կուսակցության ոչ մի դրական անդրադարձ։

ՄշՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՌԱՋԱԿԱՑՈՒՑԻՉ մաս է դարձել հետազոտման ենթարկված բոլոր ալիքների եթերոյան եթերում հեռարձակվող՝ հյուր ստուդիայում՝ ձեւաչափով հաղորդումների մասնակիցների արձանագրումը։ Ընդհանուր առմամբ, հյուրերի ընտրությունը վկայում էր ընտրությունների նախօրեին նախընտրական պայքարի նկատմամբ հեռարձակվողների բավականին սահմանափակ հետաքրքրության մասին։ Թերեւա, բացառություն էր միայն «Երկիր Մեդիան», որի բանավիճային հաղորդումներում պարերաբար հայտնվում էին քաղաքական տարբեր ուժեր ներկայացնող քաղաքական գործիչներ։ Նվազ չափով ներքաղաքական հարցերին ուշադրություն են դարձրել «Կենտրոնը», որ նույնպես լսարանին է ներկայացրել զանազան դիրքորոշումներ, եւ Հ1-ը։ Վերջինիս մոտ հյուրերի ընտրության հարցում կարելի է արձանագրել որոշակի անհամամասնություն։ թեեւ ամսվա ընթացքում իրավիրված երկու քաղաքական գործիչներից մեկը ներկայացնուած էր ընդդիմությունը (ՅԱԿ-ը), հաղորդմանը նրանցից բացի նաեւ չորս գործող նախարարների մասնակցությունը որոշակի առավելություն էր ստեղծուած հօգուտ իշխանությունների։

«Հյուր ստուդիայում» ձեւաչափով հաղորդումները մյուս ալիքներում, ներառյալ Հանրային ռադիոն, կամ ընդհանրապես ուշադրություն չեն դարձրել նախընտրական ներքաղաքական իրավիճակին կամ էլ այդ հետաքրքրությունը նվազագույնն էր։

## ՅՅ 2012թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՃԵՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՇԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2012թ. ՄԱՐՏԻ 1-31)

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆ ընդգրկում էր 7 համազգային հեռուստաալիք՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ալիք (**Բ1**), «Շողակաթ» (նույնպես ընդգրկված է Հանրային հեռուստառադիոընկերության համակարգում), «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», Հայկական Երկրորդ հեռուստաալիք (**Բ2**), «Շանթ», մեկ մայրաքաղաքային հեռուստաալիք՝ «Արմենյուզ» (Հայաստանում միակ հեռարձակվողը, որի լիցենզիան ենթադրում է լրատվական ուղղվածություն), ինչպես նաև Հայաստանի հանրային ռադիոն: Թվարկված հեռուստառադիոալիքներում հետազոտվել են Երեկոյան ժամերին (**18.00-01.00**) հեռարձակվող լրատվական ծրագրերի հիմնական թողարկումները եւ հիմնական հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները:

Մշտադիտարկման առարկա են դարձել այն նյութերը, որոնցում առկա էին անդրադարձներ այն 14 քաղաքական կուսակցություններին եւ շարժումներին, որոնք այս կամ այն ձեւով մտադրություն էին հայտնել առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու, կամ էլ ակտիվ դիրքորոշում են ունեցել ընթացիկ քաղաքական կյանքում: Արձանագրվել են նաև հետազոտվող ԶԼՄ-ների կողմից այդ կուսակցություններին/շարժումներին անդրադարձների նշանային բնութագրիչները եւ նրանց հատկացված եթերաժամանակը:

2012թ. ՄԱՐՏԻ ԱՄԲՈՂՋ ԸՆԹԱՑՔՈՒՄ նկատվել են նշանային բնութագրիչնով նյութերի տեսակարար կշռի նվազման, ինչպես նաև ընդհանուր առմամբ ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների նկատմամբ հեռարձակվողների հետաքրքրության ածի միտումներ: Այս միտումները կարեի է դրական համարել Հայաստանի քաղաքացիների նախընտրական իրազեկման եւ քաղաքական ուժերին ընտրարշավին մասնակցելու հնարավորություն ընձեռնելու առումով: Միեւնույն ժամանակ, թաքնված քաղաքական գովազդի (քարոզչության) հատկանիշներ պարունակող նյութերի ցուցադրման պահպանվող պրակտիկան վկայում է այն մասին, որ հեռուստաալիքների կողմից ընտրությունների լուսաբանմանը բնորոշ ոչ բոլոր բացասական երեւոյթներն են հաղթահարված:

ՍՈՒՅՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՐԱՎԱԾՈՒՄՆ ներքաղաքական կյանքին առավել հետաքրքրություն՝ ինչպես կուսակցություններին անդրադարձների հաճախականությամբ, այնպես էլ նրանց հատկացրած եթերաժամանակի ծավալով, դրսեւորել է «Կենտրոն» հեռուստաալիքը: Քաղաքական ուժերին անդրադարձների հաճախականությամբ «Կենտրոնին» հաջորդում է Հանրային ռադիոն, իսկ եթերաժամանակի ծավալով՝ **Բ2-ը**: Հեռարձակվողների կողմից նախընտրական գործընթացների նկատմամբ ուշադրության աստիճանը բնութագրող այս երկու ցուցանիշներով համապատասխանաբար Երրորդ տեղերում են հայտնվել «Արմենյուզը» եւ «Երկիր Մեդիան»: Վերոնշյալ հինգ ալիքները 2012թ. մարտի արդյունքներով

փաստորեն իրենց վրա են վերցրել ընտրությունների նախաշեմին քաղաքական կուսակցությունների գործոներության մասին լսարանին իրազեկելու «հիմնական բեռը»: Ընդունին, **Հանրային ռադիոն եւ «Արմնյուզը»** շեշտը դրելեն իրադարձային լուսաբանման վրա, իսկ թվարկված հեռարձակվողներից մյուս երեքը ձգտել են իրադարձությունների, փաստերի մասին իրազեկումը համատեղել բանավիճային հաղորդումների հետ:

Նախընտրական թեմաներին մյուսներից քիչ եւ ամենափոքր ծավալով անդրադարձելէ «**Ճանթը»»: Դրա հետ մեկտեղ, մարտիվերջին 11 օրերին՝ իտարբերություն մարտի առաջին երկու տասնօրյակների, սույն ալիքը էապես մեծացրել է ուշադրությունը քաղաքական գործընթացներին: Չնայած դրան, այն զգալիորեն հետ է մնացել կուսակցություններին անդրադարձների հաճախականությամբ նախավերջին տեղում հայտնված **Ք1-ից**: Կուսակցություններին հատկացրած եթերաժամանակի ծավալով նախավերջինը հանդիսացող **«Արմենիայից»** «**Ճանթի**» հետ մնալը նվազ էական էր: Հարկ է նշել, որ անդրադարձների հաճախականությամբ **«Արմենիային»**, հավանաբար, արժե առաջատարների, այլ ոչ թե ամենաքիչ ակտիվ հեռարձակվողների շարքը դասել: Այս հեռարձակվողի մոտ մարտի արդյունքներով, ինչպես եւ Հանրային ռադիոյի ու **«Արմնյուզի»** պարագայում, գերակշռում էր իրադարձային լուսաբանումը:**

Մարտին **«Ճողակաթը»** հավատարիմ է մնացել իր՝ որպես հոգեւոր-մշակութային հեռուստաալիքի ուղղվածությանը: Մշտադիտարկման մեջ ընդգրկված նրա հաղորդումներում ոչ մի անդրադարձ չկար քաղաքական կուսակցություններին/շարժումներին: Հետեւաբար, սույն հաշվետվությունում ներկայացված վերլուծությունն ու համեմատությունները չեն վերաբերում այս հեռարձակվողին:

**ՀԵՏԱԶՈՏՎԱԾ 8 ԱԼԻՔՆԵՐԻ** արդյունքների հանրագումարով՝ 2012թ. մարտին թե անդրադարձների հաճախականությամբ եւ թե եթերաժամանակով առավել ուշադրության արժանացած կուսակցությունների եռյակը բավականին կանխատեսելի էր՝ Հայաստանի հանրապետական կուսակցություն (**ՀՀԿ**), «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (**ԲՀԿ**) եւ Հայ Յեղափոխական Դաշնակցություն (**ՅՅԴ**): Յենց այս երեք կուսակցությունների համար էր ապահովված որոշակի հեռարձակվողների եթերի երաշխավորված լայն մատչելիություն: Բայց նրանք էլ ընդգծված առաջատար ունեն՝ **ՀՀԿ-ն**, որը երկու ցուցանիշներով էլ մյուսներից առաջ է անցել **Ք1-ում**, **«Արմենիայում»**, **«Արմնյուզում»**, **Ք2-ում** եւ **Հանրային ռադիոյում**, իսկ անդրադարձների հաճախականությամբ՝ նաև **«Ճանթում»**: Յետազոտված մյուս երկու ալիքներում (**«Երկիր Մերիա»** եւ **«Կենտրոն»**) **ՀՀԿ-ն** երկրորդն էր եւ էապես քիչ ուշադրության է արժանացել, քան համապատասխանաբար **ՅՅԴ-ն** ու **ԲՀԿ-ն**, բայց միեւնույն ժամանակ նկատելիորեն առաջ է անցել նախընտրական մրցավազքի իր մյուս մրցակիցներից: **«Ճանթում»** ամենամեծ եթերաժամանակ ստացել է «Ժառանգությունը»:

Մշտադիտարկման սույն հաշվետվության ներառած ժամանակահատվածի գլխավոր առանձնահատկությունը միասնական ցուցակով ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած «Ժառանգություն» եւ **«Ազատ դեմոկրատներ»** կուսակցությունների լուսաբանումն էր: Յետազոտված հեռարձակվողների կողմից **«Ազատ դեմոկրատներին»** անդրադարձների մոտավորապես 75%-ը եւ

«Ժառանգությանը» անդրադարձների շուրջ 35%-ը արձանագրվել են միեւնույն նյութերում: Եթե միավորելու լինենք երկու կուսակցություններին անդրադարձները եւ եթերաժամանակը, ապա նրանց այլանսը հետազոտված բոլոր ալիքների ցուցանիշների հանրագումարով երկրորդ տեղում կհայտնվի ՀՀԿ-ից հետո: Ավելին, անդրադարձների հաճախականությամբ այն առաջկանցնի բոլորից, այդ թվում՝ ՀՀԿ-ից, Հ1-ում եւ «Արմենիայում», իսկ եթերաժամանակի ծավալով՝ «Արմնյուզում», եւ, ինչպես հետեւում է վերոնշյալից, «Շանթում»: Երկու կուսակցություններին այս ուշադրությունը, հավանաբար, հարկ է բացատրել հենց միասնական ցուցակով նրանց հանդես գալու փաստով եւ վերջինիս առնչությամբ ծագած հարցերով, մեկնաբանություններով:

Հեռարձակվող ԶԼՄ-ների 2012թ. մարտին իրականացված մշտադիտարկումը հիմք տվեց խոսելու արդեն ոչ թե «մեծ վեցյակի» (5 խորհրդարանական կուսակցություններ՝ ՀՀԿ, ԲՀԿ, «Օրինաց երկիր» կուսակցություն, ՀՅԴ եւ «Ժառանգություն», ինչպես նաև Հայ ազգային կոնգրես), այլ՝ «մեծ յոթնյակի» մասին. ի հավելումն թվարկյալ վեց քաղաքական ուժերի՝ մարտին պարբերաբար հետազոտված բոլոր հեռարձակվողների ուշադրության առարկա են դարձել «Ազատ դեմոկրատները»: Ճիշտ է՝ նկատի ունենալով «Ժառանգության» հետ վերջիններիս միասնական ցուցակը, ընտրություններին մասնակցող կուսակցությունների գրանցումից հետո այս այլանսը մշտադիտարկման համապատկերում դիտարկվելու է որպես մեկ քաղաքական ուժ:

ԿԸ իրենց ցուցակները ներկայացրած մյուս կուսակցությունները մարտին ավելի քիչ ուշադրության են արժանացել: Այդուհանդերձ, չի կարելի ասել, որ Հայաստանի կոմոնիստական կուսակցությունը (ՀԿԿ) եւ Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը (ՀԴԿ) անտեսվել են հեռարձակվողների կողմից. նրանց անդրադարձները եւ հատկացված եթերաժամանակը միանգամայն համադրելի են առաջատարների հետ: Առանձնակի դեպք է «Միավորված հայեր» կուսակցությունը (ՄՀԿ): Նրա լուսաբանումը հետազոտման առարկա չէր մշտադիտարկման սկզբնական շրջաններում այն պատճառով, որ նախկինում այն հրապարակային ակտիվություն չէր դրսեւորել եւ ակնհայտ ձեռվ չէր հայտարարել համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու մտադրության մասին: Այս կուսակցության ցուցանիշներն արձանագրվում են 2012թ. մարտի 21-ից սկսած, ինչը դժվար թե շատ աղճատի ընդհանուր պատկերը, քանի որ նախքան ԿԸ փաստաթղթեր հանձնելը հեռարձակվողների կողմից նրան անդրադարձները նվազագույն էին: Եթե մարտի առաջին երկու տասնօրյակներում ՄՀԿ-ն լուսաբանվեր նույն հաճախականությամբ, ինչ մարտի 21-ից ի վեր, ապա նրա ցուցանիշները կլինեին մոտավորապես այնպիսին, ինչպիսին ՀԴԿ-ինը:

Առանձին կուսակցությունների նկատմամբ հետազոտված ալիքների հետաքրքրությունը բնորոշող ցուցանիշների ամենաշատ հակասականությունը 2012թ. մարտին արձանագրվել է ԲՀԿ-ի պարագայում: «Կենտրոնում» ԲՀԿ-ն անվիճելի առաջատար է, Հ2-ում նույնպես նրա դիրքերը բավականին ամուր են: Բայց Հ1-ում (անդրադարձների հաճախականությամբ 6-րդ եւ եթերաժամանակով 9-րդ տեղ), «Արմենիայում» (համապատասխանաբար՝ 5-րդ եւ 8-րդ), «Արմնյուզում» (4-րդ եւ 10-րդ) եւ «Շանթում» (5-րդ եւ 7-րդ) նրա ցուցանիշները գրեթե ամենավատն են «մեծ յոթնյակի» մյուս կուսակցությունների համեմատ:

Իսկ առանձին ալիքում կուսակցությունների նկատմամբ ցուցաբերած հետաքրքրության ամենամեծ տարրերությունն արձանագրվել է «Երկիր Մեդիայում», որտեղ ուշադրության ցուցիչներով ՀՅԴ-ն՝ որպես առաջատար, եւ ՀՀԿ-ն՝ որպես երկրորդը, էական առավելություն են ստացել քաղաքական մյուս ուժերի նկատմամբ: Մյուս հեռարձակվողներից դժվար է մարտին դրսեւորած հավասարակշիռ մոտեցման առումով առանձնացնել որեւէ մեկին: Հատկացրած եթերաժամանակի ծավալով կուսակցությունների ցուցանիշները միգուցե «Ճանթում» են առավել մոտ իրար, բայց, նկատի ունենալով այն հանգամանքը, որ այս հեռուստաալիքն ընդհանուր առմամբ պասիվ է լուսաբանել նախընտրական գործընթացները, դժվար է խոսել հավասարակշիռ մոտեցման մասին:

2012թ. ՄԱՐՏԻՆ բավականին ցածր էր կուսակցություններին նշանային բնութագրիչով (դրական եւ բացասական) անդրադարձների տեսակարար կշիռը: Այն կազմել է հետազոտված բոլոր ալիքներում անդրադարձների հանրագումարի 3.8%-ը: Ըստ որում, 2011թ. նոյեմբերի 16-ից մինչեւ դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում՝ մշտադիտարկման նախնական փուլում, այս ցուցանիշը 9.6% էր, 2012թ. մարտի առաջին տասնօրյակում՝ 7.2%, իսկ երկրորդ տասնօրյակում՝ 4.2%: Այս ամենը խոսում է հեռարձակվողների կողմից տարրեր քաղաքական ուժերի նկատմամբ անկողմնակալության առումով դրական դիմամիկայի մասին: Առանձին վերցրած ալիքներից նշանային բնութագրիչով անդրադարձների ամենաքիչ բաժին արձանագրվել է Հանրային ռադիոյում՝ 1.5%, նրան հետեւում են «Ճանթը»՝ 2% եւ «Երկիր Մեդիան»՝ 2.1%: Ամենամեծ բաժինը «Կենտրոնում» էր՝ 7.8%, թեեւ այս ալիքում եւս մարտի ընթացքում նշանային բնութագրիչների ցուցանիշը նվազման միտում ուներ: Նրա եւ առաջատարների երյակի միջակայքում են հայտնվել «Արմենիոլը»՝ 2.8%, «Արմենիան»՝ 3.3%, Հ1-ը՝ 4.4%, Հ2-ը՝ 4.5%:

**«Կենտրոնում»** նշանային բնութագրիչներով անդրադարձների հարաբերականորեն մեծ տեսակարար կշիռը հիմնականում պայմանավորված է ԲՀԿ-ի դրական լուսաբանմամբ: Ի դեպ, մյուս բոլոր դեպքերում եւս, երբ հեռարձակվողները նշանային բնութագրիչների համեմատաբար մեծ բաժին էին ունենում, դա բացատրվում էր, թեեւ «Կենտրոնից» նվազ չափով, նշանային բնութագրիչներով անդրադարձների ընդգծված դրական հաշվեկշռով. Հ2-ում ԲՀԿ-ի առումով, Հ1-ում, «Արմենիայում» եւ «Արմենիոլում»՝ ՀՀԿ-ի առումով: Կուսակցությունների ընդգծված դրական հաշվեկշիռն առավել հաճախ համընկնում է (օրինակ՝ «Կենտրոնում», Հ1-ում, «Արմենիայում» եւ «Արմենիոլում») նրանց ինտենսիվ լուսաբանման հետ: Նման օրինաչափություն չի նկատվում «Երկիր Մեդիայում», որտեղ ՀՅԴ-ի հաճախակի եւ ծավալուն լուսաբանումը զուգակցվում էր նյութերում այդ կուսակցության նկատմամբ անկողմնակալ վերաբերմունքով՝ մարտի ամբողջ ընթացքում ընդամենը մեկ դրական անդրադարձ: Սույն հեռուստաալիքի առնչությամբ նույնահանգում կարելի է անել նաեւ մշտադիտարկման նախնական փուլում՝ 2011թ. նոյեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում:

Հետազոտված ալիքների արդյունքների հանրագումարով կառավարող կոալիցիայի կուսակցություններն ընդդիմախոսներին նկատմամբ զգալի առավելություն են ստացել նշանային բնութագրիչներով անդրադարձների հարաբերակցության առումով.

ԲՀԿ՝ 31 դրական եւ միայն մեկ բացասական, ՀՀԿ՝ համապատասխանաբար 27 եւ 7, ՕԵԿ՝ 5 եւ 1: Յամեմատության համար՝ ՀԱԿ-ը ունի 11 բացասական եւ ոչ մի դրական անդրադարձ: Այս հանգամանքը, չնայած մի շարք այլ ցուցիչներով 2012թ. մարտի դրական դինամիկային, թույլ չի տալիս խոսելու հայկական եթերում, առաջին հերթին՝ հեռուստատեսային, քաղաքական տարբեր ուժերի հավասարակշիռ լուսաբանման մասին:

Մարտին ԲՀԿ-ի բարեգործական ակցիաներին, սոցիալական ուղղվածության նախաձեռնություններին եւ նախընտրական հանդիպումներին նվիրված 9 նյութեր պարունակում էին թաքնված քաղաքական գովազդի անուղղակի հատկանիշներ: Նույն կամ գրեթե նույն սյումեները (ինչպես տեսաշարով, այնպես էլ տեքստով) եթեր են տրվել մեկից ավելի ալիքում՝ հիմնականում «Կենտրոնում» եւ Հ2-ում, ինչով էլ մասամբ պայմանավորված էր նշալ հեռարձակվողների եթերում այս կուսակցությանը դրական անդրադարձների մեծ մասը: ԲՀԿ-ի մասին նման նյութեր հազվադեպ ցուցադրվել են նաև «Երկիր Մեդիայի» եթերում: Հիշեցնենք, որ նման նյութերը, որոնք բավականին հաճախ էին նկատվում նախնական մշտադիտարկման ժամանակահատվածում (2011թ. նոյեմբերի 16 - դեկտեմբերի 15), միայն մեկ անգամ են արձանագրվել 2012թ. մարտի առաջին տասնօրյակում, բայց շատացել են երկրորդ տասնօրյակից:

ՈՐՊԵՍ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ արձանագրվել են՝ հյուր ստուդիայում ձեւաչափի բոլոր հաղորդումների մասնակիցները (հիշեցնենք, որ մարտին անդրադարձների ու եթերաժամանակի հաշվարկները կատարվել են միայն լրատվական ծրագրերի հիմնական թողարկումներում եւ հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումներում): Լսարանին քաղաքական ուժերին ծանոթացնելու առումով նման ձեւաչափից առավել համաչափ եւ արդյունավետ օգտվել է Հ2-ը: Մարտին նրա «Զորրորդ ստուդիայի» հյուրերն են եղել գրանցման համար ԿԸ ցուցակներ հանձնած 7 քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ: Ընդհանուր առմամբ մեկ ամսվա ընթացքում նրանք հրավիրվել են 19 անգամ: Նման ձեւաչափից չափազանց սահմանափակ է օգտվել Հ1-ը՝ միայն 4 անգամ են նրա ստուդիաներում հյուրընկալվել քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները: Դրա փոխարեն հաճախակի հյուրընկալվել են մշակույթի եւ արվեստի գործիչներ: Նման մոտեցումը դժվար է հիմնավորված համարել, քանի որ երկիրը գտնվում է ընտրությունների նախաշեմին, Հ1-ն էլ ընդհանուր թեմատիկ ուղղվածություն ունի, իսկ Յանրային հեռուստառադիմունքներության համակարգում կա հոգեւոր-մշակութային ուղղվածության մասնագիտացված ալիք՝ «Շողակաթը»: Յարկ է նշել, որ չորս անգամ էլ Հ1-ի հյուրերն են եղել կառավարության ներկայացուցիչները:

Երկու կուսակցություն՝ ՀՅԴ-ն ու «Ժառանգությունը» («Ազատ դեմոկրատների» հետ միասին), մեծ առավելություն են ստացել «Երկիր Մեդիայի» համապատասխան հաղորդումներում: Մարտին նրանց ներկայացուցիչները մասնակցել են համապատասխանաբար 10 եւ 9 հաղորդումներում: Ընդհանրապես, այս հեռուստալիքը մյուսներից հաճախ է ցուցադրել քաղաքական գործիչների մասնակցությամբ հաղորդումներ: Մարտի ընթացքում նրա հյուրերն են եղել

գրանցման համար ԿԸՀ ցուցակներ հանձնած բոլոր 9 կուսակցությունների ներկայացուցիչները: Ճիշտ է՝ նրանցից վեցը ներկայացվել են Երեանի մամուլի ակումբի նախաձեռնությամբ թողարկվող «Երկրի դեմքը» հաղորդման շնորհիվ:

ԿԸՀ ցուցակներ հանձնած 9 կուսակցություններից 7-ը հյուրընկալվել են «Կենտրոնի» և «Արմնյուզի» ստուդիաներում: Մյուս ալիքներն այս առումով թույլ հետաքրքրություն են ցուցաբերել նախընտրական գործընթացների նկատմամբ: «Ժանթը» քաղաքական գործիչներ է հրավիրել 5, «Արմենիան»՝ 4, Յանրային ռադիոն՝ 1 կուսակցությունից:

Հետազոտված ալիքներում առավել հաճախ հյուրընկալվել են ՀՅԴ-ի և «Ժառանգության» ներկայացուցիչները, ինչը կարող է վկայել ինչպես այդ կուսակցությունների առանձին ներկայացուցիչների նկատմամբ («Ժառանգության» պարագայում՝ նաեւ նրա ցուցակում «Ազատ դեմոկրատների» ներառման փաստի նկատմամբ) հետաքրքրության, այնպես էլ, հավանաբար՝ առաջին հերթին, մյուս քաղաքական ուժերի համեմատությամբ ՀՅԴ-ի ու «Ժառանգության» անդամների՝ եթերում արտահայտվելու ավելի մեծ պատրաստակամությամբ:

# **2013թ. ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

## ՀՀ 2013թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ նախագահի 2013թ. փետրվարի 18-ի ընտրություններին մասնակցել են 7 թեկնածուներ:

2013թ. փետրվարի 25-ին ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է ՀՀ նախագահի ընտրությունների քվեարկության վերջնական արդյունքները: Նախագահի թեկնածուներին տրված ձայները բաշխվել են հետեւյալ կերպ (տոկոսներով):

	<b>ՀՀ նախագահի թեկնածուներ</b>	<b>%</b>
<b>1.</b>	Սերժ Սարգսյան (Յայաստանի հանրապետական կուսակցությունից)	<b>58.64</b>
<b>2.</b>	Րաֆֆի Շովիաննիսյան (ինքնառաջադրում)	<b>36.74</b>
<b>3.</b>	Յրանտ Բագրատյան («Ազատություն» կուսակցությունից)	<b>2.15</b>
<b>4.</b>	Պարույր Յայրիկյան (ինքնառաջադրում)	<b>1.23</b>
<b>5.</b>	Անդրիաս Ղուկասյան (ինքնառաջադրում)	<b>0.57</b>
<b>6.</b>	Վարդան Մեդրակյան (ինքնառաջադրում)	<b>0.42</b>
<b>7.</b>	Արման Մելիքյան (ինքնառաջադրում)	<b>0.24</b>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՀՅ 2013թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՃՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՃՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվության մեջ ամփոփված են մշտադիտարկման արդյունքները նախընտրական քարոզության ժամանակաշրջանում (2013թ. հունվարի 21 - փետրվարի 16), ինչպես նաև դրան նախորդած ամիսներին՝ 2012թ. հոկտեմբերի 1-դեկտեմբերի 15 եւ 2013թ. հունվարի 14-20:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ են հանդիսացել 6 համազգային հեռուստաալիքներ՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ալիք (Դ1), «Արմենիա», «Երևան Մեդիա», «Կենտրոն», Հայկական երկրորդ հեռուստաալիք (Դ2), «Շանթ», 1 մայրաքաղաքային հեռուստաալիք՝ «Արմենյուզ», ինչպես նաև Հայաստանի հանրային ռադիոն եւ «Արմենիոն FM 107» ռադիոալիքը:

Հեռարձակվող ԶԼՄ-ներում նախագահական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման առաջին (նախընտրական քարոզության նախաշեմ) եւ ԵՐԵՎԱՆ (նախընտրական քարոզության ժամանակաշրջան) փուլերում թվարկված հեռուստառադիտալիքներում հետազոտվել են երեկոյան եթերի (**18.00-01.00**) բոլոր հաղորդումները, **բացառությամբ** քաղաքական, առեւտրային եւ սոցիալական գովազդի: Երկրորդ փուլում (նախընտրական քարոզությանը նախորդած վերջին շաբաթ) հետազոտվել են միայն լրատվական/լրատվական-վերլուծական ծրագրերի հիմնական թողարկումները եւ հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները:

ՀՅ 2013թ. ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ՈՂՋ ԸՆՏՐԱՐԾԱԿԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՎՐԱ ուժեղ ազդեցություն է ունեցել ոչ սովորական քաղաքական կոնյունկտուրան: Անորոշ մտադրությունների իրավիճակում, երբ ընդհուած մինչեւ թեկնածուների պաշտոնական առաջադրումը այդպես էլ չէին պարզվում մի ամբողջ շարք առաջատար կուսակցությունների ու քաղաքական գործիչների պլանները, հետազոտված ԶԼՄ-ները ստիպված էին այս կամ այն չափով իրենց ուշադրության տեսադաշտում պահել հնարավոր թեկնածուների մեջ խումբ: **2012թ. հոկտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում** որպես այդպիսին հիշատակվել է ՀՅ 41 քաղաքացի: Ընդսմին, հետագայում գրանցված թեկնածուներից՝ լրատվական/լրատվական-վերլուծական ծրագրերի հիշատակումների հաճախականությամբ ՀՅ նախագահ Սերժ Սարգսյանը ցուցակում առաջինն էր, «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Շաֆֆի Հովհաննիսյանը՝ չորրորդն էր, էպոսագետ Վարդան Սեդրակյանը՝ յոթերորդը, «Ազգային ինքնորոշում» միավորման առաջնորդ Պարույր Հայրիկյանը՝ ութերորդը, «Ազատություն» կուսակցության առաջնորդ Հրանտ Բագրատյանը՝ տասնիններորդը, Լեռնային Ղարաբաղի նախկին արտգործնախարար Արման Մելիքյանը՝ քանիինգերորդը եւ «Ազգային համաձայնություն» կուսակցության առաջնորդ Արամ Հարությունյանը քանութերորդ տեղում էր: Իսկ ութերորդ թեկնածուն՝ «Ռադիո Հայ»-ի տնօրեն Անդրիաս Ղուկասյանը, մինչեւ դեկտեմբերի 15-ն ընդհանրապես հանդես չէր եկել որպես հնարավոր թեկնածու: Ուշագրավ է,

որ ուսումնասիրության երկրորդ կեսում (2012թ. նոյեմբերի 21 - դեկտեմբերի 15) անդրադարձների հաճախականությամբ հնարավոր մյուս բոլոր թեկնածուներից առաջ էր անցել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանը, ում անունն ի վերջո չի հայտնվել պետության դեկավարի պաշտոնին հավակնող թեկնածուների ցուցակում:

Ազգային ժողովում ներգրավված վեց կուսակցություններից միայն երկուսն ունեին սեփական թեկնածու, ընդ որում՝ նրանցից մեկն ինքնառաջադրվողի կարգավիճակով էր հանդես եկել: Խորհրդարանական վեց քաղաքական ուժերից երեքը, այդ թվում թվաքանակով երկրորդը, երրորդն ու չորրորդը հանդիսացող խմբակցությունները ոչ միայն սեփական թեկնածու չեն առաջադրել, այլև առաջադրվածներից ոչ մեկին չեն աջակցել: Ընդ որում, ընտրություններին մասնակցելու հարցում նրանց դիրքորոշումը փոքրիշատե պարզ է դարձել մինչեւ քվեարկությունն ընկած 55-67 օրվա միջակայքում: Նախագահի թեկնածու գրանցված ուժ հոգուց հինգը կամ չեն ներկայացրել Հայաստանում գործող որեւէ կուսակցություն, կամ էլ նրանց կուսակցությունները վերջին տարիներին ակնառու դեր չեն խաղացել երկրի քաղաքական կյանքում: Թեկնածուների այսպիսի կազմը, բնականաբար, չի նպաստել պետական բարձրագույն պաշտոնին հավակնողների «դիմապատկերների»՝ ժամանակին ու բովանդակային լուսաբանմանը: Մշտադիտարկման առաջին փուլում հնարավոր թեկնածուների լուսաբանման մոտ 60%-ը բաժին է ընկել նրանց, ովքեր այդպես էլ չեն առաջադրվել: Ավելին՝ ԶԼՄ-ները սեւեռված էին ոչ այնքան ենթադրյալ ծրագրերի ու դիրքորոշումների, որքան՝ առաջատար քաղաքական դերակատարների՝ իրենց առաջադրման մասին որոշման սպասումների վրա: Ընտրություններին՝ լսարանին, Հայաստանի քաղաքացիներին նախապատրաստելու հարցում 2012թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ԶԼՄ-ների դերը սահմանափակ էր:

Ընդհանուր առմամբ, հեռարձակվող ԶԼՄ-ները խորականություն կամ բացահայտ կողմնակալ վերաբերմունք չեն դրսեւորել ՀՀ նախագահի թեկնածուների նկատմամբ: Հիմնականում հավասար պայմաններ են ապահովվել ընտրազանգվածին թեկնածուների եւ նրանց սատարող քաղաքական ուժերի ծրագրերին ու հայացըներին ծանոթացնելու համար: Ինչ խոսք, ոչ բոլոր թեկնածուների մասին են ընտրողները համարժեք տեղեկություններ ստացել, սակայն դա հետեւանք էր նախագահական աթոռի հավակնորդների՝ ընտրարշավ վարելու հնարավորությունների եւ ցանկության: Եթե 2012թ. խորհրդարանական ընտրություններին հավասարակիր լուսաբանում ապահովվել է միայն պաշտոնական նախընտրական քարոզության ժամանակ, ապա այս անգամ նման գնահատական կարելի է տալ նաև դրան նախորդած ժամանակաշրջանին: Հնարավոր թեկնածուների նկատմամբ «ցաքուցրիվ» ուշադրությունը հաշվի առնելով՝ առավել հատկանշական էր կուսակցությունների լուսաբանումը: Այսպես, 2012թ. հոկտեմբեր-դեկտեմբերին հայաստանյան հեռարձակվողների ուշադրության կենտրոնում են հայտնվել իինգ քաղաքական ուժեր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (ԲՀԿ), Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ), Հայ Յեղափոխական Դաշնակցությունը (ՀՅԴ) եւ «Ժառանգություն» կուսակցությունը: ՀՀ Ազգային ժողովում ներկայացված վեցերորդ կուսակցությունը՝ «Օրինաց Երկիրը», զգալիորեն քիչ ուշադրության է արժանացել, քան՝ առաջատար «հնգյակը»: Այս

տարբերությունը կարելի է բացատրել նախընտրական գործելակերպում այդ կուսակցություններից «ինտրիգների» ակնկալման աստիճանով:

Դրա հետ մեկտեղ, տեղեկատվական եւ տեղեկատվական-վերլուծական հաղորդումներում գործադիր իշխանության մարմինների ներկայացուցիչներին խոսքի հաճախակի տրամադրումը (6,337 անգամ՝ միասին վերցրած բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներին 4,874 դեպքերի դիմաց) խոսում է 2012թ. հոկտեմբեր-դեկտեմբերին կառավարող կոալիցիայի ունեցած որոշակի տեղեկատվական առավելության մասին:


**Պաշտոնական նախընտրական քարոզարշավի** ժամանակ ԶԼՄ-ները, բնականաբար, ուշադրությունը սեւեռել են անհատապես թեկնածուների վրա: Եվ ամենաշատ ուշադրության արժանացել է «Ազգային ինքնորոշում» միավորման առաջնորդ Պարույր Յայրիկյանը, ինչն առաջին հերթին բացատրվում է հունվարի 31-ին նրա մահակործի հետ կապված իրադարձությունների լուսաբանման ինտենսիվությամբ, ինչպես նաև դրան հաջորդած սպասողական վիճակով՝ արդյոք նա կպահանջի հետաձգել ընտրությունները: Յետազոտված 9 ԶԼՄ-ների հատկացրած եթերաժամանակի ծավալով իրար մոտ էին Յայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսյանի, «Ժառանգություն» եւ «Ազատություն» կուսակցությունների առաջնորդներ՝ համապատասխանաբար Ռաֆֆի Յովհաննիսյանի եւ Յրանտ Բագրատյանի ցուցանիշները: Ճիշտ է, անդրադարձների հաճախականությամբ Սերժ Սարգսյանն էապես առաջ է անցել Ռաֆֆի Յովհաննիսյանից եւ Յրանտ Բագրատյանից եւ այդ ցուցանիշով մերձեցել է Պարույր Յայրիկյանին:

Թեկնածուների մեջ առանձնացել են երկու քայլակներ: Առաջատարների քայլակում են՝ ինչպես նրանց անդրադարձների հաճախականությամբ, այնպես էլ եթերաժամանակի ծավալով, վերոհիշյալ քաղաքական գործիչները, իսկ երկրորդ քայլակում հայտնվել են Ռադիո «Յայ»-ի տնօրեն Անդրիաս Ղուկասյանը, որպես էպոսագետ ներկայացող Վարդան Սեղրակյանը, Լեռնային Ղարաբաղի նախկին արտգործնախարար Արման Մելիքյանը եւ «Ազգային համաձայնություն» կուսակցության առաջնորդ Արամ Յարությունյանը: Ամենացածր ցուցանիշները, բնականաբար, վերջինս մոտ էին. Արամ Յարությունյանը հանել է իր թեկնածությունը, եւ, հետեւաբար, փետրվարի 8-ից ի վեր մշտադիտարկման խումբը չի արձանագրել նրա լուսաբանման տվյալները: Ընդսմին, չի կարելի ասել, թե թեկնածուների երկրորդ քայլակը զրկված է եղել ԶԼՄ-ների ուշադրությունից՝ եթերում նրանց հայտնվելու հաճախականությունը եւ տեսլությունը արտացոլող թվերը թույլ են տալիս ենթադրել, որ նույնիսկ սեփական նախընտրական միջոցառումների սահմանափակ քանակի պարագայում նրանք հնարավորություն են ստացել իրենց գաղափարները հասցնել ընտրողներին: Ասվածը վերաբերում է նաև Անդրիաս Ղուկասյանին, ով նախընտրական քարոզության առաջին իսկ օրվանից հացադոլ էր հայտարարել եւ նախընտրական հատուկ միջոցառումներ չի անցկացրել, ինչը նրան չի խանգարել դառնալու հինգերորդը լուսաբանման հաճախականությամբ եւ ծավալով:

Միենայն ժամանակ, «չորս հիմնական թեկնածուներ» հասկացության ընդգծումը մի շարք հեռարձակվողների եթերում եւ դրանից ելնելով՝ «հյուր ստուդիայում» ձեւաչափի որոշ հաղորդումների պլանավորումը հանդիսանում է նախընտրական

քարոզչության լրաբանման ֆորմալ պահանջներից շեղում: Ինչ խոսք, այսպիսի քաղաքականությունը կարելի է բացատրել լսարանի հետաքրքրություններին համապատասխանելով՝ հեռարձակվողների ձգտմամբ, բայց, մյուս կողմից էլ, այն կարող է որակվել որպես ընտրողների վրա ներազդում:

#### **ԳՐԱՖԻԿ 1. Նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում ՀՀ նախագահի թեկնածուների նկատմամբ ուշադրության բաշխումը (Եթերաժամանակի ծավալով եւ անդրադարձների հաճախականությամբ)**



ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻՆ անդրադարձների նշանային բնութագրիչների հաշվեկշիռը վկայում է այն մասին, որ հանրության վերաբերմունքն առավել բենուային էր (համենայն դեպք՝ այնպես, ինչպես այն արտացոլվել է հետազոտված ԶԼՄ-ների եթերում) Սերժ Սարգսյանի նկատմամբ (83 դրական եւ 53 բացասական անդրադարձ): **Նախընտրական քարոզչության ողջ ընթացքում** գործող նախագահին նշանային բնութագրիչով անդրադարձները ընդհանուր առմամբ կազմել են հետազոտված ԶԼՄ-ներում նրան անդրադարձների ընդհանուր թվի 6.7%-ը: Սա բոլոր թեկնածուների մեջ վերաբերմունքի ամենահինտենսիվ դրսետրումն է (Ղավաքի Հովհաննիսյանի մոտ՝ 2.3%, Վարդան Սեդրակյանի մոտ՝ 1.6%, Հրանտ Բագրատյանի մոտ՝ 1.4%): Ընդհանուր առմամբ, դրական անդրադարձները գերակշռում են բացասականին (127-ը՝ 84-ի դիմաց):

Սերժ Սարգսյանի մոտ անդրադարձների բացասական հաշվեկշիռ է արձանագրվել «Երկիր Մեդիա» եւ «Կենտրոն» հեռուստաալիքներում, իսկ հետազոտված մյուս ԶԼՄ-ներում նրա հաշվեկշիռը դրական է, բացառությամբ 32-ի (մեկական

բացասական եւ դրական անդրադարձ): Շաֆֆի Հովհաննիսյանը, ով նախընտրական քարոզության գործնականում ողջ ընթացքում հիշատակվել է կամ չեղոք կամ էլ դրական համատեքստում, բացասական անդրադարձներ ստացել է ընտրարշավի վերջին օրերին, երբ Վարդան Սեդրակյանը նրան մեղադրել է մասոնների հետ կապերի մեջ, որոնք էլ հենց, ըստ Սեդրակյանի, կազմակերպել են Պարույր Ջայրիկյանի մահափորձը: Իր հերթին նաեւ Վարդան Սեդրակյանն իր գրեթե բոլոր բացասական անդրադարձները վաստակեց հենց այդ վարկածի առաջ քաշումից հետո: Նա միակը եղավ բոլոր թեկնածուներից, ում նկատմամբ անդրադարձների նշանային բնութագրիչները բացառապես բացասական էին: Պարույր Ջայրիկյանի (3) եւ Անդրիաս Ղուկասյանի (6) պարագայում դրանք բացառապես դրական էին: Եվ բոլոր թեկնածուներից միայն Արման Մելիքյանն է լուսաբանվել բացառապես չեղոք համատեքստում:

Ընդհանուր առմամբ, Հայաստանում պահպանվում է ընտրություններում մրցակցող քաղաքական գործիչների ու կուսակցությունների նշանային բնութագրիչներով լուսաբանման տեսակարար կշռի նվազման դիմամիկան: Եթե Ազգային ժողովի 2012թ. ընտրությունների ժամանակ այն կազմել է հետազոտված բոլոր ալիքներում անդրադարձների հանրագումարի 3.5%-ը (ինչը էական նվազում էր նախորդ բոլոր համապետական ընտրարշավների համեմատությամբ), ապա այս անգամ՝ 2.2%-ը:

Ուշագրավ է գործող նախագահի լուսաբանումը: **Նախընտրական քարոզությանը նախորդած ժամանակաշրջանում** ԶԼՄ-ները բավական ինտենսիվ են անդրադարձել նրա գործունեությանը ոչ թե որպես թեկնածուի, այլ որպես պաշտոնատար անձի: Այսպես, նախընտրական քարոզությանը նախորդած վերջին շաբաթում (հունվարի 14-20) ՀՀ նախագահի կարգավիճակում Սերժ Սարգսյանի լուսաբանումը կազմել է հետազոտված 9 ալիքների կողմից նրան հատկացված միագումար ամբողջ եթերաժամանակի 65.6%-ը (կամ գրեթե երկու երրորդը): Ընդհանուր այս ցուցանիշը կազմել է 93.4%, Հ1-ում՝ 85.3%: Արդյունքում Սերժ Սարգսյանն էական տեղեկատվական առավելություն է ստացել մյուս բոլոր մրցակիցների նկատմամբ, որոնց գործունեությունը թեկնածուի կարգավիճակից դուրս չի լուսաբանվել, չհաշված Շաֆֆի Հովհաննիսյանի 30 վայրկյանը: Սերժ Սարգսյանի՝ որպես թեկնածուի լուսաբանման նկատմամբ նրա՝ որպես նախագահի լուսաբանման գերակայությունն արձանագրվել է հետազոտված 9 ԶԼՄ-ներից 8-ում: Այդ շաբաթում միակ բացառությունը «**Արմռադիոն**» էր, որի՝ Սերժ Սարգսյանին նվիրված եթերում միայն 5.4%-ն է կազմել նրա լուսաբանումը որպես նախագահի:

Սակայն հետազոտված ԶԼՄ-ներում գործող նախագահի լուսաբանումը արմատապես փոխվել է **նախընտրական քարոզարշավը սկսելուն պես**: Որպես նախագահ Սերժ Սարգսյանի հայտնվելը հունվարի 21-ից մինչեւ փետրվարի 16-ը արդեն կազմել է 8.7%, չափավոր սահմաններում մնալով հետազոտված բոլոր ալիքներում: Ընդ որում, ընտրությունների օրվա մոտենալուն պես գործող նախագահի՝ նրա պաշտոնական կարգավիճակում լուսաբանումը գնալով նվազ ակտիվ էր դաշնում: Սույն փաստը վկայում է այն մասին, որ, ի տարբերություն նախորդ բոլոր ընտրությունների, որոշակի ուշադրություն է դարձվում այն չգրված կանոնին, ըստ որի առաջադրված պաշտոնատար անձը պետք է կրծատի նախընտրական քարոզության հետ կապ չունեցող առիթներով հանրությանը

ներկայանալու դեպքերը, իսկ ԶԼՄ-ները պետք է ավելի հակիրծ լուսաբանեն նման դեպքերը:

Դրանով հանդերձ, նախընտրական քարոզությանն անմիջապես նախորդած ժամանակահատվածի եւ արագընթաց նախընտրական քարոզության միջեւ զգալի տարբերությունը հերթական անգամ ապացուցում է ոչ թե քարոզարշավային 4 շաբաթների, այլ ավելի տեևական ժամանակահատվածի կանոնակարգման եւ դիտարկման անհրաժեշտությունը: Հակառակ պարագայում դժվար է խոսել թեկնածուների համար տեղեկատվական հավասար հնարավորությունների մասին:

## **ԳՐԱՖԻԿ 2. ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻԵՏԱԳՈՒԹՎԱԾ ԻԵՌԱՐԾԱԿՎՈՂՆԵՐԻ ՆՉԱՆԱՋԻՆ ԲՆՈԼԹԱԳՐԻՀՆԵՐՈՎ ԱՆԴՐԱԴԱՐԾՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ**




- Հրանտ Բագրատյան
- Պարույր Հայրիկյան
- Ռաֆֆի Հովհաննիսյան
- Անդրիաս Ղուկասյան
- Արման Մելիքյան
- Սերժ Սարգսյան
- Վարդան Մելիքյան

ԱՌԱՎԵԼ ՄԵԾ ՈՒԾԱԴՐՈՒԹՅՈՒՆ նախընտրական քարոզության ժամանակահատվում նախագահական մրցավագրին հատկացրել են «Արմնյուզ» հեռուստաընկերությունը եւ «Արմռադիոն», որոնց, զգալիորեն հետ մնալով, հաջորդում են քաղաքական կյանքի լուսաբանման գործում ավանդաբար առաջատար հանդիսացող «Երկիր Մեդիան» եւ «Կենտրոնը»: Այն, որ վերջիններս էապես հետ են մնացել «նոր առաջատարներից», կարող է վկայել, մասնավորապես, ներկայիս ընտրությունների նկատմամբ այդ հեռարձակվող ԶԼՄ-ների սեփականատերերի հետաքրքրության նվազման մասին՝ ի տարբերություն, ասենք, 2012թ. խորհրդարանական ընտրությունների, երբ երկու հեռուստաալիքներն էլ առանձնակի ակտիվությամբ էին աչքի ընկնում: Այս վերջին հանգամանքն իր հերթին վկայում է հայաստանյան հեռարձակման ոլորտի ընդհանուր հիմնախնդրի մասին՝ քաղաքական գործընթացները լուսաբանելիս հեռուստաընկերությունների համար առաջին հերթին կողմնորոշիչ են հանդիսանում իրենց սեփականատերերի շահագրգուվածությունը, այլ ոչ լսարանի պահանջները:

Հետազոտված մյուս հեռարձակվող ԶԼՄ-ները մոտավորապես համանման ակտիվություն են դրսելորել նախընտրական գործընթացների լրաբանման ընթացքում: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հետազոտված 7 հեռուստալիքներից 6-ը (բացառությամբ «Արմնյուզի») հեռարձակման միատեսակ լիցենզիա ունեն, նախընտրական գործընթացների նկատմամբ ուշադրությունը բնորոշող քանակական ցուցանիշների տարբերությունը կրկին վկայում է Հայաստանի հեռարձակման ոլորտի կարգավորմանն առնչվող խնդիրների մասին:

## ԳՐԱՖԻԿ 3. Նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում ընտրարշավի նկատմամբ հետազոտված հեռարձակվողների ուշադրության աստիճանը (Եթերաժամանակի ծավալով)



«ՀՅՈՒՐ ՍՏՈՒԴԻԱՅՈՒՄ» բանավիճային հաղորդումների մասնակիցների ցանկի վերլուծությունը վկայում էնախընտրական վեճերի, մտքերի բախման (ինչպես իրենց՝ թեկնածուների, այնպես էլ նրանց կողմնակիցների միջեւ) ծայրահեղ պակասի մասին: Սույն հիմնախնդիրը հատկապես ընդգծված է Երեակվել քաղաքական անորոշության համատեքստում, որը պահպանվել է մինչեւ թեկնածուների գրանցումը: Հունվարի կեսերից ուշադրությունը կենտրոնացնելով գրանցված ութ թեկնածուների լուսաբանման վրա, հեռարձակվողները որոշ չափով փոխհատուցել են այն անորոշությունն ու «ցաքուցրիվ» ուշադրությունը, որոնք հետեւանք էին 2012թ. հոկտեմբեր-դեկտեմբերին նախագահական աթոռի հնարավոր հավակնորների մեծ թվի: Սակայն նախագահական աթոռի հավակնորների նախընտրական ծրագրերի նկատմամբ տարբեր ուղղվածության հաղորդումների նվազագույն ուշադրությունը (բացառությամբ Հրանտ Բագրատյանի՝ ոչ մի թեկնածու շեշտադրում չի արել իր կոնկրետ ծրագրային դրույթների վրա) սահմանափակել է ՀՀ քաղաքացիների իրազեկ եւ գիտակից ընտրության հնարավորությունը: Ըստ էության, քարոզչական հոլովակներում, նախընտրական հանրահավաքներում

Եւ մամուկի ասովիսներում, նոյնիսկ հեռուստառադիոհարցազրույցներում թեկնածուների արտահայտած մտքերն անընդհատ կրկնվել են:

Հնարավոր է, հենց բանավեճերի բացակայությունն էլ շարունակում է մնալ Հայաստանի հեռարձակվող ՇԼՍ-ների կողմից նախընտրական արշավի լուսաբանման գլխավոր խնդիրը, որը հատկապես սուր կերպով երեակվեց ներկայիս նախագահական ընտրությունների նախօրեին ստեղծված յուրօրինակ քաղաքական կոնյունկտուրայի պայմաններում:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՇԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՀՅ 2013թ. ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՃՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՃՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2012թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1 - ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15)

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ են հանդիսացել համազգային վեց հեռուստաալիք՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության Առաջին ալիք (Դ1), «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», Հայկական երկրորդ հեռուստաալիք (Դ2), «Ճանթ», մայրաքաղաքային մեկ հեռուստաալիք՝ «Արմենիա» (Հայաստանում միակ հեռարձակվողը, որի լիցենզիան ենթադրում է լրատվական ուղղվածություն), ինչպես նաև Հայաստանի հանրային ռադիոն եւ «Արմենադիր ՓՄ 107» ռադիոալիքը:

Հեռարձակվող ԶԼՄ-ներում նախագահական ընտրությունների լրաբանման մշտադիտարկման առաջին փուլում թվարկված հեռուստառադիոալիքներում հետազոտվել են երեկոյան եթերի (**18.00-01.00**) բոլոր հաղորդումները, **բացառությամբ** քաղաքական, առեւտրային եւ սոցիալական գովազդի: Ընդսմին, տեղեկատվական/ տեղեկատվական-վերլուծական հաղորդումներում արձանագրվել են **գործադիր իշխանությանը եւ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին խոսքի տրամադրման** բոլոր դեպքերը, բանավիճային հաղորդումներում («հյուր ստուդիայում» ձեւաչափով) արձանագրվել են այդ հաղորդումների բոլոր հյուրերը, եւ բոլոր հաղորդումներում **էլ** արձանագրվել են **նախագահի հնարավոր թեկնածուների** հիշատակումները (նշելով այդ թեկնածուների նկատմամբ **վերաբերմունքը՝** նրանց հնարավոր առաջադրման համապատկերում):

Նախընտրական քարոզությանը նախորդած ժամանակահատվածում հեռարձակվող ԶԼՄ-ների կողմից քաղաքական կուսակցությունների եւ նախագահի հնարավոր թեկնածուների գործունեության լրաբանման մշտադիտարկման անցկացումը պայմանավորված է նրանով, որ Հայաստանում ոչ պաշտոնական նախընտրական քարոզարշավը, որպես կանոն, զգալիորեն ավելի շուտ է մեկնարկում, քան քվեարկությանը նախորդող՝ քարոզության համար նախատեսված մեկ ամիսը: Եվ ԶԼՄ-ների, առաջին հերթին առավել զանգվածայինների՝ հեռուստաալիքների գործելակերպն այդ ժամանակահատվածում հիմնականում կանխորշում է ընտրազանգվածի տրամադրությունները: Մինչեւնախընտրական քարոզությանը նախորդող ամիսներին ԶԼՄ-ների գործունեությունը ոչ մի կերպ չի կանոնակարգվում ընտրական օրենսդրությամբ եւ թիվ է արժանանում միջազգային դիտորդների ուշադրությանը: Նմանատիպ հետազոտությունները թույլ են տալիս ավելի լավ երեակել հայկական հեռուստառադիոեթերի դերը քաղաքական գործնթացներում, ինչպես նաև՝ հեռարձակվող ԶԼՄ-ների գործունեության կարգավորման հիմնախնդիրները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ թույլ է տալիս եզրակացնել, որ ընդհանուր առմամբ Հայաստանի ԶԼՄ-ները քաղաքական ուժերի կամ ՀՀ նախագահի հնարավոր թեկնածուների նկատմամբ խտրականություն եւ բացահայտ կողմնակալ վերաբերմունք չեն դրսեւորել: Միեւնույն ժամանակ, չի կարելի ասել, որ նախագահի թեկնածուների առաջադրման նախաշեմին նրանք հայաստանյան ընտրողին պատշաճ կերպով օգնել են կողմնորոշվել: Եվ սույն հանգամանքի պատճառ է դարձել ոչ այնքան իրենց՝ հեռարձակվողների աշխատանքը, որքան՝ նախագահական ընտրությունների նախօրեին ստեղծված յուրօրինակ ներքաղաքական իրավիճակը:

Ազգային ժողովում ներգրավված վեց կուսակցություններից միայն երկուան ունեն սեփական թեկնածու, ընդ որում՝ նրանցից մեկն ինքնառաջադրվողի կարգավիճակով է հանդես գալիս: Խորհրդարանական վեց քաղաքական ուժերից երեքը, այդ թվում թվաքանակով երկրորդը, երրորդն ու չորրորդը հանդիսացող խմբակցությունները ոչ միայն սեփական թեկնածու չունեն, այլև առաջադրվածներից ոչ մեկին չեն աջակցել: Ընդ որում, ընտրություններին մասնակցելու հարցում նրանց դիրքորոշումը փոքրիշատե պարզ է դարձել մինչեւ քվեարկությունն ընկած 55-67 օրվա միջակայքում: Նախագահի թեկնածու գրանցված ութը հոգուց հինգը կամ չեն ներկայացնում Հայաստանում գործող որեւէ կուսակցություն, կամ էլ նրանց կուսակցությունները վերջին տարիներին ակնառու դեր չեն խաղացել երկրի քաղաքական կյանքում: Թեկնածուների այսպիսի կազմը, բնականաբար, չի նպաստել պետական բարձրագույն պաշտոնին հավակնողների «դիմապատկերների»՝ ժամանակին ու բովանդակային լուսաբանմանը: Մանավանդ որ ԶԼՄ-ները սեւերված էին ոչ այնքան ենթադրյալ ծրագրերի ու դիրքորոշումների, որքան՝ առաջատար քաղաքական դերակատարների՝ իրենց առաջադրման մասին որոշման սպասումների վրա:


ԱՆՈՐՈՇ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՅՍ ՎԻՃԱԿՈՒՄ՝ ուսումնասիրված ԶԼՄ-ները ստիպված էին այս կամ այն չափով իրենց ուշադրության տեսադաշտում պահել հնարավոր թեկնածուների մեծ խումբ: Հոկտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում որպես այդպիսին հիշատակվել է ՀՀ 41 քաղաքացի: Ընդսմին, հետագայում գրանցված թեկնածուներից՝ տեղեկատվական/ տեղեկատվական-վերլուծական հաղորդումներում հիշատակումների հաճախականությամբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ցուցակում առաջինն է, «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Շաֆֆի Հովհաննիսյանը չորրորդն է, էպոսագետ Վարդան Սեղրակյանը՝ յոթերորդը, «Ազգային ինքնորոշում» միավորման առաջնորդ Պարույր Հայրիկյանը՝ ութերորդը, «Ազատություն» կուսակցության առաջնորդ Յրանտ Բագրատյանը՝ տասնիններորդը, Լեռնային Ղարաբաղի նախկին արտգործնախարար Արման Մելիքյանը՝ քանի հինգերորդը, եւ «Ազգային համաձայնություն» կուսակցության առաջնորդ Արամ Յարությունյանը քանութերորդ տեղում է: Իսկ ութերորդ թեկնածուն՝ «Ռադիո Հայ»-ի տնօրեն Անդրիաս Ղուկասյանը, մինչեւ դեկտեմբերի 15-ն ընդհանրապես հանդես չի եկել որպես հնարավոր թեկնածու: Ուշագրավ է, որ ուսումնասիրության երկրորդ կեսում (նոյեմբերի 21 - դեկտեմբերի 15) եթերում անդրադարձի հաճախակիության առումով հնարավոր բոլոր թեկնածուներից առաջ է անցել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանը, ում անունն ի վերջո չի հայտնվել պետության դեկավարի պաշտոնին հավակնող թեկնածուների ցուցակում:

Հնարավոր թեկնածուների՝ լրատվական եթերում բոլոր հիշատակումների 43%-ը բաժին է ընկել այն ութ թեկնածուներին, ովքեր ի վերջո կմասնակցեն նախագահական աթոռի համար պայքարին: Ընդ որում, հետազոտված ժամանակահատվածի երկրորդ կեսում (նոյեմբերի 21 - դեկտեմբերի 15) այդ ցուցանիշն ավելի ցածր է՝ 38.6%, թեև տրամաբանական կլիներ ակնկալել, որ ընտրությունների մոտենալու համընթաց՝ իրավիճակը պետք է որ ավելի հստակ դառնար:

Մոտավորապես համանման պատկեր էնաեւտեղեկատվական ուտեղեկատվական-վերլուծական հաղորդումներում կուսակցություններին խոսքի տրամադրման առումով: Գրանցման պահի դրությամբ՝ թեկնածուի առաջադրման հարցում արդեն իսկ կողմնորոշված կուսակցությունների ներկայացուցիչները եթերում երկուսում անգամ քիչ են հանդես եկել (41.1%), քան այն կուսակցությունները, որոնք չեն աջակցում որեւէ թեկնածուի:


Այլ կերպ ասած՝ հեռարձակվողների կողմից հնարավոր թեկնածուներին հատկացված ուշադրության մեջ մասը բաժին է ընկել նրանց, ովքեր հետագայում չեն առաջադրվել: Ինչ-որ չափով դա կարելի է բացատրել այն կուսակցությունների ու քաղաքական գործիչների նկատմամբ ԶԼՍ-ների առանձնակի հետաքրքրությամբ, որոնք այդպես էլ չեն կարողանում կողմնորոշվել ընտրությունների մասնակցության հարցում, սակայն, այսպես թե այնպես, ձեւավորված իրողությունների արդյունքում, ընտրություններին լսարանին, Քայաստանի քաղաքացիներին նախապատրաստելու հարցում 2012թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ԶԼՍ-ների դերը սահմանափակ էր:

## ԳՐԱՖԻԿ 1. ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՉԵՄԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻՆ ԽՈՍՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ\*



\*Գրաֆիկի աջ մասում ներկայացված են այն քաղաքական ուժերը, որոնք հետագայում չեն աջակցել նախագահի որեւէ թեկնածուի, իսկ ձախ մասում՝ այն քաղաքական ուժերը, որոնք հետագայում աջակցել են այս կամ այն թեկնածուին:

## ԳՐԱՖԻԿ 2. Քաղաքական գործիչների՝ որպես նախագահի հնարավոր թեկնածուների հիշատակումներ\*



\* Գրաֆիկի աջ մասում ներկայացված են այն քաղաքական գործիչները, ովքեր հետագայում չեն առաջադրվել նախագահի թեկնածու, իսկ ձախ մասում՝ այն քաղաքական գործիչները, ովքեր հետագայում առաջադրվել են նախագահի թեկնածու: Սույն փուլում Անդրիաս Ղուկասյանը չի հիշատակվել որպես հավանական թեկնածու:

ԱՄԵՆԱՄԵԾ ՈՒԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ քաղաքական ուժերի ու հնարավոր թեկնածուների նկատմամբ՝ ուսումնասիրված ժամանակահատվածում դրսեւորել է «Արմենյուզ» հեռուստաալիքը, որին հաջորդում են Հայաստանի հանրային ռադիոն, «Արմռադիոն», «Երկիր Մեդիան» ու «Կենտրոնը»: Ամենարիշը՝ «Ճանթ» եւ «Արմենիա» հեռուստաալիքները: Հ2-ը եւ Հ1-ը զբաղեցրել են հետազոտված ԶԼՄ-ների քաղաքական ակտիվությանը աղյուսակի միջին մասը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հետազոտված 7 հեռուստաալիքներից 6-ը (բացառությամբ «Արմենյուզի») հեռարձակման միատեսակ լիցենզիա ունեն, նախընտրական գործընթացների նկատմամբ ուշադրությանը բնորոշող քանակական ցուցանիշների տարբերությունը («Երկիր Մեդիայի» ու «Ճանթի» միջեւ՝ ավելի քան տասն անգամ) կրկին վկայում է Հայաստանի հեռարձակման ոլորտի կարգավորմանն առնչվող խնդիրների մասին:

Հայաստանյան հեռարձակվող ԶԼՄ-ների ուշադրության կենտրոնում են հայտնվել հինգ քաղաքական ուժեր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (ԲՀԿ), Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ), Հայ Յեղափոխական Դաշնակցությունը (ՀՅԴ) եւ «Ժառանգություն» կուսակցությունը: ՀՅ Ազգային ժողովում ներկայացված վեցերորդ կուսակցությունը՝ «Օրինաց Երկիրը», զգալիորեն քիչ ուշադրության է արժանացել, քան` առաջատար «հնգակը»: Խորիդարանական կուսակցությունների լուսաբանման այս տարբերությունը կարելի է բացատրել նախընտրական գործելակերպում նրանցից խնտրիգների ակնկալման աստիճանով:

Առաջատար «հնգյակի» կուսակցությունների նկատմամբ ուշադրության բաշխումը կարելի է բնորոշել որպես հարաբերականորեն հավասարաչափ: Դրա հետ մեկտեղ, տեղեկատվական եւ տեղեկատվական-վերլուծական հաղորդումներում գործադիր իշխանության մարմինների ներկայացուցիչներին խոսքի հաճախակի տրամադրումը (6,337 անգամ՝ միասին վերցրած բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներին 4,874 անգամ խոսքի տրամադրման դիմաց) խոսում է ընտրությունների նախաշեմին՝ կառավարող կուսակցիայի ունեցած որոշակի տեղեկատվական առավելության մասին:

Յետազոտման ողջ ժամանակահատվածում՝ հնարավոր թեկնածուներից առավել հաճախ հիշատակվել է ՀՀ գործող նախագահ Սերժ Սարգսյանը: Ընդ որում, նա առաջատար էր ինչպես տեղեկատվական ու տեղեկատվական-վերլուծական ծրագրերում (565 հիշատակում), այնպես էլ բանավիճային (42) եւ այլ (23) հաղորդումներում: Յիշատակումների թվի հանրագումարով նրան հաջորդում է «Բարգավաճ Յայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Շառուկյանը (համապատասխանաբար՝ 436, 32 եւ 5): Այնուհետեւ «Ժառանգության» առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսյանն է (284, 32 եւ 14): ՀՀ առաջին նախագահ Լեյն Տեր-Պետրոսյանը Րաֆֆի Յովհաննիսյանից ավելի շատ է հիշատակվել տեղեկատվական ու տեղեկատվական-վերլուծական հաղորդումներում (288 անգամ), բայց նրան «զիշել» է բանավիճային (17) եւ այլ (9) հաղորդումներում: Նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը նշյալ ուղղվածության հաղորդումներում հիշատակվել է համապատասխանաբար 162, 13 եւ 2 անգամ: ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը՝ 136 անգամ տեղեկատվական, 4 անգամ՝ բանավիճային եւ ոչ մի անգամ՝ այլ ուղղվածության հաղորդումներում: Ընդ որում, վերջին երկուսի, հատկապես Վարդան Օսկանյանի հիշատակումների հաճախակիությունն աստիճանաբար նվազել է ուսումնասիրության երկրորդ կեսում (նոյեմբերի 21 - դեկտեմբերի 15): Դա կարելի է բացատրել Գագիկ Շառուկյանի՝ որպես ԲՀԿ-ից հնարավոր թեկնածուի վրա ուշադրության բեւեռմամբ եւ այդ կուսակցության մյուս հնարավոր հովանավորյալների նկատմամբ հետաքրքրության անկմամբ (սույն հանգամանքի հետ է կապված նաև ԶԼՄ-ների՝ գնալով հազվադեպ անդրադարձը Վարդան Օսկանյանի դեմ հարուցված քրեական գործին, հետեւաբար նաև՝ արտաքին-քաղաքական գերատեսչության նախկին դեկավարի ավելի հազվադեպ հիշատակումը): Եվ ընդհակառակը՝ նոյեմբերի վերջին - դեկտեմբերի առաջին կեսին հաճախացել են էպոսագետ Վարդան Սեղրակյանի ու Պարույր Յայրիկյանի հիշատակումները՝ որպես հնարավոր թեկնածուների: Յետազոտված ժամանակահատվածում նրանք ընդհանուր առմամբ հիշատակվել են համապատասխանաբար 71 (58, 4 եւ 9) եւ 66 (56, 7 եւ 3) անգամ: Ընդ որում, Վարդան Սեղրակյանի անձի նկատմամբ ուշադրությունը մեծապես պայմանավորված էր այն բանով, որ նա այս ընտրարշավում նախագահական պաշտոնին ցայժմ շատ քերին ծանոթ հավակնորդների առաջադրման յուրօրինակ խորհրդանշից էր դարձել:

Յետազոտված ժամանակահատվածում իրենց թեկնածություններին կողմ եւ դեմ արտահայտությունների թվով առանձնացել են Սերժ Սարգսյանը, Րաֆֆի Յովհաննիսյանը եւ Լեյն Տեր-Պետրոսյանը: Բայց եթե առաջին երկուսի պարագայում ԶԼՄ-ներն աջակցություն են արտացոլել, ապա ՀՀ առաջին նախագահի թեկնածության նկատմամբ եթերում հաճախ բացասական

վերաբերմունք է հնչել. Սերժ Սարգսյան՝ 61 կողմ եւ 9 դեմ, Ռաֆֆի Հովհաննիսյան՝ 28 եւ 1, Լեւոն Տեր-Պետրոսյան՝ 4 եւ 18: Գործող նախագահին աջակցություն եթերում արտացոլել են զիսավորապես Հայաստանի հանրային ռադիոն, «Արմռադիոն», Դ2-ը եւ «Արմնյուզը»: «Ժառանգության» առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանի առաջադրման նկատմամբ բարեհած վերաբերմունք է արտացոլվել «Արմնյուզի», «Երկիր Մեդիայի» ու Հայաստանի Հանրային ռադիոյի եթերում: Իսկ առաջին նախագահի թեկնածության դեմ առավել հաճախ արտահայտվել են Հայաստանի Հանրային ռադիոյում:

Թեկնածուների նկատմամբ ամենամեծ «չեզոքությունը», եթե դատելու լինենք այս կամ այն թեկնածուին կողմ/դեմ արտահայտությունների քանակով, դրսեւորել են «Ճանթը» եւ Դ1-ը: Նրանց այս առումով մոտ է նաև «Արմենիան». հատկանշական է, որ առավել չեզոք լուսաբանմամբ աչքի են ընկել այն հեռարձակվողները, որոնք համեմատաբար թույլ հետաքրքրություն են ցուցաբերել ընդհանրապես նախընտրական իրավիճակի հանդեպ:

ԲԱՆԱԿԻՃԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ («Հյուր ստուդիայում» ձեռաչափով) մշտադիտարկման առաջին փուլում թույլ է տալիս նախնական եզրահանգում անել այն մասին, որ նախընտրական բանավեճերն առայժմ գերակա չեն դարձել հետազոտվող ԶԼՄ-ների մեծ մասում: Իսկ երբ վերջիններս, այնուամենայնիվ, անդրադարձել են նախագահական ընտրություններին, ապա ձգտել են հնարավորություն ընձեռել տարբեր դիրքորոշումների արտահայտման համար: Սակայն դրանով հանդերձ, շեշտն ավելի շատ քաղաքական իրավիճակի զարգացման կանխատեսումների եւ կոնյունկտուրային բնույթի բախումների վրա է դրվել, քան` հրատապ խնդիրների եւ առաջիկա քարոզարշավի բովանդակային բաղկացուցչի վրա: Թերեւս, այս առումով որոշակի բացառություն են կազմում «Երկիր Մեդիան» եւ «Արմռադիոն», որոնցում ժամանակ առ ժամանակ բարձրացվել են այնպիսի հիմնախնդիրներ, որոնց լուծումը հանրությունն ակնկալում է պետության նորընտիր դեկավարից:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՇԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՀՅ 2013թ. ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՃՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2013թ. ՀՈՒՆՎԱՐԻ 14-20)

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ են հանդիսացել 6 համազգային հեռուստաալիքներ՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ալիք (Հ1), «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», Հայկական Երկրորդ հեռուստաալիք (Հ2), «Շանթ», 1 մայրաքաղաքային հեռուստաալիք՝ «Արմենիա», ինչպես նաև Հայաստանի հանրային ռադիոն եւ «Արմռադիո FM 107» ռադիոալիքը:

ՍՈՒՅՆ ՀԱՃՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ընդգրկում է նախընտրական քարոզությանը նախորդած վերջին շաբաթը, այսինքն՝ ՀՅ նախագահի թեկնածուների գրանցումից հետո ընկած ժամանակաշրջանը (2013թ. հունվարի 14-20): Այդ ժամանակահատվածում, ինչպես եւ հետազոտության առաջին փուլում, հեռարձակվող ԶԼՄ-ները խտրականություն կամ բացահայտ կողմնակալ վերաբերմունք չեն դրսեւուրել ՀՅ նախագահի թեկնածուների նկատմամբ: Ուշադրությունը սեւեռելով գրանցված ութ թեկնածուների գործունեության վրա՝ հեռարձակվող ԶԼՄ-ներն ինչ-որ չափով փոխսատուցել են այն անորոշությունն ու ցաքուցրիվ ուշադրությունը, որոնք 2012թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին նախագահական աթոռի հնարավոր թեկնածուների բազմաթիվ (ավելի քան 40) անունների շրջանառության հետեւանք էին:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐՈՋՉՈՒԹՅԱՆԸ նախորդած վերջին շաբաթում նախագահական մրցավազքին առավել մեծ ուշադրություն են դարձրել «Արմռադիոն», Հ2-ը, «Արմենիա» եւ Հայաստանի հանրային ռադիոն: Հետազոտված մյուս հեռարձակվողները մոտավորապես համանման ակտիվություն են դրսեւուրել նախընտրական գործընթացների լուսաբանման ընթացքում:

Այդ ժամանակաշրջանում ի հայտ են եկել առավել ծավալուն լուսաբանման արժանացած երկու թեկնածուներ՝ գործող նախագահ Սերժ Սարգսյանը եւ «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանը: Ընդ որում, նրանց առաջատարությունը ինչպես անդրադարձների հաճախականությամբ, այնպես էլ եթերաժամանակի ծավալով երեւակել է հետազոտված բոլոր ԶԼՄ-ներում, բացառությամբ Հ2-ի եւ «Շանթի», որոնցում եթերաժամանակի ծավալով Սերժ Սարգսյանին հաջորդել են, համապատասխանաբար, «Ազատություն» կուսակցության առաջնորդ Հրանտ Բագրատյանը եւ րապես էպոսագետ ներկայացող Վարդան Սեդրակյանը: Բացի այդ, Հրանտ Բագրատյանն անդրադարձների հաճախականությամբ Րաֆֆի Հովհաննիսյանից առաջ է անցել «Երկիր Մեդիայում»:

Ուշագրավ է գործող նախագահի լուսաբանումը: Նախընտրական քարոզությանը նախորդած վերջին շաբաթում ԶԼՄ-ները բավական ինտենսիվ են անդրադարձել

նրա գործունեությանը ոչ թե որպես թեկնածուի, այլ որպես պաշտոնատար անձի: Այսպես, ՀՀ նախագահի կարգավիճակում Սերժ Սարգսյանի լուսաբանումը կազմել է հետազոտված 9 ալիքների կողմից նրան հատկացված միագումար ամբողջ եթերաժամանակի 65.6%-ը (կամ գրեթե երկու երրորդը): Ընդունին, «Ճանթի» եթերում այս ցուցանիշը կազմել է 93.4%, Հ1-ում՝ 85.3%: Արդյունքում Սերժ Սարգսյանն էական տեղեկատվական առավելություն էր ստացել մյուս բոլոր մրցակիցների նկատմամբ, որոնց գործունեությունը թեկնածուի կարգավիճակից դուրս չէր լուսաբանվում, չհաշված Շաֆֆի Յովհաննիսյանի 30 վայրկյանը: Սերժ Սարգսյանի՝ որպես թեկնածուի լուսաբանման նկատմամբ նրա՝ որպես նախագահի լուսաբանման գերակայությունն արծանագրվել է հետազոտված 9 ԶԼՄ-ներից 8-ում: Այդ շաբաթում միակ բացառությունը «Արմռադիոն» էր, որի՝ Սերժ Սարգսյանին նվիրված եթերում միայն 5.4%-ն է կազմել նրա լուսաբանումը որպես նախագահի:

ԻՆՉ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՆՇԱՆԱՑԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐՈՎ ԱՆԴՐԱՄԱՐՁՆԵՐԻՆ, ապա նախագահական աթոռի բոլոր հավակնորդները նախընտրական քարոզությանը նախորդած վերջին շաբաթում լուսաբանվել են չեզոք կերպով, բացառությամբ Սերժ Սարգսյանի (10 դրական եւ ոչ մի բացասական անդրադարձ) եւ Շաֆֆի Յովհաննիսյանի (մեկական դրական եւ բացասական անդրադարձ): Սերժ Սարգսյանին դրական անդրադարձներն առկա էին այն ռեպորտաժներում, որոնցում քաղաքական տարբեր ուժերի ներկայացուցիչներ իրենց աշակեցությունն էին հայտնում գործող նախագահի թեկնածությանը:

# **ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

## ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013թ. ՄԱՅԻՍԻ 5-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Երեանի ավագանու 2013թ. մայիսի 5-ի ընտրություններին մասնակցել են 6 կուսակցություններ եւ 1 կուսակցական դաշինք:

2013թ. մայիսի 12-ին ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է Երեանի ավագանու ընտրությունների քվեարկության վերջնական արդյունքները: Կուսակցություններին/դաշինքին տրված ձայները բաշխվել են հետեւյալ կերպ (սուլուներով):

	Կուսակցություն/դաշինք	%
1.	Հայաստանի հանրապետական կուսակցություն	<b>55.90</b>
2.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	<b>23.06</b>
3.	«Բարեկ Երեան» կուսակցությունների դաշինք	<b>8.48</b>
4.	«Հայ Ազգային Կոնգրես» կուսակցություն	<b>4.39</b>
5.	Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցություն	<b>3.80</b>
6.	«Օրինաց Երկիր» կուսակցություն	<b>3.73</b>
7.	«Առաքելություն» կուսակցություն	<b>0.64</b>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՇԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013թ. ՄԱՅԻՍԻ 5-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԱՃՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2013թ. ԱՊՐԻԼԻ 7 - ՄԱՅԻՍԻ 3)

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ են հանդիսացել 4 համապետական հեռուստա-ալիքներ՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ալիք (Հ1), «Երևի Մեդիա», «Կենտրոն», Հայկական երկրորդ հեռուստաալիք (Հ2), 1 մայրաքաղաքային հեռուստաալիք՝ «Արմենյուզ», ինչպես նաև Հայաստանի հանրային ռադիոն եւ «Արմռադիո FM 107» ռադիոալիքը:


ՍՈՒՅՆ ՀԱՃՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ընդգրկել է նախընտրական քարոզության ողջ ժամանակահատվածը: Այդ ժամանակահատվածի առաջին երկուամսեան շաբաթները (2013թ. ապրիլի 7-24) արտացոլել են Հայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ների կողմից ընտրությունների լուսաբանման վերջին տարիներին առկա ինչպես դրական, այնպես էլ բացասական միտումները: Մասնավորապես, որպես դրական հանգամանք կարող է նշվել Երեւանի ավագանու տեղերի համար պայքարին մասնակցող 7 քաղաքական ուժերից որեւէ մեկի նկատմամբ խտրական վերաբերմունքի բացակայությունը:

Դրա հետ մեկտեղ շարունակում է լուրջ խնդիր հանդիսանալ հայ քաղաքական գործիչների բանավիճելու, եթերում բաց քննարկումների մասնակցելու ոչ բավարար պատրաստակամությունը: Շարունակվում է նաև որոշ հեռուստահեռարձակվողների խմբագրական նյութերում քաղաքական ուժերի նախընտրական շտաբների կողմից հրականացվող եւ քարոզատարեր պարունակող նկարահանումների օգտագործման ոչ ցանկալի պրակտիկան: Որպես բացասական կարող է նշվել ընտրությունների եւ ընդհանրապես քաղաքական կյանքի լուսաբանման գործում հանրային հեռարձակվողների դերի նվազման միտումը: Այս գործոնն առանձնակի նշանակություն է ստանում մի շարք մասնավոր հեռուստաալիքների ուժգնացող քաղաքականացման պայմաններում, որոնք, առնչված լինելով կոնկրետ կուսակցությունների, որոշակի առումով համապատասխան տեղեկատվական օրակարգ են իրականացնում: Այս վերջին հանգամանքը կարող է երկակի գնահատվել: Մի կողմից՝ հեռարձակվող ԶԼՄ-ներում զանազան քաղաքական շահերի արտացոլումը հանդիսանում է ընտրարշավների լուսաբանման ժամանակ բազմակարծության ապահովման գրավականը, բայց, մյուս կողմից, հանրային ռեսուրսը (հաճախականությունները) փաստորեն օգտագործվում է նեղ քաղաքական նպատակներով, ինչը հակասում է ՀՀ օրենսդրության էլույացմանը: Բացի դրանից, հայկական եթերում նման իրավիճակը սահմանափակում է այն քաղաքական ուժերի տեղեկատվական հնարավորությունները, որոնք հեռարձակվողների վրա ազդեցության լժակների չեն տիրապետում, իսկ փոքրիշատե հավասարակշիռ լուսաբանման երաշխիքներ (օրենսդրություն եւ մշտադիտարկում) առկա են լինում միայն պաշտոնական նախընտրական քարոզարշավի կարծ ժամանակահատվածներում: Այդ սահմանափակումը որոշակի չափով առնչվում է նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, անկախ փորձագետներին:

Նշված երեւոյթները հիմնականում բնորոշ էին նաեւ նախընտրական քարոզության վերջին 9 օրերին: Միեւնույն ժամանակ՝ խտրական վերաբերմունքի բացակայության մասին կարելի է խոսել ընտրություններին մասնակցած քաղաքական 7 ուժերից միայն 6-ի առնչությամբ: Հետազոտված ԶԼՄ-ների կողմից էապես քիչ ուշադրության է արժանացել «Առաքելություն» կուսակցությունը: Ինչ խոսք, այս կուսակցությունը հանրաձանաչության եւ քաղաքական ազդեցության առումով զիջում է վեց մրցակիցներին: Սակայն սա չի կարող բավարար բացատրություն լինել առանձին հեռարձակվողների եթերում այս եւ մյուս կուսակցությունների միջեւ ուշադրության այսքան ընդգծված անհավասարության համար: Ասվածն առաջին հերթին վերաբերում է Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ալիքին (**Հ1-ին**)՝ «Առաքելության» ներկայացուցիչները չեն մասնակցել այս հեռարձակվողի ոչ մի բանավիճային հաղորդման, մասնավորապես՝ «Հարցազրույցին», եւ դա այն դեպքում, երբ մրցակից քաղաքական ուժերի ներկայացուցիչները 2-3-ական անգամ հրավիրվել են այստեղ: Եվ, ընդհանուր առմամբ, հեռարձակման ծավալով հենց **Հ1-ի** եթերում է «Առաքելությունն» ամենաշատը զիջել ընտրարշավի մյուս մասնակիցներին:

ԱՌԱՎԵԼ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ ընտրարշավի լուսաբանման գործում ցուցաբերել է «Կենտրոն» հեռուստաալիքը, որին հետեւում է «Երկիր Մեդիան»: Այս ցուցանիշով (կուսակցություններին/դաշինքին հատկացված եթերաժամանակի ծավալ) երրորդը «Արմնյուզն» էր: Այս առումով «Կենտրոնը» եւ «Երկիր Մեդիան» վերականգնել են առաջատարի իրենց դիրքերը, որոնք զբաղեցնում էին 2012թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ եւ որոնք զիջել էին 2013թ. նախագահական ընտրարշավի ժամանակ: Դրանով իսկ հաստատվել են ԵՄՍ մշտադիտարկման խմբի այն ենթադրությունները, որ ընտրությունների նկատմամբ այս երկու հեռուստաալիքների հետաքրքրությունը որոշակիորեն պայմանավորված է ընտրարշավներին համապատասխանաբար «Բարգավաճ Հայաստան» (**ԲՀԿ**) եւ Հայ Յեղափոխական Դաշնակցություն (**ՀՅԴ**) կուսակցությունների մասնակցությամբ: Իսկ Երեւանի ավագանու ընտրությունների նկատմամբ ամենաքիչ ուշադրությունը ցուցաբերել են **Հ1-ը** եւ **Հայաստանի հանրային ռադիոն**: Ինչպես նշվել է վերեւում, ընդհանուր առմամբ երկու քաղաքական գործընթացների նկատմամբ Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության հարաբերականորեն թույլ հետաքրքրությունն արդեն կարելի է ավանդական համարել, եւ դա առաջին հերթին վերաբերում է **ՀՅՇԸ** հեռուստահեռարձակմանը:


## ԳՐԱՖԻԿ 1. Ընտրադավագի նկատմամբ հետազոտված հեռարձակվողների ուշադրության աստիճանը (Եթերաժամանակի ծավալով)



Հետազոտված բոլոր ԶԼՍ-ների հանրագումարված տվյալներով Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերից լուսաբանման ամենամեծ ծավալի արժանացել է ԲՀԿ-ն: Սակայն եթե «Բարեւ Երեւան» կուսակցությունների դաշինքի ցուցանիշներին գումարենք «Ժառանգություն» կուսակցության այն լուսաբանումը, որը կապված չէ դաշինքում նրա անդամության եւ ընտրություններին մասնակցության հետ, ապա լուսաբանման ծավալի նրանց միագումար ցուցանիշները նույնիսկ փոքր ինչ ավելի բարձր կլինեն, քան ԲՀԿ-ինը (հաշվի առնելով, որ հանրային ընկալման մեջ «Բարեւ Երեւանը» եւ «Ժառանգությունը» անքակտելի են՝ նրանց ցուցանիշների միագումարում նման հետազոտության մեջ միանգամայն արդարացված էր): Իսկ անդրադարձների հաճախականությամբ առաջատարը Հայաստանի հանրապետական կուսակցությունն էր (ՀՀԿ), որն իրեն հատկացված եթերաժամանակով զիջել է ինչպես «Բարեւ Երեւանին»/«Ժառանգությանը», այնպես էլ ԲՀԿ-ին:

**«Կենտրոն»** հեռուստաալիքի եթերում նախընտրական մրցավազքի բոլոր մասնակիցների հանդեպ ձնշող առավելություն է ստացել ԲՀԿ-ն: Այս կուսակցությունը լուսաբանման ծավալով մրցակիցներից առաջ է անցել (բայց ավելի քիչ տարբերությամբ, քան «Կենտրոնում») նաեւ Հ2-ի եթերում: ՀՅԴ-ն մրցակիցների նկատմամբ փոքր ինչ առավելություն է ստացել «Երևիր Մելիք» հեռուստաալիքում, ՀՀԿ-ն՝ Հ1-ում: Հետազոտված մյուս երեք ԶԼՍ-ներում՝ «Արմենյուզ», «Արմռադիո» եւ Հայաստանի հանրային ռադիո, առավել բարձր հանրագումարային ցուցանիշ ունի «Բարեւ Երեւանը»/«Ժառանգությանը»:

**ԳՐԱՖԻԿ 2. Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերի նկատմամբ ուշադրության բաշխումը նախընտրական քարոզության ժամանակաշրջանում (Եթերաժամանակի ծավալով Եւ անդրադարձների հաճախականությամբ)\***



\*Այստեղ ներկայացված են «Բարեւ Երեւանի» եւ «Ժառանգության» հանրագումարված ցուցանիշները:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ մասնակցող քաղաքական ուժերի առաջնորդների (ընտրացուցակներում առաջին երեք անձանց, ում անունները եղել են քվեաթերթիկներում) պաշտոնեական, մասնագիտական գործունեության լուսաբանումը ընտրարշավի համապատկերից ու նրանց կուսակցական պատկանելությունից դուրս, որպես կանոն, նվազագույնն է եղել եւ չէր կարող էապես ներազդել լսարանի ընկալմանը: Յետազոտված ժամանակահատվածում որպես այդպիսին եթերում հայտնվել են Երեւանի ներկայիս քաղաքապետ, ՀՀԿ ցուցակի առաջին համար Տարոն Մարգարյանը, նախկին արտգործնախարար, ԲՀԿ ցուցակի առաջին համար Վարդան Օսկանյանը, ՅՅ արտակարգ իրավիճակների նախարար, ՕԵԿ կուսակցության ցուցակի առաջին համար Արմեն Երիցյանը եւ շախմատային գրումայստեր, ՀՀԿ ցուցակի երկրորդ համար Սմբատ Լապուտյանը: Ընտրարշավի համապատկերից դուրս ամենածավալունը եղել է Տարոն Մարգարյանի պաշտոնեական գործունեության լուսաբանումը «Արմնյութի» եթերում հեռարձակվող եւ քաղաքապետարանի մամուլի ծառայության ու հեռուստաընկերության համագործակցության արդյունք հանդիսացող «Մայրաքաղաք» ամենշաբաթյա հաղորդման մեջ: Սակայն դա բնորոշ էր միայն նախընտրական քարոզության ժամանակաշրջանի սկզբին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻՆ ՆՇԱՆԱՑԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐՈՎ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ԹԵՍԱԿԱՐԱՐ Կշիռը մոտավորապես կրկնակի բարձր էր խորհրդարանական (2012) եւ նախագահական (2013) ընտրություններից՝ հետազոտված բոլոր ալիքների անդրադարձների հանդագումարի 5.3%-ը։ Սա վկայում է անգիծով պայքարի մասին եւ հաստատում ընդդիմության հայտարարություններն առ այն, որ մայրաքաղաքային ընտրություններն այն դիտարկում է որպես այս շրջափուլում վճռորոշը։ Եթե խորհրդարանական եւ նոյնիսկ նախագահական ընտրություններից հետո հնարավորություն էր պահպանվել մարտահրավեր նետելու իշխող ՀՀԿ-ին, ապա Երեւանի ավագանու տեղերի համար արշավից հետո հերթական «խոշոր» ընտրություններին պիտի սպասել ամբողջ 4 տարի։ Քաղաքական մրցակցության շիկացումը չէր կարող չանդրադառնալ ընտրությունների տեղեկատվական բաղկացուցչի վրա եւ խախտել է վերջին ընտրությունների ընթացքում ուրվագծված միտումը՝ Երկրի քաղաքական կյանքի առավելապես չեզոք լուսաբանումը։ Ընդ որում, չեզոք համատեքստից դուրս քաղաքական ուժերի լուսաբանման տեսակարար կշռի աճը հիմնականում տեղի է ունեցել նախընտրական քարոզչության ժամանակաշրջանի վերջին մեկ երրորդում։ Այդ 9 օրերի ընթացքում նշանային բնութագրիչներով անդրադարձները կազմել են 8%, ինչը զգալիորեն բարձր է, քան ընդհանուր առմամբ նախընտրական քարոզչության 27 օրերին։

Հատկանշական է, որ նշանային բնութագրիչներով անդրադարձների ամենաբարձր տոկոսը գրանցվել է Երեք հեռուստաալիքներում, որոնցում լուսաբանման ծավալով առավելություն ունեն այն կուսակցությունները, մասնավորապես՝ ԲՀԿ-ն եւ ՀՅԴ-ն, որոնք մյուսներից ավելի հաճախ են արտահայտվել ՀՀԿ-ի դեմ «միասնական ձակատով» հանդես գալու օգտին։ Հ2՝ 9.9%, «Երկիր Մեդիա»՝ 9%, «Կենտրոն»՝ 8.8%։ Հետազոտված մյուս ԶԼՄ-ների եթերում այս ցուցանիշը միջինից (5.3%) էապես ցածր է։ «Երկիր Մեդիային» եւ «Կենտրոնին» միավորում է այն, որ նախընտրական քարոզչության ժամանակաշրջանի վերջին մեկ երրորդում հենց նրանց հաշվին է բարձրացել տեղեկատվական դիմակայության ընդհանուր շերմաստիճանը (համապատասխանաբար՝ նշանային բնութագրիչներով անդրադարձների 17.3% եւ 14.6%) եւ որ նրանց եթերում է խիստ քննադատական եղել ՀՀԿ-ի լուսաբանումը (համապատասխանաբար, 0 դրական՝ 43 բացասականի դիմաց եւ 0 դրական՝ 52 բացասականի դիմաց՝ նախընտրական քարոզչության ողջ ժամանակաշրջանում)։ Նախընտրական քարոզչության ավարտին ՀՀԿ-ին բացասական անդրադարձների թվի աճն էլ հենց պայմանավորել է լուսաբանման նշանային բնութագրման ընդհանուր դինամիկան։ Այս իմաստով Հ2 հեռուստաալիքում այլ միտում է նկատվել՝ այստեղ նախընտրական քարոզչության ժամանակաշրջանի վերջին մեկ երրորդում նշանային բնութագրիչներով անդրադարձների տեսակարար կշռը կրծատվել է մինչեւ 7.9%։


Նախընտրական քարոզչության ողջ ժամանակաշրջանում լուսաբանումն առավել չեզոք է Եղել Հ1-ում (նշանային բնութագրիչներով անդրադարձների 2.2%) եւ «Արմենիուզում» (2.4%)։ Հ2-ը միակն էր, որտեղ ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերին դրական անդրադարձների թիվը գերազանցել

Է բացասականին: Իսկ դրական անդրադարձների նկատմամբ բացասականների ամենամեծ առավելությունը գրանցվել է «Կենտրոնի» եւ «Երկիր Մեդիայի» եթերում:

Դրական եւ բացասական անդրադարձների հաշվեկշիռ տեսանկյունից առավել բարենպաստ լուսաբանում են ունեցել ՀՅԴ-ն (10 դրական եւ 0 բացասական անդրադարձ հետազոտված բոլոր ալիքներում ընդհանուր առմամբ) եւ ԲՀԿ-ն (24 եւ 17): Առաջինն իր համար բարենպաստ հաշվեկշիռ ապահովել է հիմնականում «Երկիր Մեդիայի» (9 եւ 0), իսկ Երկրորդը՝ «Կենտրոնի» (12 եւ 0) հաշվին: Երեք կուսակցությունների՝ ՀՀԿ-ի, Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) եւ Օրինաց Երկրի (ՕԵԿ) հաշվեկշիռը բացասական էր: Եվ ամենաանբարենպաստը եղել է կառավարող կուսակցության լուսաբանումը (28 դրական եւ 153 բացասական անդրադարձ), ինչն աննախադեպ երեւոյթ է հայաստանյան ընտրությունների պատմության մեջ: Ընդ որում, ՀՀԿ-ն հետազոտված բոլոր ԶԼՍ-ներում է բացասական հաշվեկշիռ ունեցել: Այն գլխավորապես ձեռավորվել է ի հետեւանս նրա, որ ընդդիմադիր քաղաքական ուժերը եթերում իրենց հնարավորություններն օգտագործել են առավելս ՀՀԿ-ի քննադատության համար եւ երբեմն քիչ ուշադրություն են դարձրել սեփական նախընտրական ծրագրերին:

Հանրապետականներին բացասական արձագանքները վերաբերում էին քաղաքի եւ ընդհանրապես Երկրի կառավարման թերություններին: Կառավարող կուսակցությունը նաեւ մեղադրվում էր ընտրությունները կեղծելու ձգտման մեջ: ԲՀԿ-ի պարագայում բացասականը ձեռավորվել է ընտրակաշառք բաժանելու մեղադրանքների, իսկ դրականը՝ նախընտրական միջոցառումների ժամանակ նրան սատարելու մասին հայտարարությունների հաշվին: Հատկապես հաճախակի են նման հայտարարություններ հնչել «Կենտրոնի» եւ ՀՀԿ-ի եթերում: Որոշակի առումով սա հետեւանք էր այս Երկու հեռուստաալիքների (ինչպես նաեւ «Երկիր Մեդիայի») խմբագրական լուսաբանման մեջ միեւնույն տեսանյութերի օգտագործման, որոնք, ըստ Երեւոյթին, տրամադրվել են հենց ԲՀԿ-ի նախընտրական շտաբի կողմից: ՕԵԿ-ի հասցեին դրականը նույնպես հիմնականում հնչել է նախընտրական միջոցառումների մասին ռեպորտաժներում, իսկ քննադատությունը վերաբերում էր ՀՀԿ-ի հետ համագործակցությանը եւ ընտրախախտումներին մասնակցելուն: ՀՅԴ-ի բարենպաստ հաշվեկշիռը ձեռավորվել է եթերում ընտրողների այն հավաստիացումների հաշվին, որ նրանք իրենց քվեները տալու են այդ կուսակցությանը: ՀԱԿ-ի հասցեին բացասականը կապված էր հիմնականում ոչ թե անմիջականորեն նախընտրական համապատկերի հետ, այլ «Հայոց համազգային շարժում» (ՀՀՇ) կուսակցության փոխակերպման, նրա «Հայ ազգային կոնգրես» վերանվանման եւ 2013թ. ապրիլի 13-ի համագումարի հետ, որ եզրափակել է այս գործընթացը: Ընդ որում, ՀԱԿ-ի եւ նրա առաջնորդ, ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հասցեին քննադատական արտահայտությունները հնչել են քաղաքական ամենատարբեր ուժերի ներկայացուցիչների կողմից:

## ԳՐԱՖԻԿ 3. Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերի նկատմամբ հետազոտված հեռարձակվողների նշանային բնութագրիչներով անդրադարձների հաշվեկշիռը\*



«ՀՅՈՒՐ ՍՏՈՒԴԻԱՅՈՒՄ» ԶԵՎԱՐԱՓԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ հաստատում է, որ նախընտրական քարոզարշավի նկատմամբ ամենամեծ հետաքրքրությունը ցուցաբերել է «Կենտրոն»՝ հետազոտված ժամանակահատվածում նրա գրեթե բոլոր բանավիճային հաղորդումները նվիրված էին ընտրություններին եւ քաղաքական գործընթացներին ընդհանուրապես: Միենույն ժամանակ, «Կենտրոնի» հյուրերի թվում չկային ՀՀԿ ներկայացուցիչներ, ինչն ավելի շուտ հարկեդիտարկելու շեմայութեալ հեռուստաալիքի ընտրովի վերաբերմունք կուսակցությունների նկատմամբ, այլ որպես հանրապետականների ընտրովի վերաբերմունք հեռուստաալիքների նկատմամբ: Ընտրարշավի լուսաբանման նպատակով «հյուր ստուդիայում» ձեւաչփը նոյնպես ակտիվորեն են օգտագործել «Երկիր Մեդիան», «Արմնյուզն» ու Հ2-ը: Հանրային ռադիոյի հաղորդումներից, բացառությամբ տեղեկատվականների, ընդհանուրապես հնարավոր չեր ենթադրել, որ Հայաստանում քաղաքական կարեւոր արշավ է սկսվել: Հ1-ը հետազոտված մասնավոր հեռուստաալիքներից նկատելիորեն պասիվ էր, այդուհանդերձ նրա «Հարցազրոյց» հաղորդմանը հետազոտված ժամանակահատվածում հասցրել են հյուրընկալվել ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչները, բացառությամբ «Առաքելություն» կուսակցության: «Արմռադիոն» ՀՀ նախագահի ընտրությունների ոչ վաղեմի ընտրարշավի համեմատությամբ էապես նվազեցրել է իր հետաքրքրությունը քաղաքական գործընթացների նկատմամբ: Ինչպես եւ նախագահական ընտրարշավի ժամանակ՝ բոլոր հեռարձակվողների բանավիճային հաղորդումները նախընտրական իրավիճակի վերլուծության նպատակով հազվադեպ են անկախ փորձագետների դիմել:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013թ. ՄԱՅԻՍԻ 5-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2013թ. ՄԱՅԻՍԻ 4-19)

ՀԵՏԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ են հանդիսացել 4 համապետական հեռուստա-ալիքներ՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ալիք (Հ1), «Երևի Մեղիս», «Կենտրոն», Հայկական երկրորդ հեռուստաալիք (Հ2), 1 մայրաքաղաքային հեռուստաալիք՝ «Արմենիա», ինչպես նաև Հայաստանի հանրային ռադիոն եւ «Արմռադիո FM 107» ռադիոալիքը:

ՍՈՒՅՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ԱՐՏԱՑՈԼՎԱԾ մշտադիտարկման երկրորդ (2013թ. մայիսի 4-ից մինչեւ մայիսի 5-ի ժամը 20.00-ն) եւ երրորդ (2013թ. մայիսի 5-ի 20.00-ից մինչեւ մայիսի 19) փովերը բնութագրվում են նրանով, որ դրանք կամ ընդհանրապես չեն կարգավորվում ընտրական օրենսդրությամբ, կամ էլ այդ կարգավորման մեջ քիչ կոնկրետություն կա: Ընդսմին, եւ «լրության օրերը», եւ քվեարկությանն անմիջապես հաջորդող գործընթացները որոշակի իմաստով նվազ կարեւոր չեն, քան նախընտրական քարոզչությունը: Ընտրողին իրապես 1-2 օր է պետք, որպեսզի ինքնուրույն «մարսի» տեղեկատվության այն հարածուն հիսոքը, որը նրա վրա է տեղացել արշավի նախորդ օրերին: Եվ քարոզչության ցանկացած տարրեր կարող են խանգարել իմաստավորման եւ վերջնական որոշման կայացման գործընթացին: Ինչ վերաբերում է հետընտրական իրավիճակի լուսաբանմանը, ապա այն լավագույն միջոցն է դասեր քաղելու ինչպես թեկնածուների, կուսակցությունների քաղաքական վարքից, այնպես էլ բուն ընտրական գործընթացից: Նման վերաբերելուման պակասը սահմանափակում է ընտրությունների՝ որպես կարեւորագույն ժողովրդավարական ինստիտուտի կատարելագործման հեռանկարները:

«ԼՈՌԻԹՅԱՆ ՕՐԵՐԻՆ» ՀՈՒՍԱԲԱՆՈՒՄ երեւան է հանել հայկական ընտրահամակարգի համար ակնհայտ օրենսդրական-նորմատիվ բացերը: Բացակայում են ինչպես հստակ սահմանումները, այնպես էլ պարզաբանող մեկնաբանություններն առ այն, թե ինչն է քարոզչություն հանդիսանում: Ի հետեւանս դրա՝ ավելի շատ բացառություն, քան կանոն է քվեարկությանն անմիջապես նախորդող այս կարծ, բայց կարեւոր ժամանակաշրջանում ԶԼՄ-ներին խախտումների համար պատասխանատվության ենթարկելը: Տարբեր հեռուստառադիրի հաղորդումներում այնպիսի դրվագներ են հայտնվում, որոնք կարող են անմիջական ազդեցություն ունենալ քաղաքացիների ընտրության վրա: Եթե 2012թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ հեռարձակվողներն իրենք էին խուսափում նման դրվագներից եւ նույնիսկ թեկնածուները, կուսակցությունների ներկայացուցիչներն էին իրենց զուսապահում տեսախցիկների ու միկրոֆոնների առաջ, ապա 2013թ. նախագահական եւ երեւանի ավագանու ընտրությունների ժամանակ ինքնավերահսկումը շատ ավելի ցածր մակարդակի վրա էր:

Ընտրողներին ուղղորդող դրվագներ (ընդհանուր առմամբ՝ 60 նյութ, ներառյալ կրկնությունները) մայիսի 4-ին եւ 5-ին (միջնեւ 20.00-ն) արձանագրվել են հետազոտված բոլոր 7 ԶԼՄ-ների եթերում: Այդ թվում, Հայաստանի հանրային ռադիոյում՝ 14, «Երկիր Մեդիայում»՝ 12, «Արմօադիոյում»՝ 10, Հ1-ում եւ «Արմնյուզում»՝ 8-ական, «Կենտրոնում» եւ Հ2-ում՝ 4-ական: Չափանիշները բոլոր այս՝ ընտրական օրենսդրությանը համապատասխանության տեսանկյունից կասկածելի դրվագները սույն հաշվետվությունում նշվելու են որպես «պայմանական խախտումներ» կամ «պայմանական քարոզություն»:

Այս կամ այն քաղաքական ուժի օգտին քարոզություն պարունակող պայմանական խախտումների ամենամեծ թիվը բաժին է ընկել «Բարեւ Երեւանին»/«Ժառանգությանը»՝ 28: 18 անգամ պայմանական քարոզություն է հնչել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության (ԲՀԿ) օգտին, ընդորում՝ 4 անգամ «Կենտրոնի» եթերում, որտեղ քաղաքական մեկ այլ ուժի հասցեին այդօրինակ քարոզություն չի եղել: Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) վերաբերյալ պայմանական հակաքարոզություն նույնպես հնչել է 18 անգամ, ընդորում՝ մի դեպքում դա հակաքարոզություն է եղել, մյուսում այն կարող էր երկակի ընկալվել: «Հայ ազգային կոնգրես» (ՀԱԿ) կուսակցությանը բաժին է ընկել 16 դրվագ, որոնցից մեկը քարոզության տարրեր էր պարունակում ինչպես նրա օգտին, այնպես էլ նրա դեմ: Հայ Յեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) օգտին պայմանական քարոզություն հնչել է 12, «Օրինաց Երկիր» կուսակցության (ՕԵԿ) օգտին՝ 11, «Առաքելություն» կուսակցության օգտին՝ 8 անգամ:

Պայմանական քարոզության տարրերից «լռության օրերին» առավել հաճախ հնչել են նախընտրական խոստումներ (16 դրվագ): Մեծամասամբ դրանք հնչել են ԲՀԿ-ի ներկայացուցիչների շուրթերից: Մշտադիտարկման խոմքն արձանագրել է կոնկրետ քաղաքական ուժի հաջողության վերաբերյալ կանխատեսում պարունակող (մյուսներից հաճախ՝ «Բարեւ Երեւան» դաշինքի ներկայացուցիչների կողմից) 12 եւ «ինքնազնվագղով» 8 դրվագ (այս առումով ավելի շատ աչքի են ընկել ՀՀԿ-ի ներկայացուցիչները): 8 անգամ եթերում հայտարարվել է այս կամ այն քաղաքական ուժի օգտին քվեարկելու մտադրության մասին եւ 4 անգամ հնչել են կոչեր՝ ընտրելու այս կամ այն քաղաքական ուժը: Արձանագրվել է նախընտրական կարգախոսների հնչեցման 7 դեպք (ընտրարշավի բոլոր մասնակիցների կողմից) եւ հակաքարոզության 2 դրվագ:

Հատուկ մեկնաբանության են արժանի պայմանական խախտումները «Արմնյուզ» հեռուստաալիքում, որտեղ մայիսի 4-ին հեռարձակվել են «Hotel Արմքոմերի» եւ «Արմքոմերի» հաղորդումների՝ ընտրություններին նվիրված ավելի վաղ (համապատասխանբար՝ ապրիլի 28-ի եւ մայիսի 1-ի) թողարկումների կրկնությունները: Այդ հաղորդումներից առաջինի հյուրը ՀԱԿ-ի ներկայացուցիչն էր, եւ չնայած հաղորդմանը բնորոշ կատակախան տոնին, ընտրություններին մասնակցող կուսակցություններից մեկը փաստորեն հնարավորություն էր ստացել իր նախընտրական արշավը Երկարաձգելու նաեւ «լռության օրը»: Երկրորդ հաղորդման մեջ անգամ հեգնանքի թանձր շերտը չէր կարող թաքցնել ընտրություններին մասնակցող բոլոր 7 քաղաքական ուժերի նկատմամբ քարոզության եւ հակաքարոզության ակնհայտ տարրերը: Նկատի

ունենալով այդ երկու հաղորդումների ժանրային առանձնահատկությունները, դրանց բովանդակությունն իր արտացոլումը չի գտնել նախորդ պարբերության տվյալներում, սակայն դրանք միանշանակ տեղափորձում են «պայմանական խախտում» սահմանման շրջանակներում: Փաստորեն, նախընտրական քարոզության ժամանակաշրջանում ցուցադրվելու համար նախատեսված հեռուստաարտադրանքը կրկին եթերում է հայտնվել այն օրը, երբ քարոզությունն արգելված է օրենքով: Վերջին դիտողությունը վերաբերում է նաեւ մայիսի 4-ին «Արմնյուզ» հեռուստաալիքի նորությունների («Լուրեր») առավոտյան (10.00) թողարկման սյուժեներից մեկին:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ ԱՌԱՋԻՆ ԺԱՄԵՐԻՆ ՈՒ ՕՐԵՐԻՆ՝ **մայիսի 5-ից (20.00-ից) մինչեւ մայիսի 7-ը (01.00-ն)**, երբ առավել ինտենսիվորեն էին լուսաբանվում ընտրությունների արդյունքները, մյուսներից առավել հաճախ քննարկվում էր ՀՀԿ-ն, որին հաջորդում են ԲՀԿ-ն եւ «Բարեւ Երեւան» դաշինքը: Դետաքրքիր է, որ ի տարբերություն նախընտրական քարոզության ժամանակաշրջանի, երբ «Բարեւ Երեւան» դաշինքին զուգընթաց ու դաշինքից անջատ լուսաբանվել է նաեւ «Ժառանգություն» կուսակցությունը, նշված ժամանակահատվածում վերջինս ոչ մի անգամ չի հիշատակվել հետազոտված ԶԼՄ-ների եթերում: Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ հեռարձակվողների ուշադրությունը քաղաքական ուժերի միջեւ բավականին հավասարաչափ է բաշխվել եւ համապատասխանել այն տեղերին, որ դրանք զբաղեցրել են ընտրությունների արդյունքներով: Նշյալ օրերին նախընտրական մրցավազքի մասնակիցների, այդ թվում «Առաքելություն» կուսակցության, եթերային ցուցանիշների «հավասարեցումը» կարելի է բացատրել նրանով, որ լուսաբանման զգալի մասը բաժին է ընկել նախնական արդյունքների բազմից ներկայացմանը, երբ, բնականաբար, հաղորդվում էին ողջ «յոթնյակի» տվյալները:

Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակաշրջանում լուսաբանման ծավալով մյուս հեռարձակվողներից բազմակի առավելությամբ պոկվելով առաջատարի դիրքերում է հայտնվել «Արմնյուզը»: Այդ ժամանակահատվածում ակտիվությամբ երկրորդը «Երկիր Մեդիան» էր, իսկ նախընտրական պայքարի լուսաբանման ծավալներով անվիճելի առաջատար «Կենտրոն» այդ ցուցանիշով զիջել է ոչ միայն վերոնշյալ երկու հեռարձակվողներին, այեւ Հանրային ռադիոյին եւ «Արմռադիոյին»: Հաշվի առնելով նախագահական ընտրությունների ժամանակաշրջանում «Կենտրոնի» հարաբերական պահիվությունը՝ հիշյալ փաստը, հավանաբար, կարելի է գնահատել որպես ընտրարշավոների լուսաբանման նկատմամբ այդ հեռուստաալիքի «պրագմատիկ» վերաբերմունքի վկայություն՝ նրա ակտիվությունն անմիջականորեն կապված է համապատասխան քաղաքական գործընթացում ԲՀԿ-ի շահագրգռվածության հետ: Նախընտրական ժամանակաշրջանի համեմատությամբ հակառի պատկեր կարելի է համարել այն, որ մայիսի 5-7-ին «Կենտրոնի» եթերում հատկացված եթերաժամանակով ԲՀԿ-ն երրորդն էր. մինչեւ քվեարկության օրը այդ ցուցանիշով կուսակցությունն այստեղ նկատելի առավելություն ուներ մրցակիցների նկատմամբ: Նշյալ հանգամանքներն ավելորդանգամ ընդգծում են Հայաստանում հեռարձակման լիցենզավորման ձեւավորված պրակտիկայի խնդրահարույց

լինելը, որը հնարավոր է դարձնում եթերի, առաջին հերթին՝ հեռուստաեթերի բովանդակության նկատմամբ քաղաքական շահերի գերակայությունը:

ՆՇԱՆԱՑԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐՈՎ ՀՈԽՍԱԲԱՆՄԱՆ առումով **մայիսի 5-7-ին** հետազոտված բոլոր ԶԼՄ-ների հանրագումարային տվյալներով ծայրահեղ անբարենպաստ է եղել ՀՀԿ-ի ու ԲՀԿ-ի հաշվեկշիռը՝ համապատասխանաբար 38 եւ 37 բացասական անդրադարձ, դրականների իսպառ բացակայությամբ: Հարաբերական անբարենպաստ է եղել նաև ՀԱԿ-ի լուսաբանումը (6 բացասական եւ ոչ մի դրական անդրադարձ): Այս երեք քաղաքական ուժերի նկատմամբ բացասականը մեծամասամբ կապված է ընտրախախտումների մեջ նրանց հասցեին հնչած մեղադրանքների հետ: ԲՀԿ-ի առնչությամբ տեղեկություններ են եղել նաև նրա առանձին անդամների անվայելու արարքների մասին (ոչ անպայման ընտրությունների հետ կապված): Մյուս կուսակցությունները լուսաբանվել են գրեթե բացառապես չեզոք կերպով: Իսկ ՀՀ-ի եթերում չի գրանցվել ընտրությունների մասնակիցներին նշանային բնութագրիչով ոչ մի անդրադարձ, ինչը վկայում է այն մասին, որ հիշյալ հեռարձակվողն այդ փուլում գերադասում էր խուսափել գնահատողական դատողություններից: Ընդհանուր առմամբ, հետընտրական առաջին օրերին քաղաքական ուժերին նշանային բնութագրիչներով անդրադարձների տեսակարար կշիռը փաստորեն պահպանվում էր նոյն մակարդակի վրա, ինչ եւ նախընտրական քարոզության ժամանակաշրջանում (հետազոտված բոլոր ալիքների անդրադարձների հանրագումարված թվի 5.4 %):


**ՄՅՈՒՏՆԵՐԻՑ ԱՌԱՎԵԼ ԾԱՎԱԼՈՒՆ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ՝ մայիսի 5-19-ը,** հետազոտված հեռարձակվողների եթերում արտահայտվել են պետական, պաշտոնական մարմինների ներկայացուցիչները, որոնց հաջորդում է քաղաքական ընդդիմությունը եւապա, մեծտարբերությամբ, տեղական դիտորդներն ու կառավարող կողալիցիայի ներկայացուցիչները: Միջազգային դիտորդներն ու կազմակերպությունները սահմանափակվել են ընտրությունների մասին միանվագ կարծիք հայտնելով, իսկ հետընտրական սոցիոլոգիական հարցումների մասին տեղեկություններ ընդհանրապես չկային:

Հետազոտված հեռարձակվողների եթերում հայ հանրության տարբեր կատեգորիաների կողմից ընտրությունների գնահատականը հիմնականում բացասական էր: Գնահատականների դրական հաշվեկշիռ գրանցվել է միայն կառավարող կողալիցիայի ներկայացուցիչների կարծիքներում, ընդ որում՝ անգամ «Օրինաց երկիր» կողալիցիոն կուսակցությունն է փաստել վախի մթնոլորտը եւ «թաղային հեղինակությունների» ներգրավվածությունը ընտրական գործընթացում: Բացասականի ամենամեծ ինտենսիվությունը (տվյալ կատեգորիայի նյութերի երկու երրորդում) արձանագրվել է լրագրողների խոսքում, որոնք նշել են բազմաթիվ թերություններ ու խախտումներ: Ընտրություններն ինտենսիվորեն քննադատել է քաղաքական ընդդիմությունը՝ նրա ներկայացուցիչների կարծիքների կեսից ավելին բացասական վերաբերմունք էր պարունակում ընտրարշավի նկատմամբ: Կեսից փոքր ինչ նվազ է բացասականի տեսակարար կշիռը տեղացի դիտորդների գնահատականներում: Խոսվել է ընտրողների կաշառման, վարչական ռեսուրսի օգտագործման, քաղաքացիների վրա ձնշում գործադրելու գանազան ձեւերի մասին: Նվազ կտրուկ է եղել փորձագիտական հանրության գնահատականը, սակայն դա որոշակի առումով կապված էր այն բանի հետ, որ առավել քննադատաբար

արտահայտվելու հակված այդ կատեգորիայի ներկայացուցիչներին հետազոտված մի շաբթ հեռարձակվողների կողմից նման հնարավորություն պարզապես չի ընձեռվել: Բացի կառավարող կոալիցիայի ներկայացուցիչներից՝ ընտրությունների դրական գնահատական առկա է եղել հայ հանրության միայն երկու կատեգորիաների հազվադեպ արտահայտություններում:

Նույնիսկ պաշտոնական մարմինների ներկայացուցիչների արտահայտություններում էր ընտրությունների բացասական գնահատականը գերակշռություն դրականին: Դա, ամենից առաջ, բացատրվում է այն հանգամանքով, որ պաշտոնատար անձինք ստիպված էին եթերում հաղորդել խախտումների վերաբերյալ ահազանգերի մասին: Եթերում հեռարձակվող շարքային քաղաքացիների կարծիքները նույնպես վկայում էին այն մասին, որ ընտրությունների նկատմամբ քննադատական վերաբերմունքը գերակշռություն էր դրանցով բավարարված լինելուն:


## **ԳՐԱՖԻԿ 1. Հանրության տարբեր կատեգորիաների կողմից Երեւանի ավագանու ընտրությունների բացասական եւ դրական գնահատականների բաշխումը**



1. Պետական, պաշտոնական մարմիններ
2. Կառավարող կոալիցիա (ՀՀԿ եւ/կամ ՕԵԿ)
3. Քաղաքական ընդդիմություն
4. Միջազգային/օտարերկրյա դիտորդներ/կառույցներ
5. Տեղական դիտորդներ
6. Փորձագիտական հանրություն
7. Vox populi (քաղաքացիների կարծիք)
8. Խմբագրություն, լրագրող


Հետազոտման առարկա դարձած հաղորդումներում հետընտրական իրավիճակն առավել ակտիվ է լուսաբանել «Երկիր Մեդիան», որին հաջորդում է «Արմնյուզը»: Հետընտրական իրավիճակին մոտավորապես հավասար եթերաժամանակ են հատկացրել երկու առաջատարներին հետեւող «Արմռադիոն» ու «Կենտրոնը»: Իսկ թեմայի նկատմամբ ամենաքիչ հետաքրքրությունը դրսեւորել են ՀՀ-ը եւ Հանրային ռադիոն: Ընդսմին, հետազոտված այլքների կողմից հետընտրական իրավիճակի լուսաբանման ակտիվությունն էապես նվազել է պաշտոնական արդյունքները մայիսի 9-ին հայտարարելուց հետո:

## ԳՐԱՖԻԿ 2. Հետընտրական իրավիճակին հետազոտված հեռարձակվողների ուշադրության աստիճանը (Եթերաժամանակի ծավալով)



Ընտրությունների նկատմամբ հասարակայնության բացասական վերաբերմունքին ամենամեծ ուշադրությունը դարձրել են «Կենտրոն», «Երկիր Մեդիան» ու «Արմռադիոն», ամենաքիչը՝ Հ1-ը: Հատկանշական է, որ վերջինիս եթերում փորձագիտական հանրության ներկայացուցիչների կողմից ոչ մի քննադատական արտահայտություն չի հնչել: Նույնը կարելի է ասելնաեւ «Արմենյուզի» մասին, որտեղ, ինչպես եւ Հ2-ում ու Հանրային ռադիոյում, ընտրությունների գնահատականների բացասական հաշվեկշիռը հիմնականում ծեւավորվել է քաղաքական ընդդիմությանը խոսք տրամադրելու հաշվին:

## ԳՐԱՖԻԿ 3. Երեւանի ավագանու ընտրությունների բացասական եւ դրական գնահատականների բաշխումը հետազոտված հեռարձակվողների միջեւ



1. Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ալիք (Ց1)
2. «Արմնյուզ»
3. «Երկիր Մեդիա»
4. «Կենտրոն»
5. Հայկական երկրորդ հեռուստաալիք (Ց2)
6. Հայաստանի հանրային ռադիո
7. «Արմռադիո FM 107»

ԱՍՓՈՓԵԼՈՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ հարկ է ընդգծել, որ «լուսայն օրերի» նորմերի պահպանմանն առնչվող խնդիրները չեն կարող վերացվել առանց ընտրական օրենսդրությունում «քարոզչություն» հասկացության կոնկրետացման։ Բացի դրանից, հեռարձակվող ՁԼՄ-ներում արդյունավետ հետընտրական դիսկուրսի բացակայության հետեւանքով ապագայի համար դասեր քաղելը շարունակում է խնդրահարուց մնալ։

# **ՀԵՏԱՎՈՏՎԱԾ ՉԼՍ-ՆԵՐԻ ՃԱՆԿԵ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ**

## ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ՉԼՄ-ՆԵՐԻ ՑԱՆԿՅ ԵՎ ՀԱՄԱՌԱՍ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՇՈՒՏԱԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ**  
(Հ1) - 2001 թվականին հիմնադրված Հանրային հեռուստառադիոընկերության բաղկացուցիչ մասն է: Ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Հ1-ի օրական հեռարձակման տետղությունն է՝ 24 ժամ: Հեռուստապայիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաեւ արտերկրում:

**Խորհրդարանական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին փուլում** (նախընտրական քարոզության նախաշեմ՝ 2011թ. նոյեմբերի 16 - դեկտեմբերի 15 եւ 2012թ. մարտի 1-31) հետազոտության առարկա են եղել «Առաջին լրատվական» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (21.00), «Հարցազրոյց» բանավիճային հաղորդումը (Երկուշաբթի-ուրբաթ՝ 23.15): «Հարցազրոյցի» մարտի 27-ի եւ 28-ի հաղորդումները չեն հետազոտվել, քանի որ ֆուտբոլային խաղերի ուղիղ հեռարձակման կապակցությամբ հեռարձակվել են 01.00-ից՝ մշտադիտարկման ժամանակահատվածի ավարտից հետո: **Երկրորդ փուլում** (նախընտրական քարոզություն, 2012թ. ապրիլի 8-մայիսի 4) հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները:

**Նախազահական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին** (նախընտրական քարոզության նախաշեմ՝ 2012թ. հոկտեմբերի 1 - դեկտեմբերի 15) եւ **Երրորդ** (նախընտրական քարոզություն՝ 2013թ. հունվարի 21 - փետրվարի 16) **փուլերում** հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (թեկնածուների պաշտոնական գրանցման եւ նախընտրական քարոզության սկզբի միջեւ ընկած ժամանակաշրջան՝ 2013թ. հունվարի 14-20) հետազոտության առարկա են եղել «Առաջին լրատվական» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (21.00), «Հարցազրոյց» բանավիճային հաղորդումը (Երկուշաբթի-ուրբաթ՝ 23.40):

**Երեսանի ավագանու ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին փուլում** (նախընտրական քարոզություն՝ 2013թ. ապրիլի 7 - մայիսի 3) հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (2013թ. մայիսի 4-ի 00.00-ից մինչեւ մայիսի 5-ի 20.00-ն՝ ժամանակաշրջան, երբ ընտրական օրենսդրությամբ քարոզությունն արգելված է) եւ **քվեարկությանը հաջորդած օրերին** (2013թ. մայիսի 5-ի 20.00-ից մինչեւ մայիսի 7-ի 01.00-ն) հետազոտվել է ամբողջ եթերը լրիվ ծավալով: **Երրորդ փուլում** (2013թ. մայիսի 5-ի 20.00-ից մինչեւ մայիսի 19-ը՝ հետընտրական ժամանակաշրջան) հետազոտման առարկա են եղել «Առաջին լրատվական» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (21.00), «Հարցազրոյց» բանավիճային հաղորդումը (Երկուշաբթի-ուրբաթ՝ 23.40):

**«ՃՈՂԱԿԱՅ»** - Հանրային հեռուստառադիոընկերության բաղկացուցիչ մասն

# ՀԵՏԱՊՈՏՎԱԾ ՉԼՄ-ՆԵՐԻ ԺԱՆԿԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Է: Ղեկավար մարմինը՝ Յանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Սկզբում՝ 2001 թվականին, ստեղծվել է որպես մասնավոր հեռուստաընկերություն, հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: 2011 թվականի փետրվարի 24-ին «Յնգետոր-մշակութային հանրային հեռուստաաընկերություն» ՓԲԸ ստեղծելու մասին ՀՀ կառավարության որոշումը հաստատել է հանրային հաճախականության վրա հեռարձակվելու «Ծողակաթի» իրավունքը: «Ծողակաթի» օրական հեռարձակման տետրությունն է՝ 18 ժամ: Յեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաեւ արտերկրում՝ 31-ի հաղորդացանցում:

**Խորհրդարանական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին փուլում** (նախընտրական քարոզչության նախաշեմ՝ 2011թ. նոյեմբերի 16 - դեկտեմբերի 15 եւ 2012թ. մարտի 1-31) հետազոտության առարկա են եղել տեղեկատվական/տեղեկատվական-վերլուծական «Եկեղեցական կյանք» (Երկուշաբթի, ուրբաթ՝ 21.30), «Մշակութային ազդագիր» (Երկուշաբթի, 22.30) «Զայնագիր» (շաբաթ՝ 22.30) հաղորդումները, «3-րդ հազարամյակ» (հինգշաբթի՝ 22.00), «Թեմա» (ուրբաթ՝ 21.50) եւ «Օր վեցերորդ» (շաբաթ՝ 22.00) բանավիճային հաղորդումները: **Երկրորդ փուլում** (նախընտրական քարոզչություն, 2012թ. ապրիլի 8 - մայիսի 4) հետազոտվել են Երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները:

**«ԱՐՄԵՆԻԱ»**-մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998 թվականին: Օրական հեռարձակման տետրությունն է՝ 24 ժամ: Յեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաեւ արտերկրում:

**Խորհրդարանական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին փուլում** (նախընտրական քարոզչության նախաշեմ՝ 2011թ. նոյեմբերի 16 - դեկտեմբերի 15 եւ 2012թ. մարտի 1-31) հետազոտության առարկա են եղել «Ժամ» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (Երկուշաբթի-շաբաթ՝ 19.30, կիրակի՝ 20.00, մարտի 19-ից Երկուշաբթի-կիրակի 20.00՝ հիմնական թողարկման ժամանակի փոփոխման կապակցությամբ): **Երկրորդ փուլում** (նախընտրական քարոզչություն, 2012թ. ապրիլի 8 - մայիսի 4) հետազոտվել են Երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները:

**Նախագահական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին** (նախընտրական քարոզչության նախաշեմ՝ 2012թ. հոկտեմբերի 1-դեկտեմբերի 15) եւ **Երրորդ** (նախընտրական քարոզչություն՝ 2013թ. հունվարի 21 - փետրվարի 16) **փուլերում** հետազոտվել են Երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (թեկնածուների պաշտոնական գրանցման եւ նախընտրական քարոզչության սկզբի միջեւ ընկած ժամանակաշրջան՝ 2013թ. հունվարի 14-20) հետազոտության առարկա են եղել «Ժամ» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (20.00), «Կենդանի մատյան» (Երկուշաբթի-ուրբաթ՝ 24.00) եւ «Ռ-էվոլյուցիա» (կիրակի՝ 23.00) բանավիճային հաղորդումները:

**«ԱՐՄԵՅՈՒԶ»** - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2003 թվականին: Օրական հեռարձակման տետրությունն է՝ 24 ժամ: Վերահեռարձակում է նաեւ «Եվրոնյուզ» միջազգային լրատվական ալիքի հաղորդումները:

**Խորհրդարանական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին փուլում** (Նախընտրական քարոզության նախաշեմ՝ 2012թ. մարտի 1-31) հետազոտության առարկա են եղել «Լուրեր» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (20.00, իսկ մարտի 18-ից հետազոտվել է 23.00-ի հիմնական թողարկումը), «Բանաձեւ» բանավիճային հաղորդումը (Երկուշաբթի-ուրբաթ՝ 22.00): **Երկրորդ փուլում** (Նախընտրական քարոզություն, 2012թ. ապրիլի 8-մայիսի 4) հետազոտվել են Երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները:

**Նախագահական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին** (Նախընտրական քարոզության նախաշեմ՝ 2012թ. հոկտեմբերի 1-դեկտեմբերի 15) եւ **Երրորդ** (Նախընտրական քարոզություն՝ 2013թ. հունվարի 21 - փետրվարի 16) **փուլերում** հետազոտվել են Երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (թեկնածուների պաշտոնական գրանցման եւ Նախընտրական քարոզության սկզբի միջեւ ընկած ժամանակաշրջան՝ 2013թ. հունվարի 14-20) հետազոտության առարկա են եղել «Լուրեր» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (19.00), «Բանաձեւ» (Երկուշաբթի-ուրբաթ՝ 22.00), «Մեր քվեարկությունից առաջ» (շաբաթ՝ 19.40) եւ «Երական քաղաքականություն» (կիրակի՝ 19.30) բանավիճային հաղորդումները:

**Երեսանի ավագանու ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին փուլում** (Նախընտրական քարոզություն՝ 2013թ. ապրիլի 7 - մայիսի 3) հետազոտվել են Երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (2013թ. մայիսի 4-ի 00.00-ից մինչեւ մայիսի 5-ի 20.00-ն՝ ժամանակաշրջան, Երբ ընտրական օրենսդրությամբ քարոզությունն արգելված է) եւ **քվեարկությանը հաջորդած օրերին** (2013թ. մայիսի 5-ի 20.00-ից մինչեւ մայիսի 7-ի 01.00-ն) հետազոտվել է ամբողջ Եթերը լրիվ ծավալով: **Երրորդ փուլում** (2013թ. մայիսի 5-ի 20.00-ից մինչեւ մայիսի 19-ը՝ հետընտրական ժամանակաշրջան) հետազոտման առարկա են եղել «Լուրեր» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումները (19.00-ին եւ 00.00-ին, իսկ մայիսի 5-ին՝ 22.00-ին), «Բանաձեւ» (Երկուշաբթի-ուրբաթ՝ 20.00), «Բրիֆինգ» (շաբաթ՝ 19.30) եւ «Երական քաղաքականություն» (կիրակի՝ 19.30) բանավիճային հաղորդումները:

**«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ»** - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2004 թվականին: Օրական հեռարձակման տետրությունն է՝ 24 ժամ: Նեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում:

**Խորհրդարանական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին փուլում** (Նախընտրական քարոզության նախաշեմ՝ 2011թ. նոյեմբերի 16 - դեկտեմբերի 15 եւ 2012թ. մարտի 1-31) հետազոտության առարկա են եղել «Երկիրն այսօր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (Երկուշաբթի-շաբաթ՝ 22.00) եւ «Երկրի շաբաթը» կիրակնօրյա լրատվական-վերլուծական ծրագիրը (22.00), «Երկրի հարցը» բանավիճային հաղորդումը (Երկուշաբթի-ուրբաթ՝ 22.30): Մարտի 6-ին հետազոտման առարկա են եղել «Երկիրն այսօրի» 20.00-ի լուրերը՝ «Երկրի հարցը» հաղորդման Երկժամյա հատուկ թողարկման հեռարձակման կապակցությամբ, որը Եթեր է տրվել 21.30-ին: **Երկրորդ փուլում** (Նախընտրական

# ՀԵՏԱՊՈՏՎԱԾ ՉԼՄ-ՆԵՐԻ ԺԱՆԿԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

քարոզչություն, 2012թ. ապրիլի 8 - մայիսի 4) հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները:

**Նախագահական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին** (նախընտրական քարոզչության նախաշեմ՝ 2012թ. հոկտեմբերի 1 - դեկտեմբերի 15) եւ **երրորդ** (նախընտրական քարոզչություն՝ 2013թ. հունվարի 21 - փետրվարի 16) **փուլերում** հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (թեկնածուների պաշտոնական գրանցման եւ նախընտրական քարոզչության սկզբի միջեւ ընկած ժամանակաշրջան՝ 2013թ. հունվարի 14-20) հետազոտության առարկա են եղել «Երևին այսօր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (Երկուշաբթի-շաբաթ՝ 22.30) եւ «Երևի շաբաթը» կիրակնօրյա լրատվական-վերլուծական ծրագիրը (22.30), «Երևի հարցը» (Երկուշաբթի-ուրբաթ՝ 23.10) եւ «Խմբագիր» (կիրակի՝ 21.20) բանավիճային հաղորդումները:

**Երեանի ավագանու ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին փուլում** (նախընտրական քարոզչություն՝ 2013թ. ապրիլի 7 - մայիսի 3) հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (2013թ. մայիսի 4-ի 00.00-ից մինչեւ մայիսի 5-ի 20.00-ն՝ ժամանակաշրջան, երբ ընտրական օրենսդրությամբ քարոզչությունն արգելված է) եւ **քվեարկությանը հաջորդած օրերին** (2013թ. մայիսի 5-ի 20.00-ից մինչեւ մայիսի 7-ի 01.00-ն) հետազոտվել է ամբողջ եթերը լրիվ ծավալով: **Երրորդ փուլում** (2013թ. մայիսի 5-ի 20.00-ից մինչեւ մայիսի 19-ը՝ հետընտրական ժամանակաշրջան) հետազոտման առարկա են եղել «Երևին այսօր» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (20.30) եւ «Երևի շաբաթը» կիրակնօրյա լրատվական-վերլուծական ծրագիրը (22.30), «Երևի հարցը» (Երկուշաբթի-ուրբաթ՝ 23.10), «Բարձրաձայն» (հինգշաբթի՝ 21.45) եւ «Խմբագիր» (կիրակի՝ 21.20) բանավիճային հաղորդումները:

**«ԿԵՆՏՐՈՆ»** - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2004 թվականին: Օրական հեռարձակման տեսողությունն է՝ 24 ժամ:

**Խորհրդարանական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին փուլում** (նախընտրական քարոզչության նախաշեմ՝ 2011թ. նոյեմբերի 16 - դեկտեմբերի 15 եւ 2012թ. մարտի 1-31) հետազոտության առարկա են եղել «Էպիկենտրոն» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (20.30), «Ուրվագիծ» բանավիճային հաղորդումը (Երկուշաբթի-ուրբաթ՝ 21.21): Մարտի 25-ին ֆուտբոլային խաղի ուղիղ հեռարձակման կապակցությամբ «Էպիկենտրոնի» հիմնական թողարկումը հեռարձակվել է 19.40-ին: **Երկրորդ փուլում** (նախընտրական քարոզչություն, 2012թ. ապրիլի 8 - մայիսի 4) հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները:

**Նախագահական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին** (նախընտրական քարոզչության նախաշեմ՝ 2012թ. հոկտեմբերի 1 - դեկտեմբերի 15) եւ **երրորդ** (նախընտրական քարոզչություն՝ 2013թ. հունվարի 21 - փետրվարի 16) **փուլերում** հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (թեկնածուների պաշտոնական գրանցման եւ նախընտրական

քարոզության սկզբի միջեւ ընկած ժամանակաշրջան՝ 2013թ. հունվարի 14-20) հետազոտության առարկա են եղել «Էպիկենտրոն» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (21.30), «Ուրվագիծ» (Երկուշաբթի-հինգշաբթի՝ 22.22) եւ «Հայկական ուրբաթ» (ուրբաթ՝ 22.22) բանավիճային հաղորդումները:

**Երեւանի ավագանու ընտրությունների** ժամանակաշրջանի առաջին փուլում (նախընտրական քարոզություն՝ 2013թ. ապրիլի 7 - մայիսի 3) հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (2013թ. մայիսի 4-ի 00.00-ից մինչեւ մայիսի 5-ի 20.00-ն՝ ժամանակաշրջան, երբ ընտրական օրենսդրությամբ քարոզությունն արգելված է) եւ **քվեարկությանը հաջորդած օրերին** (2013թ. մայիսի 5-ի 20.00-ից մինչեւ մայիսի 7-ի 01.00-ն) հետազոտվել է ամբողջ եթերը լրիվ ծավալով: **Երրորդ փուլում** (2013թ. մայիսի 5-ի 20.00-ից մինչեւ մայիսի 19-ը՝ հետընտրական ժամանակաշրջան) հետազոտման առարկա են եղել «Էպիկենտրոն» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (21.30), «Ուրվագիծ» (Երկուշաբթի-հինգշաբթի՝ 22.22), «Հայկական ուրբաթ» (ուրբաթ՝ 22.22) եւ «Չաբաթօրյակ» (շաբաթ՝ 22.22) բանավիճային հաղորդումները:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ (Հ2)** - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998 թվականին: Օրական հեռարձակման տետղությունն է՝ 18 ժամ:

**Խորհրդարանական ընտրությունների** ժամանակաշրջանի առաջին փուլում (նախընտրական քարոզության նախաշեմ՝ 2011թ. նոյեմբերի 16 - դեկտեմբերի 15 եւ 2012թ. մարտի 1-31) հետազոտության առարկա են եղել «Լրաբեր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (Երկուշաբթի-շաբաթ՝ 23.00), «Չորրորդ ստուդիա/Խոսքի իրավունք» բանավիճային հաղորդումը (Երկուշաբթի-ուրբաթ՝ 20.30): Մարտի 24-ին ֆուտբոլային խաղի ուղիղ հեռարձակման կապակցությամբ «Լրաբերի» հիմնական թողարկումը հեռարձակվել է 23.30-ին: **Երկրորդ փուլում** (նախընտրական քարոզություն, 2012թ. ապրիլի 8 - մայիսի 4) հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները:

**Նախագահական ընտրությունների** ժամանակաշրջանի առաջին (նախընտրական քարոզության նախաշեմ՝ 2012թ. հոկտեմբերի 1 - դեկտեմբերի 15) եւ **Երրորդ** (նախընտրական քարոզություն՝ 2013թ. հունվարի 21 - փետրվարի 16) փուլերում հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (թեկնածուների պաշտոնական գրանցման եւ նախընտրական քարոզության սկզբի միջեւ ընկած ժամանակաշրջան՝ 2013թ. հունվարի 14-20) հետազոտության առարկա են եղել «Լրաբեր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (Երկուշաբթի-շաբաթ՝ 22.00), «Չորրորդ ստուդիա/Խոսքի իրավունք» բանավիճային հաղորդումը (Երկուշաբթի-ուրբաթ՝ 20.30):

**Երեւանի ավագանու ընտրությունների** ժամանակաշրջանի առաջին փուլում (նախընտրական քարոզություն՝ 2013թ. ապրիլի 7 - մայիսի 3) հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (2013թ. մայիսի 4-ի 00.00-ից մինչեւ մայիսի 5-ի 20.00-ն՝ ժամանակաշրջան, երբ

# ՀԵՏԱՊՈՏՎԱԾ ՉԼՍ-ՆԵՐԻ ԺԱՆԿԸ ԵՎ ՀԱՄԱՍՏԱՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ընտրական օրենսդրությամբ քարոզչությունն արգելված է) եւ **քվեարկությանը հաջորդած օրերին** (2013թ. մայիսի 5-ի 20.00-ից մինչեւ մայիսի 7-ի 01.00-ն) հետազոտվել է ամբողջ եթերը լրիվ ծավալով: **Երրորդ փուլում** (2013թ. մայիսի 5-ի 20.00-ից մինչեւ մայիսի 19-ը՝ հետընտրական ժամանակաշրջան) հետազոտման առարկա են եղել «Լրաբեր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 23.00, մայիսի 5-ին՝ 21.00-ին, մայիսի 8-ին՝ 14-ին՝ 22.00-ին), «Չորրորդ ստուդիա/Խոսքի իրավունք» բանավիճային հաղորդումը (երկուշաբթի-ուրբաթ՝ 20.30):

**«ՃԱՆԹ»** - մասնավոր հեռուստաընկերություն: Յիմնադրվել է 1994 թվականին: Օրական հեռարձակման տետրությունն է՝ 24 ժամ: Յեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաեւ արտերկրում:

**Խորհրդարանական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին փուլում** (նախընտրական քարոզչության նախաշեմ՝ 2011թ. նոյեմբերի 16 - դեկտեմբերի 15 եւ 2012թ. մարտի 1-31) հետազոտության առարկա են եղել «Յորիզոն» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 22.00) եւ նրա «Կիրակնօրյա հորիզոն» լրատվական-վերլուծական թողարկումը (22.00), «Յեռանկար» բանավիճային հաղորդումը (երկուշաբթի-չորեքշաբթի՝ 23.30): **Երկրորդ փուլում** (նախընտրական քարոզչություն, 2012թ. ապրիլի 8 - մայիսի 4) հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները:

**Նախագահական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին** (նախընտրական քարոզչության նախաշեմ՝ 2012թ. հոկտեմբերի 1 - դեկտեմբերի 15) եւ **Երրորդ** (նախընտրական քարոզչություն՝ 2013թ. հունվարի 21 - փետրվարի 16) **փուլերում** հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (թեկնածուների պաշտոնական գրանցման եւ նախընտրական քարոզչության սկզբի միջեւ ընկած ժամանակաշրջան՝ 2013թ. հունվարի 14-20) հետազոտության առարկա են եղել «Յորիզոն» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 22.00) եւ նրա «Կիրակնօրյա հորիզոն» լրատվական-վերլուծական թողարկումը (22.00):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈ** - 2001 թվականին ստեղծված Հանրային հեռուստառադիոընկերության բաղկացուցիչ մասն է: Ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Օրական հեռարձակման տետրությունն է՝ 24 ժամ: Ռադիոալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաեւ արտերկրում:

**Խորհրդարանական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին փուլում** (նախընտրական քարոզչության նախաշեմ՝ 2011թ. նոյեմբերի 16 - դեկտեմբերի 15 եւ 2012թ. մարտի 1-31) հետազոտության առարկա է եղել «Ռադիոլուր» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (18.00): **Երկրորդ փուլում** (նախընտրական քարոզչություն, 2012թ. ապրիլի 8 - մայիսի 4) հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները:

**Նախագահական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին** (նախընտրական քարոզչության նախաշեմ՝ 2012թ. հոկտեմբերի 1 - դեկտեմբերի 15) եւ երրորդ (նախընտրական քարոզչություն՝ 2013թ. հունվարի 21 - փետրվարի 16) փուլում հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (թեկնածուների պաշտոնական գրանցման եւ նախընտրական քարոզչության սկզբի միջեւ ընկած ժամանակաշրջան՝ 2013թ. հունվարի 14-20) հետազոտության առարկա է եղել «Ռադիոլուր» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (18.00):

**Երեսանի ավագանու ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին** փուլում (նախընտրական քարոզչություն՝ 2013թ. ապրիլի 7 - մայիսի 3) հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (2013թ. մայիսի 4-ի 00.00-ից մինչեւ մայիսի 5-ի 20.00-ն՝ ժամանակաշրջան, երբ ընտրական օրենսդրությամբ քարոզչությունն արգելված է) եւ **քվեարկությանը հաջորդած օրերին** (2013թ. մայիսի 5-ի 20.00-ից մինչեւ մայիսի 7-ի 01.00-ն) հետազոտվել է ամբողջ եթերը լրիվ ծավալով: **Երրորդ փուլում** (2013թ. մայիսի 5-ի 20.00-ից մինչեւ մայիսի 19-ը՝ հետընտրական ժամանակաշրջան) հետազոտության առարկա է եղել «Ռադիոլուր» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (18.00, իսկ մայիսի 5-ին՝ 20.00):

**«ԱՐՄՈԱՐԻՈ ՓՄ 107»** - մասնավոր ռադիոընկերություն: Յիմնադրվել է 2002 թվականին: Օրական հեռարձակման տետրությունն է՝ 24 ժամ:

**Նախագահական ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին** (նախընտրական քարոզչության նախաշեմ՝ 2012թ. հոկտեմբերի 1 - դեկտեմբերի 15) եւ երրորդ (նախընտրական քարոզչություն՝ 2013թ. հունվարի 21 - փետրվարի 16) փուլում հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (թեկնածուների պաշտոնական գրանցման եւ նախընտրական քարոզչության սկզբի միջեւ ընկած ժամանակաշրջան՝ 2013թ. հունվարի 14-20) հետազոտության առարկա են եղել «Լուրեր» ամենօրյա լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (18.00), «Վերլուծական էջ Հրանտ Մելիք-Շահնազարյանի հետ» (երկուշաբթի-շաբաթ՝ 19.00) բանավիճային հաղորդումը:

**Երեսանի ավագանու ընտրությունների** ժամանակաշրջանի **առաջին** փուլում (նախընտրական քարոզչություն՝ 2013թ. ապրիլի 7 - մայիսի 3) հետազոտվել են երեկոյան փրայմ-թայմի (18.00-01.00) բոլոր հաղորդումները: **Երկրորդ փուլում** (2013թ. մայիսի 4-ի 00.00-ից մինչեւ մայիսի 5-ի 20.00-ն՝ ժամանակաշրջան, երբ ընտրական օրենսդրությամբ քարոզչությունն արգելված է) եւ **քվեարկությանը հաջորդած օրերին** (2013թ. մայիսի 5-ի 20.00-ից մինչեւ մայիսի 7-ի 01.00-ն) հետազոտվել է ամբողջ եթերը լրիվ ծավալով: **Երրորդ փուլում** (2013թ. մայիսի 5-ի 20.00-ից մինչեւ մայիսի 19-ը՝ հետընտրական ժամանակաշրջան) հետազոտության առարկա են եղել «Լուրեր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 18.00), «Ռադիոբրիֆինգ» (երկուշաբթի-շաբաթ՝ 23.00) բանավիճային հաղորդումը:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**Հավելված 1.**  
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ**  
**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ**  
**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

## **2012թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Մշտադիտարկումն իրականացվում էր երկու փուլով. **առաջին փուլն** ընդգրկում էր 2011թ. նոյեմբերի 16 - դեկտեմբերի 15 եւ 2012թ. մարտի 1-31-ն ընկած ժամանակահատվածը (նախընտրական քարոզության նախաշեմ), **երկրորդ փուլը՝** 2012թ. ապրիլի 8-ից մայիսի 4-ը (նախընտրական քարոզության ժամանակաշրջանը):

### **ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆ ԸՆԴԳՐԿԵԼ Է 9 ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ.**

7 համազգային հեռուստաալիք՝ Յայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ալիք (Յ1), «Ճողակաթ» (ընդգրկված է Յանրային հեռուստառադիոընկերության համակարգում), «Արմենիա», «Երկիր Մեղիա», «Կենտրոն», Յայկական երկրորդ հեռուստաալիք (Յ2), «Ճանթ»,

1 մայրաքաղաքային հեռուստաալիք՝ «Արմնյուզ» (հայաստանյան հեռուստաալիքներից միակը, որն ունի լրատվական-վերլուծական ու միջազգային ուղղվածություն): Մշտադիտարկման սկզբնական փուլում (2011թ. նոյեմբերի 16 - դեկտեմբերի 15) «Արմնյուզը» հետազոտվող ԶԼՄ-ների թվում չէր,

1 համազգային ռադիոալիք՝ Յայաստանի հանրային ռադիո:

### **ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՃԵՄ 2011թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 16 - ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 ԵՎ 2012թ. ՄԱՐՏԻ 1-31**

**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ** էին քանակական եւ որակական տվյալների վերլուծության միջոցով պարզել եւ սահմանել.

- ՀՀ Ազգային ժողովի առաջիկա՝ 2012 թվականի ընտրությունների նկատմամբ Յայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ների ուղարկության աստիճանը,

- խորհրդարանական ընտրությունների նախաշեմին Յայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ները որքան ազատ եւ անկողմնակալ են տեղեկություններ տրամադրում ընտրազանգվածին՝ քաղաքական կուսակցությունների/շարժումների մասին, ապահովում նրանց մուտքը եթեր՝ իրենց հայացքների, կարծիքների արտահայտման համար,

- որքանով է քաղաքական կուսակցությունների/շարժումների եւ քաղաքական գործիչների (առաջիկա ընտրարշավի հավանական մասնակիցների) գործունեության լուսաբանումը համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին:

Մշտադիտարկման վերոթվարկյալ խնդիրների իրականացման համար կիրառվել են դիտարկման քանակական եւ որակական մեթոդաբանություններ:

**ՔԱՆԱԿԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ** ներառում էր հեռարձակվող ԶԼՄ-ների բուն նյութերի հաշվարկն ու չափումները (քանակական դիտարկման իրականացման մեթոդաբանությունը՝ տես ստորեւ):

**ՈՐԱԿԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆ** իրենից ներկայացնում էր ստացված քանակական տվյալների վերլուծության եւ դիտարկման ժամանակահատվածում ԶԼՄ-ներում իրավիճակի գնահատման համադրություն, որը հիմնվում էր ԶԼՄ-ների, քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ փորձագիտական հանրության ներկայացուցիչների հետ հարցազրույցների, ինչպես նաև ԶԼՄ-ներում ընտրարշավի լուսաբանմանը նվիրված հրապարակումների վերլուծության, նախընտրական շրջանում ԶԼՄ-ների գործունեության վերաբերյալ կուսակցությունների ներկայացուցիչների եւ քաղաքական գործիչների հայտարարությունների ուսումնասիրման վրա:

**ՎԵՐՈՆՇՅԱԼ ՀԵՌՈՒՍՏԱՌՈՋԻՌԱԼԻՔՆԵՐՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՆ ԵՆԹԱՐԿՎԵԼ** երեկոյան փրայմ-թայմին (**18.00-01.00**) հեռարձակվող լրատվական ծրագրի հիմնական թողարկումը եւ հիմնական հասարակական-քաղաքական/քանակիճային հաղորդումը:

**ՄՃՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ** են եղել բոլոր այն հեռուստառադիոնյութերը, որոնցում անդրադարձ կար կուսակցություններին (շարժումներին)/նրանց դեկավարներին/ներկայացուցիչներին:

## ՄՃՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I. Հետազոտության հիմնական միավորը **հեռուստա- եւ ռադիոնյութն է:**

**Հեռուստա- եւ ռադիոնյութ ասելով հասկանում ենք.**

Եթերի՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեռավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

**ա.** լրատվական ծրագրի առանձին սյուժեն,

**բ.** հաղորդավարական տեքստով ընթերցվող առանձին տեղեկատվությունը,

**գ.** հաղորդման՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեռավորմամբ (միջարկում, բյում եւ այլն) առանձնացված մասը (բաժինը, սյուժեն), որն անդրադառնում է տարբեր թեմաների/խնդիրների,

**դ.** սյուժեների ծանուցումները (անոնսները) դիտարկվել են իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում են,

**ե.** հեռուստա- եւ ռադիոնյութեին (ռեպորտաժին եւ այլն) նախորդող հաղորդավարական տեքստը դիտարկվել է իբրեւ այդ սյուժեի (ռեպորտաժի եւ այլն) մաս:

Ընդունում:

- **Լրատվական ծրագրերը** բաժանվել են սյուժեների, որոնցից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ,

- Հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները դիտարկվել են հետեւյալ կերպ.

1. Եթե հաղորդումն ամբողջովին նվիրված էր առանձին թեմայի/բանավեճի, ապա այն դիտարկվել է որպես մեկ ինքնուրույն նյութ,

2. Եթե հաղորդումը կառուցված էր խճանկարային սկզբունքով, այն է՝ բաժանված էր ինքնուրույն թեմատիկ բաժինների, ապա այդ բաժիններից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ:

**II. Խեօստառադիոալիքի երեկոյան փրայմ-թայմին (**18.00-01.00**) հետազոտվել են լրատվական ծրագրի հիմնական թողարկման եւ հիմնական հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդման բոլոր այն հեօստառադիոնյութերը, որոնցում անդրադարձ կար կուսակցություններին (շարժումներին)/նրանց դեկավարներին/ներկայացուցիչներին: Առեւտրային/քաղաքական/սոցիալական գովազդի եւ հայտարարությունների ներծրագրային բաժինները դիտարկման ենթակա չեն: Վազող տողը եւս դիտարկման ենթակա չէր:**

**III. Մշտադիտարկման ընթացքում պարզվել եւ արձանագրվել են.**

**1. Խեօստառադիոնյութերում կուսակցություններին (շարժումներին)/նրանց դեկավարներին/ներկայացուցիչներին անդրադարձների քանակն ու ձեւը**

Մշտադիտարկողները պարզել եւ համապատասխան սյունակներում արձանագրել են հեօստառադիոնյութերում կուսակցություններին (շարժումներին)/նրանց դեկավարներին/ներկայացուցիչներին անդրադարձների առկայությունն ու ձեւը:

Կուսակցություններին (շարժումներին)/նրանց դեկավարներին/ներկայացուցիչներին անդրադարձների ձեւերը տարբերակվել են հետեւյալ կերպ.

**ա. Կուսակցություններին (շարժումներին)/նրանց դեկավարներին/ներկայացուցիչներին ամբողջությամբ նվիրված նյութ:**

Նյութը համարվում էր կուսակցությանը (շարժմանը) ամբողջությամբ նվիրված, եթե անգամ նրանում կար անդրադարձ մեկ այլ կուսակցության/շարժման, կամ էլ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի/թեմաների, բայց այդ անդրադարձը **ածանցյալ** բնույթ ուներ: Ընդ որում, եթե նման նյութում կար անդրադարձ (ածանցյալ բնույթի) մեկ այլ կուսակցության (շարժման), ապա տվյալ կուսակցությունը (շարժումը) նույնականացնելու համապատասխան սյունակում՝ կախված նրան անդրադարձի ձեւից (մասնակի կամ հիշատակում):

**բ. Կուսակցությանը (շարժմանը)/նրանց դեկավարներին/ներկայացուցիչներին մասնակի նվիրված նյութ:**

Նյութը համարվում էր կուսակցությանը (շարժմանը) մասնակի նվիրված, եթե նրանում **հավասարապես** կար անդրադարձ մեկ այլ կուսակցության (շարժման), կամ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի/թեմաների: Ընդսմին,

Եթե նման նյութում հավասարապես առկա էին անդրադարձներ երկու եւ ավելի կուսակցությունների (շարժումների), ապա այդ կուսակցություններից (շարժումներից) յուրաքանչյուրը նշվում էր «մասնակի» սյունակում:

**գ. Նյութեր, որոնցում **հիշատակվում էին կուսակցությունները** (շարժումները)/  
նրանց ղեկավարները/ներկայացուցիչները:**

Հիշատակում էին համարվում այն դեպքերը, երբ նյութում կուսակցությունը (շարժումը)/նրա ղեկավարները/ներկայացուցիչները պարզապես անվանվում էին, բայց նրանց մասին լրացուցիչ տեղեկություն, բնութագրություն չէր տրվում:

Որպես հիշատակում են արձանագրվել նաեւ այն նյութերը, որոնցում արծարծվել է արտասահմանյան այն կուսակցության գործունեությունը, որը ընդհանուր ծագում եւ պատմություն ունի դիտարկման առարկա հանդիսացած համանուն կուսակցության հետ, բայց միենապ ժամանակ ոչինչ չի ասվել հայաստանյան համանուն կուսակցության հետ արտասահմանյան այդ կուսակցության կապի մասին:

**Եթե կուսակցության (շարժման) ղեկավարը(ները)/ներկայացուցիչը(ները) հանդես էր գալիս իբրեւ իր ոչ կուսակցական պաշտոնական կամ մասնագիտական եւ այլ պարտականությունները կատարող անձ, եւ նրա կուսակցական պատկանելությունը չէր ընդգծվում, ապա նրան անդրադարձ չէր արձանագրվում:**

Հայաստանում ներկայիս կառավարող կուսակցիային ցանկացած անդրադարձ, անկախ այն բանից՝ նյութում բացահայտվել են, թե ոչ կուսակցիայում ընդգրկված կուսակցությունները, դիտարկվել է որպես անդրադարձ երեք կուսակցիոն կուսակցություններին՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությանը, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը եւ «Օրինաց երկիր» կուսակցությանը, հետեւաբար՝ հետազոտվել է վերոթվարկյալ եւ ներքոթվարկյալ բոլոր կատեգորիաներով (անդրադարձի ձեւն ու բնույթը, եթերաժամանակը):

Ցուրաքանչյուր նյութում արձանագրվում էր կուսակցության (շարժման)/նրա ղեկավարների/ներկայացուցիչների միայն մեկ անդրադարձ եւ նրա միայն մեկ ձեւ:

Այս կատեգորիաներում հաշվարկը կատարվում էր **միավորներով**:

**2. Կուսակցություններին (շարժումներին)/նրանց ղեկավարներին/  
ներկայացուցիչներին անդրադարձների բնույթը հեռուստառադիոնյութերում**

Մշտադիտարկողները պարզել եւ համապատասխան սյունակում արձանագրել են հեռուստառադիոնյութում կուսակցության (շարժման)/նրա ղեկավարների/ներկայացուցիչների անդրադարձների բնույթը՝ **դրական (+), բացասական (-) կամ չեզոք (0)**:

Նշանային (դրական, բացասական) անդրադարձներ ասելով հասկացվում էին հրապարակումներում առկա այն անդրադարձները, որոնք լսարանի մոտ կուսակցության/շարժման կամ նրա ղեկավարների/ներկայացուցիչների մասին

միանշանակ դրական կամ բացասական ընդհանուր տպավորություն էին թողնում: Այնտեղ, ուր նման միանշանակություն չկար, անդրադարձն արձանագրվում էր իբրև չեզոք: Մշտադիտարկողի բոլոր կասկածները նույնպես մեկնաբանվում էին հօգուտ անդրադարձը չեզոք հաշվառելուն:

Բացի այդ, եթե նյութում հաղորդվում էր այն մասին, որ որեւէ անձ/կազմակերպություն հրապարակայնորեն հայտարարել է առաջիկա ընտրություններում այս կամ այն կուսակցությանը/շարժմանը սատարելու/չսատարելու մասին, ապա վերջինիս անդրադարձն արձանագրվում էր որպես համապատասխանաբար դրական/բացասական:

Յուրաքանչյուր նյութում արձանագրվում էր յուրաքանչյուր կուսակցության/շարժման/նրա դեկավարների/ներկայացուցիչների միայն մեկ բնորոշիչ նշան (+, - կամ 0):

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվում էր **միավորներով**:

### **3. Յեռուստառադի՛ոնյութերում կուսակցություններին (շարժումներին)/նրանց դեկավարներին/ներկայացուցիչներին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված եթերաժամանակը**

Եթե նյութն ամբողջովին կամ մասնակի էր նվիրված կուսակցությանը (շարժմանը), ապա դիտարկողները պարզել եւ արձանագրել են այն **եթերաժամանակը**, որը տրամադրվել է կուսակցություններին (շարժումներին)/նրանց դեկավարներին/ներկայացուցիչներին՝ իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու, ինչպես նաև այլ անձանց՝ նրանց մասին իրենց դատողություններն ու պատմությունները ներկայացնելու համար:

Կուսակցություններին (շարժումներին)/նրանց դեկավարներին/ներկայացուցիչներին իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու կամ նրանց մասին այլոց կողմից դատողություններ անելու կամ պատմելու համար հատկացված եթերաժամանակի չափումն իրականացվում էր հետեւյալ սկզբունքով.

1) Եթե նյութն ամբողջովին նվիրված էր այս կամ այն կուսակցությանը, ապա դրա ողջ եթերաժամանակը մշտադիտարկողները վերագրել են տվյալ կուսակցությանը,

2) Եթե կուսակցությանը նվիրվում էր նյութի մի մասը միայն, ապա մշտադիտարկողները տվյալ կուսակցությանն են վերագրել եթերաժամանակի միայն այն մասը, որը նվիրված էր նրան,

3) Եթե ամբողջովին կուսակցությանը (անվանենք այն X) նվիրված նյութում բերվում էին մի այլ (X կուսակցությունից տարբեր) կուսակցության (անվանենք այն Y) ասույթներ կամ՝ այլ անձանց դատողություններ, պատմություններ Y-ի մասին (**առանց X-ի հետ համեմատության**), ապա Y-ին է վերագրվել նյութի այդ մասի համապատասխան եթերաժամանակը,

4) Եթե ամբողջովին X կուսակցությանը նվիրված նյութում ներկայացվում էին նրա արտահայտությունները մի այլ՝ Y կուսակցության մասին կամ՝ Y-ի

արտահայտությունները Խ-ի մասին կամ՝ այլ անձանց դատողությունները, պատմությունները Ү-ի մասին՝ **Խ-ի համեմատությամբ**, ապա այդ նյութի եթերաժամանակի **50-ական տոկոսը** մշտադիտարկողները վերագրել են ինչպես Խ-ին, այնպես էլ Ү-ին:

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվել է **Վայրկյաններով**:

#### **IV. «Հյուր ստուդիայում»/թոք-շոու/հարցազրույց ձեւաչափի զանազան ուղղվածության հաղորդումների մասնակիցների արձանագրումը**

Հետազոտվող հեռուստառադիոալիքի երեկոյան փրայմ-թայմին (18.00-01.00.) առանձին ցուցակով մշտադիտարկողները արձանագրել են «**Հյուր ստուդիայում»/թոք-շոու/հարցազրույց ձեւաչափի տարրեր ուղղվածության հաղորդումների (այդ թվում, տվյալ ձեւաչափի առկայության պարագայում, լրատվական ծրագրերի) մասնակիցներին: Ցուցակում նշվել են հաղորդման անվանումը, հրավիրված մասնակիցների անունը (անունները)/պաշտոնը (-ները):**

### **ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԴԱՄԱՐ ԿԱԶՄՎԱԾ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2011թ. նոյեմբերի 16-ից դեկտեմբերի 15-ի մշտադիտարկման առարկա դարձած կուսակցությունների ցանկը բաղկացած էր 14 կուսակցությունից/շարժումից, իսկ **2012թ. մարտի 1-20-ը՝** 13 կուսակցությունից/շարժումից: Դրանց ընտրությունը պայմանավորված էր նրանով, որ այս կուսակցությունները/շարժումներն ընկալվում էին որպես ընտրարշավի հավանական մասնակիցներ: **2012թ. մարտի 21-ից** ցանկում ավելացել է եև մի կուսակցություն՝ «Միավորված հայեր» կուսակցությունը (ՄՀԿ), որը ՀՀ ԱԺ ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցելու նպատակով փաստաթղթեր է ներկայացրել ԿՀՀ՝ գրանցման համար:**

### **2011թ. ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ\***

1.	«Ազատ ժողովրդավարներ»
2.	«Ազգային ժողովրդավարների դաշինք» (ԱԺԴ)
3.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (ԲՀԿ)
4.	«Ժառանգություն»
5.	Ժողովրդական կուսակցություն (ԺԿ)
6.	Հայ ազգային կոնգրես (ՀԱԿ)
7.	Հայ Յեղափոխական դաշնակցություն (ՅՅԴ)
8.	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն (ՀԴԿ)
9.	Հայաստանի կոմունիստական կուսակցություն (ՀԿԿ)
10.	Հայաստանի հանրապետական կուսակցություն (ՀՀԿ)
11.	Հայաստանի մարքսիստական կուսակցություն
12.	Միացյալ աշխատավորական կուսակցություն (ՄԱԿ)
13.	«Նոր ժամանակներ»
14.	«Օրինաց երկիր» (ՕԵԿ)

\*Ցանկը տրվում է հայերեն այբբենական կարգով:

2012թ. ՄԱՐՏԻ 1-31

## ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ\*

1.	«Ազատ ժողովրդավարներ»
2.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (ԲՀԿ)**
3.	«Ժառանգություն»**
4.	Ժողովրդական կուսակցություն (ԺԿ)
5.	Հայ ազգային կրնգրես (ՀԱԿ)**
6.	Հայ Յեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ)**
7.	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն (ՀԴԿ)**
8.	Հայաստանի կոմոնիստական կուսակցություն (ՀԿԿ)**
9.	Հայաստանի հանրապետական կուսակցություն (ՀՀԿ)**
10.	Հայաստանի մարքսիստական կուսակցություն
11.	Միացյալ աշխատավորական կուսակցություն (ՄԱԿ)
12.	«Նոր Ժամանակներ»
13.	«Օրինաց երկիր» (ՕԵԿ)**
14.	«Միավորված հայեր» կուսակցություն (ՄՀԿ) (2012 մարտի 21-ից)**

\*Ցանկը տրվում է հայերեն այբբենական կարգով՝ բացառությամբ ՄՀԿ-ի:

\*\*Սույն կուսակցությունները/դաշինքը ԿՀՀ են ներկայացրել փաստաթղթեր՝ գրանցվելու եւ համամասնական ընտրակարգով խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քանի որ Հայ ազգային կրնգրեսը (ՀԱԿ) հանդիսանում է շարժում, որում ընդգրկված է 15 կուսակցություն եւ 3 հասարակական-քաղաքական նախաձեռնություն (ցանկը կցվում է), ապա.

ա. ՀԱԿ-ի կազմում ընդգրկված որեւէ կուսակցության անդրադարձ պարունակող նյութերը ենթակա են եղել մշտադիտարկման անկախ այն բանից՝ այդ նյութերում ընդգծվել է տվյալ կուսակցության անդամակցությունը ՀԱԿ-ին, թե ոչ,

բ. ՀԱԿ-ում ընդգրկված որեւէ հասարակական-քաղաքական նախաձեռնության անդրադարձ պարունակող նյութերը մշտադիտարկման ենթակա են եղել միայն այն դեպքում, եթե այդ նյութերում ընդգծվել է տվյալ նախաձեռնության անդամակցությունը ՀԱԿ-ին:

**ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ԿԱԶՄԻ ՄԵԶ ՄՏՆՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԵՎ ՆԱԽԱԶԵՇՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ\***

<b>Կուսակցություններ</b>	
1.	«Ազատություն» կուսակցություն
2.	«Ազգային վերածնունդ» կուսակցություն
3.	«Ժողովրդական ուղի» կուսակցություն (ԺՈՒԿ)
4.	«Ժողովրդավարական հայրենիք» կուսակցություն
5.	Հայաստանի ժողովրդական կուսակցություն (ՀԺԿ)
6.	Հայաստանի լիբերալ կուսակցություն
7.	Հայաստանի կանաչների (էկոլոգիական) կուսակցություն
8.	Հայոց համազգային շարժում (ՀՀՇ)
9.	«Հայոց հայրենիք» կուսակցություն
10.	«Հայրենիք եւ պատիվ» կուսակցություն
11.	«Հանրապետություն» կուսակցություն
12.	«Մարդու իրավունքներ 96» կուսակցություն
13.	Պահպանողական կուսակցություն
14.	Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն (ՍԴՀԿ)
15.	«Քրիստոնեա-ժողովրդավարական վերածնունդ» կուսակցություն
 <b>Հասարակական-քաղաքական նախաձեռնություններ</b>	
1.	«Այլընտրանք» հասարակական-քաղաքական նախաձեռնություն
2.	«Ժողովրդի իշխանություն» հասարակական-քաղաքական նախաձեռնություն
3.	«Հայ կամավորականների շարժում» հասարակական-քաղաքական նախաձեռնություն

\*Ցանկը տրվում է հայերեն այրբենական կարգով:

**ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆ  
2012թ. ԱՊՐԻԼԻ 8 - ՄԱՅԻՍԻ 4**

**ՄՃՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԷՒՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՆԿՎ ԱՊՐԵԼԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵԼ.**

- ՀՀ Ազգային ժողովի 2012 թվականի ընտրությունների նկատմամբ Հայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ների ուղարկության աստիճանը,

- հեռարձակվող ԶԼՄ-ները որքան ազատ եւ անկողմնակալ են տեղեկություններ տրամադրել ընտրազանգվածին՝ ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող քաղաքական կուսակցությունների/դաշինքների մասին, ապահովել նրանց մուտքը եթեր՝ իրենց հայացքների, կարծիքների արտահայտման համար,

- հեռարձակվող ԶԼՄ-ները որքանով են կատարել նախընտրական քարոզությունը կարգավորող օրենսդրության դրույթները,

- նախընտրական քարոզության ժամանակաշրջանում հեռարձակվող ԶԼՄ-ների կողմից ընտրությունների լուսաբանումը որքանով է համապատասխանել ՀՀ միջազգային պարտավորություններին:

Մշտադիտարկման վերոթվարկյալ խնդիրների իրականացման համար կիրառվել են դիտարկման քանակական եւ որակական մեթոդաբանություններ:

**ՔԱՆԱԿԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ** ներառում էր հեռարձակվող ԶԼՄ-ների բոլն նյութերի հաշվարկն ու չափումները (քանակական դիտարկման իրականացման մեթոդաբանությունը՝ տես ստորեւ):

**ՈՐԱԿԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆ** իրենից ներկայացնում էր ստացված քանակական տվյալների վերլուծության եւ դիտարկման ժամանակահատվածում ԶԼՄ-ներում իրավիճակի գնահատման համադրում, որը հիմնվում էր ԶԼՄ-ների, քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ փորձագիտական հանրության ներկայացուցիչների հետ հարցագրույցների, ինչպես նաև ԶԼՄ-ներում ընտրարշավի լուսաբանմանը նվիրված հրապարակումների վերլուծության, նախընտրական շրջանում ԶԼՄ-ների գործունեության վերաբերյալ կուսակցությունների ներկայացուցիչների եւ քաղաքական գործիչների հայտարարությունների ուսումնասիրման վրա:

**ՎԵՐՈՆՇՅԱՀ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՌԱՆԵՐՈՒՄ** հետազոտման են ենթարկվել երեկոյան փրայմ-թայմին (**18.00-01.00**) հեռարձակվող բոլոր հաղորդումները, **բացառությամբ** նախընտրական քարոզության բլոկների, ինչպես նաև առեւտրային/սոցիալական գովազդի/հայտարարությունների ու վազող տողի:

**ՄՃՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ** են եղել բոլոր այն հեռուստառադիոնյութերը, որոնցում անդրադարձ կար ՀՀ ԱԺ ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցություններին (դաշինքներին)/նրանց առաջնորդներին/ներկայացուցիչներին:

## ՄՃՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I. Հետազոտության հիմնական միավորը **հեռուստա- եւ ռադիոնյութն է:**

**Հեռուստա- եւ ռադիոնյութ ասելով հասկանում ենք.**

Եթերի՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

**ա.** լրատվական ծրագրի առանձին սյուժեն,

**բ.** հաղորդավարական տեքստով ընթերցվող առանձին տեղեկատվությունը,

**գ.** հաղորդման՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ (միջարկում, բյում եւ այլն) առանձնացված մասը (բաժինը, սյուժեն), որն անդրադառնում է տարբեր թեմաների/խնդիրների,

**դ.** սյուժեների ծանուցումները (անոնսները) դիտարկվել են իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում են,

**ե.** հեռուստա- եւ ռադիոսյուժեին (ռեպորտաժին եւ այլն) նախորդող հաղորդավարական տեքստը դիտարկվել է իբրեւ այդ սյուժեի (ռեպորտաժի եւ այլն) մաս:

Ընդսմին.

- Լրատվական եւ լրատվական-վերլուծական ծրագրերը բաժանվել են սյուժեների, որոնցից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ,
- Քասարակական-քաղաքական/քանավիճային հաղորդումները, ինչպես նաև տարբեր ուղղվածության հաղորդումները դիտարկվել են հետեւյալ կերպ.

1. Եթե հաղորդումն ամբողջովին նվիրված էր առանձին թեմայի, ապա այն դիտարկվել է որպես մեկ ինքնուրույն նյութ,
2. Եթե հաղորդումը կառուցված էր խճանկարային սկզբունքով, այն է՝ բաժանված էր ինքնուրույն թեմատիկ բաժինների, ապա այդ բաժիններից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ:

## II. Մշտադիտարկողներն ամեն օր արձանագրել են հետազոտվող եթերի տեսողությունը (**18.00-ից մինչեւ 01.00**):

Մինչեւ ժամը **18.00-ն** սկսված, սակայն այդ ժամին չափարտված հաղորդումները չեն դիտարկվել. մշտադիտարկումն սկսվել է տվյալ հաղորդումն ավարտվելուց հետո: Մինչեւ **01.00-ն** սկսված, սակայն այդ ժամին չափարտված հաղորդումները դիտարկվել են ամբողջովին՝ մինչեւ դրանց ավարտը:

## Մշտադիտարկման **չեն ենթարկվել**.

- Նախընտրական քարոզչության բլոկները,
- առեւտրային/սոցիալական գովազդը/հայտարարությունները,
- վազող տողը:

## III. Մշտադիտարկման ընթացքում **պարզվել եւ արձանագրվել են**.

### 1. **Քեռուստառադիոնյութերում կուսակցություններին (դաշինքներին)/նրանց առաջնորդներին/ներկայացուցիչներին անդրադարձների քանակն ու ձեւը**

Մշտադիտարկողները պարզել եւ համապատասխան սյունակներում արձանագրել են հեռուստառադիոնյութերում կուսակցությանը (դաշինքին), նրա առաջնորդներին (**ովքեր ընտրացուցակի առաջին երեք տեղերում են**), ներկայացուցիչներին անդրադարձների առկայությունն ու ձեւը:

Կուսակցությանը (դաշինքին)/նրա առաջնորդներին/ներկայացուցիչներին անդրադարձների ձեւերը տարբերակվել են հետեւյալ կերպ.

**ա. Կուսակցությանը (դաշինքին)/նրա առաջնորդներին/ներկայացուցիչներին ամբողջությամբ** նվիրված նյութ:

Նյութը համարվում էր կուսակցությանը (դաշինքին) ամբողջությամբ նվիրված, եթե անգամ նրանում կար անդրադարձ մեկ այլ կուսակցության/դաշինքի, կամ էլ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի/թեմաների, բայց այդ անդրադարձը **աժանցյալ** բնույթ ուներ: Ըստ որում, եթե նման նյութում կար անդրադարձ (ածանցյալ բնույթի) մեկ այլ կուսակցության (դաշինքի), ապա տվյալ կուսակցությունը (դաշինքը) նույնպես նշվում էր համապատասխան սյունակում՝ կախված նրան անդրադարձի ձեւից (մասնակի կամ հիշատակում):

**բ. Կուսակցությանը (դաշինքին)/նրա առաջնորդներին/ներկայացուցիչներին մասնակի նվիրված նյութ:**

Նյութը համարվում էր կուսակցությանը (դաշինքին) մասնակի նվիրված, եթե նրանում **հավասարապես** կար անդրադարձ մեկ այլ կուսակցության (դաշինքի), կամ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի/թեմաների: Ըստսմին, եթե նման նյութում հավասարապես առկա էին անդրադարձներ երկու եւ ավելի կուսակցությունների (դաշինքների), ապա այդ կուսակցություններից (դաշինքներից) յուրաքանչյուրը նշվում էր «մասնակի» սյունակում:

**գ. Նյութեր, որոնցում հիշատակվում էր կուսակցությունը (դաշինքը )/նրա առաջնորդները/ներկայացուցիչները:**

Հիշատակում էին համարվում այն դեպքերը, երբ նյութում կուսակցությունը (դաշինքը)/նրա առաջնորդները/ներկայացուցիչները պարզապես անվանվում էին, բայց նրանց մասին լրացուցիչ տեղեկություն, բնութագրություն չէր տրվում:

Հիշատակում էր համարվում նաեւ հեռուստատեսային կադրում կուսակցության (դաշինքի), նրա առաջնորդների (**ովքեր ընտրացուցակի առաջին երեք տեղերում են**) ցանկացած ձեւով հայտնվելը: Եթե կադրում հայտնվելը հանդիսանում էր այն նյութի մի մասը, որում արդեն իսկ անդրադարձ կար (լրիվ կամ մասնակի) տվյալ կուսակցությանը (դաշինքին)/նրա առաջնորդներին/ներկայացուցիչներին, ապա որպես լրացուցիչ հիշատակում այն չի արձանագրվել: Եթե կուսակցության (դաշինքի)/նրա առաջնորդների հայտնվելը տեղ է գտել նյութի այն հեռուստատեսային կադրում, որտեղ նրան ոչ մի անդրադարձ չի եղել, ապա այն դիտարկվել է որպես առանձին հիշատակում:

Որպես հիշատակում են արձանագրվել նաեւ այն նյութերը, որոնցում արձարձվել է արտասահմանյան այն կուսակցության գործունեությունը, որն ընդհանուր ծագում եւ պատմություն ունի դիտարկման առարկա հանդիսացած համանուն կուսակցության հետ, բայց միենալով ժամանակ ոչինչ չի ասվել հայաստանյան համանուն կուսակցության հետ արտասահմանյան այդ կուսակցության կապի մասին:

**Հեռուստառադիրնյութում կուսակցությունների/դաշինքի ընտրացուցակում առաջին երեք տեղերը զբաղեցնող առաջնորդների ցանկացած ձեւով հայտնվելը դիտարկվել է որպես անդրադարձ տվյալ կուսակցությանը/դաշինքին՝ անկախ այն բանից, թե որպես ինչ են այդ անձինք հանդես եկել (անգամ եթե նրանք նյութում ներկայացվել են որպես իրենց ոչ կուսակցական պաշտոնական կամ մասնագիտական պարտականությունները իրականաց-**

**նող): Եվ, հետեւաբար, նման անդրադարձը հետազոտվել է վերոթվարկյալ եւ ներքոթվարկյալ բոլոր կատեգորիաներով (անդրադարձի ծեւն ու բնույթը, եթերաժամանակը):**

**Կուսակցության/դաշինքի մյուս ներկայացուցիչների պարագայում անդրադարձը (դրա ծեւն ու բնույթը, եթերաժամանակը) արձանագրվել է միայն այն ժամանակ, երբ նրանց կուսակցական պատկանելությունը որեւէ կերպ ընդգծվել է նյութում:**

Հայաստանում ներկայիս կառավարող կուսակցիային ցանկացած անդրադարձ, անկախ այն բանից՝ նյութում բացահայտվել են, թե ոչ կուսակցիայում ընդգրկված կուսակցությունները, դիտարկվել է որպես անդրադարձ երեք կուսակցիոն կուսակցություններին՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությանը, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը եւ «Օրինաց երկիր» կուսակցությանը, հետեւաբար՝ հետազոտվել է վերոթվարկյալ եւ ներքոթվարկյալ բոլոր կատեգորիաներով (անդրադարձի ծեւն ու բնույթը, եթերաժամանակը):

Յուրաքանչյուր նյութում արձանագրվում էր կուսակցության (դաշինքի)/նրա առաջնորդների/ներկայացուցիչների միայն մեկ անդրադարձ եւ նրա միայն մեկ ծեւ:

Այս կատեգորիաներում հաշվարկը կատարվում էր **միավորներով**:

## **2. Կուսակցություններին (դաշինքներին)/նրանց առաջնորդներին/ներկայացուցիչներին անդրադարձների բնույթը հեռուստառադիրնյութերում**

Մշտադիտարկողները պարզել եւ համապատասխան սյունակում արձանագրել են հեռուստառադիրնյութում կուսակցության (դաշինքի)/նրա առաջնորդների/ներկայացուցիչների անդրադարձների բնույթը՝ **դրական (+), բացասական (-) կամ չեղոք (0)**:

Նշանային (դրական, բացասական) անդրադարձներ ասելով հասկացվում էին հրապարակումներում առկա այն անդրադարձները, որոնք լսարանի մոտ կուսակցության/դաշինքի կամ նրա առաջնորդների/ներկայացուցիչների մասին միանշանակ դրական կամ բացասական ընդհանուր տպավորություն էին թողնում: Այնտեղ, ուր նման միանշանակություն չկար, անդրադարձն արձանագրվում էր իբրև չեղոք: Մշտադիտարկողի բոլոր կասկածները նույնպես մեկնաբանվում էին հօգուտ անդրադարձը չեղոք հաշվառելուն:

Բացի այդ, եթե նյութում հայորդվում էր այն մասին, որ որեւէ անձ/կազմակերպություն հրապարակայնորեն հայտարարել է ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում այս կամ այն կուսակցությանը(դաշինքին) սատարելու/չսատարելու մասին, ապա վերջինիս անդրադարձն արձանագրվում էր որպես համապատասխանաբար դրական/բացասական:

Յուրաքանչյուր նյութում արձանագրվում էր յուրաքանչյուր կուսակցության(դաշինքի)/նրա առաջնորդների/ներկայացուցիչների միայն մեկ բնորոշիչ նշան (+, - կամ 0):

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվում էր **միավորներով**:

### 3. Քեռուստառադիոնյութերում կուսակցություններին (դաշինքներին)/նրանց առաջնորդներին/ներկայացուցիչներին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված եթերաժամանակը

Եթե նյութն ամբողջովին կամ մասնակի էր նվիրված կուսակցությանը (դաշինքին), ապա դիտարկողները պարզել եւ արձանագրել են այն **եթերաժամանակը**, որը տրամադրվել է կուսակցությանը (դաշինքին)/նրա առաջնորդներին/ներկայացուցիչներին՝ իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու, ինչպես նաև այլ անձանց՝ նրանց մասին իրենց դատողություններն ու պատմությունները ներկայացնելու համար:

Կուսակցությանը (դաշինքին)/նրա առաջնորդներին/ներկայացուցիչներին իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու կամ նրանց մասին այլոց կողմից դատողություններ անելու կամ պատմելու համար հատկացված եթերաժամանակի չափումն իրականացվում էր հետեւյալ սկզբունքով.

1) Եթե նյութն ամբողջովին նվիրված էր այս կամ այն կուսակցությանը/դաշինքին, ապա դրա ողջ եթերաժամանակը մշտադիտարկողները վերագրել են տվյալ կուսակցությանը/դաշինքին,

2) Եթե կուսակցությանը/դաշինքին նվիրվում էր նյութի մի մասը միայն, ապա մշտադիտարկողները տվյալ կուսակցությանը/դաշինքին են վերագրել եթերաժամանակի միայն այն մասը, որը նվիրված էր նրան,

3) Եթե ամբողջովին կուսակցությանը/դաշինքին (անվանենք այն X) նվիրված նյութում բերվում էին մի այլ (X կուսակցությունից տարբեր) կուսակցության/դաշինքի (անվանենք այն Y) ասուլթներ կամ՝ այլ անձանց դատողություններ, պատմություններ Y-ի մասին (*առանց X-ի հետ համեմատության*), ապա Y-ին է վերագրվել նյութի այդ մասի համապատասխան եթերաժամանակը,

4) Եթե ամբողջովին X կուսակցությանը/դաշինքին նվիրված նյութում ներկայացվում էին նրա արտահայտությունները մի այլ՝ Y կուսակցության/դաշինքի մասին կամ՝ Y-ի արտահայտությունները X-ի մասին կամ՝ այլ անձանց դատողությունները, պատմությունները Y-ի մասին՝ **X-ի համեմատությամբ**, ապա այդ նյութի եթերաժամանակի **50-ական տոկոսը** մշտադիտարկողները վերագրել են ինչպես X-ին, այնպես էլ Y-ին:

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվել է **վայրկյաններով**:

#### IV. «Հյուր ստուդիայում»/թոք-շոու/հարցազրույց ձեւաչափի զանազան ուղղվածության հաղորդումների մասնակիցների արձանագրումը

Քետազուտվող հեռուստառադիոալիքի երեկոյան փրայմ-թայմին (**18.00-01.00**) առանձին ցուցակով մշտադիտարկողները արձանագրել են **«Հյուր ստուդիայում»/թոք-շոու/հարցազրույց ձեւաչափի տարբեր ուղղվածության հաղորդումների** (այդ

թվում, տվյալ ծեւաչափի առկայության պարագայում, լրատվական ծրագրերի) մասնակիցներին: Ցուցակում նշվել են հաղորդման անվանումը, հրավիրված մասնակիցների անունը (անունները)/պաշտոնը (-ները):

## **ՄՃՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՎԱԾ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մշտադիտարկման առարկա են դարձել Հայաստանի Ազգային ժողովի ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցելու համար ՀՀ ԿԸՆ-ի կողմից գրանցված 8 կուսակցություններ եւ 1 կուսակցական դաշինք:

### **ՀՀ ԱԺ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ԴԱՇԻՆՔԻ ՑՈՒՑԱԿ**

<b>1.</b>	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն. Գագիկ Ծառուկյան, Վարդան Օսկանյան, Վարդան Վարդանյան
<b>2.</b>	«Ժառանգություն» կուսակցություն. Շաֆֆի Հովհաննիսյան, Խաչատրութ Ջորջեյան, Զարուհի Փոստանցյան
<b>3.</b>	Հայ ազգային կոնգրես կուսակցությունների դաշինք. Լեւոն Տեր-Պետրոսյան, Ստեփիան Դեմիրջյան, Արամ Չավենի Սարգսյան
<b>4.</b>	«Հայ Յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն. Վահան Հովհաննեսյան, Արմեն Ռուստամյան, Արտյով Շահբայյան
<b>5.</b>	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն. Արամ Գասպարի Սարգսյան, Լենսեր Աղալովյան, Արմեն Հովսեփյան
<b>6.</b>	Հայաստանի կոմոնիստական կուսակցություն. Ռուբեն Թովմասյան, Վազգեն Սաֆարյան, Տաճատ Սարգսյան
<b>7.</b>	Հայաստանի հանրապետական կուսակցություն. Սերժ Սարգսյան, Հովհան Աբրահամյան, Տիգրան Սարգսյան
<b>8.</b>	«Միավորված հայեր» կուսակցություն. Ռուբեն Ավագյան, Գուրգեն Հովսեփյան, Գայանե Անդրեասյան
<b>9.</b>	«Օրինաց երկիր» կուսակցություն. Արթուր Բաղդասարյան, Հեղինե Բիշարյան, Արմեն Երիցյան

## 2013թ. ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մշտադիտարկումն իրականացվում էր երեք փոլով. **առաջին փոլն** ընդգրկում էր 2012թ. հոկտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածը (նախընտրական քարոզության նախաշեմ), **երկրորդ փոլը՝** 2013թ. հունվարի 14-20-ը (ՀՀ նախագահի թեկնածուների պաշտոնական գրանցումից մինչեւ նախընտրական քարոզության սկզբն ընկած ժամանակահատվածը), **երրորդ փոլը՝** 2013թ. հունվարի 21-ից մինչեւ փետրվարի 16-ը (նախընտրական քարոզության ժամանակահատվածը):

### ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆ ԸՆԴԳՐԿԵԼ Է 9 ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ.

6 համազգային հեռուստաալիք՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ալիք (Բ1), «Արմենիա», «Երկիր Մեղիա», «Կենտրոն», Հայկական Երկրորդ հեռուստաալիք (Բ2), «Ճանթ»,

1 մայրաքաղաքային հեռուստաալիք՝ «Արմյութ» (հայաստանյան հեռուստաալիքներից միակը, որի լիցենզիան ենթադրում է լրատվական-վերլուծական ու միջազգային ուղղվածություն),

2 ռադիոալիք՝ Հայաստանի հանրային ռադիո, «Արմռադիո FM 107» (Հայաստանում միակ «զրուցակցային» շուրջօրյա ռադիոալիքը, որն առաջնահերթ ուշադրություն է դարձնում հասարակական-քաղաքական գործընթացներին):

### ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՃԵՄ 2013թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1 - ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ էին քանակական եւ որակական տվյալների վերլուծության միջոցով պարզել եւ սահմանել.

- ՀՀ նախագահի 2013թ. ընտրությունների նկատմամբ Հայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ների ուշադրության աստիճանը,

- հեռարձակվող ԶԼՄ-ները նախագահական ընտրությունների նախաշեմին որքան ազատ եւ անկողմնակալ են տեղեկություններ տրամադրել ընտրազանգվածին՝ ՀՀ նախագահի հնարավոր թեկնածուների մասին, ապահովել նրանց մուտքը Եթեր՝ իրենց հայացքների, կարծիքների արտահայտման համար,

- որքանով է քաղաքական գործիքների (առաջիկա ընտրարշավի հնարավոր մասնակիցների) գործունեության լուսաբանումը համապատասխանել ՀՀ օրենսդրության պահանջներին:

Մշտադիտարկման վերոթվարկյալ խնդիրների իրականացման համար կիրառվել են դիտարկման քանակական եւ որակական մեթոդաբանություններ:

**ՔԱՆԱԿԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ** ներառում էր հեռարձակվող ԶԼՄ-ների բոլն նյութերի հաշվարկն ու չափումները (քանակական դիտարկման իրականացման մեթոդաբանությունը՝ տես ստորեւ):

**ՈՐԱԿԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆ** իրենից ներկայացնում էր ստացված քանակական տվյալների վերլուծության եւ դիտարկման ժամանակահատվածում ԶԼՄ-ներում իրավիճակի գնահատման համադրում, որը հիմնվում էր ԶԼՄ-ների, քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ փորձագիտական հանրության ներկայացուցիչների հետ հարցազրույցների, ինչպես նաև ԶԼՄ-ներում ընտրարշավի լուսաբանմանը նվիրված հրապարակումների վերլուծության, նախընտրական շրջանում ԶԼՄ-ների գործունեության վերաբերյալ կուսակցությունների ներկայացուցիչների եւ քաղաքական գործիչների հայտարարությունների ուսումնասիրման վրա:

**ՎԵՐՈՆՇՅԱԼ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՌՈՎԵՐՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՆ ԵՆԹԱՐԿՎԵԼ** երեկոյան փրայմ-թայմին (**18.00-01.00**) հեռարձակվող բոլոր հաղորդումները, **բացառությամբ** առեւտրային/քաղաքական/սոցիալական գովազդի/հայտարարությունների ու վազող տողի:

**ՄՃՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ** են եղել բոլոր այն հեռուստառադիոնյութերը, որոնցում անդրադարձներ կային գործադիր իշխանության եւ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին, հիշատակվում էին ՀՀ նախագահի հնարավոր թեկնածուները:

## ՄՃՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I. Հետազոտության հիմնական միավորը **հեռուստա- եւ ռադիոնյութն է:**

**Հեռուստա- եւ ռադիոնյութ ասելով հասկանում ենք.**

Եթերի՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ առանձնացված միավոր, այսինքն՝

ա. լրատվական ծրագրի առանձին սյուժեն,

բ. հաղորդավարական տեքստով ընթերցվող առանձին տեղեկատվությունը,

գ. հաղորդման՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ (միջարկում, բյուս եւ այլն) առանձնացված մասը (բաժինը, սյուժեն), որն անդրադառնում է տարբեր թեմաների/խնդիրների,

դ. սյուժեների ծանուցումները (անոնսները) դիտարկվել են իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում են,

ե. հեռուստա- եւ ռադիոսյուժեին (ռեպորտաժին եւ այլն) նախորդող հաղորդավարական տեքստը դիտարկվել է իբրեւ այդ սյուժեի (ռեպորտաժի եւ այլն) մաս:

Ընդսմին.

- **Լրատվական եւ լրատվական-վերլուծական ծրագրերը** բաժանվել են սյուժեների, որոնցից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ,

- Յասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները, ինչպես նաև տարբեր ուղղվածության մնացած բոլոր հաղորդումները դիտարկվել են հետեւյալ կերպ:

1. Եթե հաղորդումն ամբողջովին նվիրված էր առանձին թեմայի, ապա այն դիտարկվել է որպես մեկ ինքնուրույն նյութ,

2. Եթե հաղորդումը կառուցված էր խճանկարային սկզբունքով, այն է՝ բաժանված էր ինքնուրույն թեմատիկ բաժինների, ապա այդ բաժիններից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ:

**II. Մշտադիտարկողներն ամեն օր արձանագրել են հետազոտվող եթերի տեսողությունը (**18.00-ից մինչեւ 01.00**):**

Մինչեւ ժամը **18.00-ն** սկսված, սակայն այդ ժամին չափարտված հաղորդումները չեն դիտարկվել. մշտադիտարկումն սկսվել է տվյալ հաղորդումն ավարտվելուց հետո: Մինչեւ **01.00-ն** սկսված, սակայն այդ ժամին չափարտված հաղորդումները դիտարկվել են ամբողջովին՝ մինչեւ դրանց ավարտը:

**Մշտադիտարկման չեն ենթարկվել.**

- առեւտրային/քաղաքական/սոցիալական գովազդը/հայտարարությունները,

- վազող տողը:

**III. Մշտադիտարկման ընթացքում պարզվել եւ արձանագրվել են.**

## **1. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՆՈՐԴՈՒՄՆԵՐՈՒՄ.**

**A. Հեռուստառադիոնյութերում գործադիր իշխանության եւ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին խոսքի տրամադրումը**

Մշտադիտարկողները պարզել եւ համապատասխան սյունակներում արձանագրել են գործադիր իշխանության կամ քաղաքական կուսակցությունների ներկայացուցչին խոսքի տրամադրման բոլոր դեպքերը (ներկայացուցչի ելույթը, հարցազրույցը, ուղղակի խոսքը, լրագրողի կողմից նրա խոսքի ուղղակի կամ անուղղակի մեջբերումը):

Եթե նյութում ոչ մի կերպ չէր ընդգծվում անձի կուսակցական պատկանելությունը կամ էլ նրա պատկանելությունը գործադիր իշխանությանը, ապա նրան անդրադարձ չի արձանագրվել:

Եթե նյութում ընդգծվել է անձի ինչպես կուսակցական պատկանելությունը, այնպես էլ նրա պատկանելությունը գործադիր իշխանությանը (այդ թվում՝ նախագահական), ապա նրան անդրադարձն արձանագրվել է՝ կախված այն բանից, թե տվյալ անձի որ իրավասության վրա է նյութում շեշտադրում արվել: Յամանման մոտեցում է կիրառվել նաև այն դեպքում, եթե նյութում նշվել է անձի պատկանելությունը մեկ եւ ավելի կուսակցության:

## Բ. Հեռուստառադիոնյութերում ՀՀ նախագահի հնարավոր թեկնածուների հիշատակումները

Մշտադիտարկողները պարզել են ՀՀ նախագահի հավանական թեկնածուի հիշատակումը նյութում, համապատասխան սյունակում արձանագրելով նյութում արտահայտված **վերաբերմունքը** տվյալ թեկնածուի նկատմամբ՝ նրա հնարավոր առաջադրման համատեքստում.

- ի արտահայտումն **աջակցության**
- ի արտահայտումն **չաջակցության**
- **չեզոք վերաբերմունք:**

Յուրաքանչյուր նյութում արձանագրվել է միայն մեկ վերաբերմունք յուրաքանչյուր հնարավոր թեկնածուի նկատմամբ:

## 2. ԲԱՆԱԿԻՃԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԲԵՐ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ԲՈԼՈՐ ԴԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՈՒՄ.

## Ա. Հեռուստառադիոնյութերում ՀՀ նախագահի հնարավոր թեկնածուների հիշատակումները

Տարբեր ուղղվածության, այդ թվում՝ բանավիճային հաղորդումների նյութերում մշտադիտարկողները պարզել եւ համապատասխան սյունակում արձանագրել են ՀՀ նախագահի հնարավոր թեկնածուի հիշատակումը՝ նշելով նյութում արտահայտված **վերաբերմունքը** տվյալ թեկնածուի նկատմամբ՝ նրա հնարավոր առաջադրման համատեքստում.

- ի արտահայտումն **աջակցության**
- ի արտահայտումն **չաջակցության**
- **չեզոք վերաբերմունք:**

Յուրաքանչյուր նյութում արձանագրվել է միայն մեկ վերաբերմունք յուրաքանչյուր հնարավոր թեկնածուի նկատմամբ:

## Բ. «Հյուր ստուդիայում» ձեւաչափի բանավիճային հաղորդումների մասնակիցների արձանագրումը

Հետազոտվող հեռուստառադիոալիքի երեկոյան փրայմ-թայմին (**18.00-01.00**) առանձին ցուցակով մշտադիտարկողները արձանագրել են **«հյուր ստուդիայում»** ձեւաչափի **բանավիճային** հաղորդումների մասնակիցներին: Ցուցակում նշվել են հաղորդման անվանումը, հրավիրված մասնակիցների անունը (-ները)/պաշտոնը (-ները):

Վերոթվարկյալ բոլոր կատեգորիաներում հաշվարկը կատարվում էր **միավոր-ներով**:

## ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼԵՐ

**2013թ. ՀՈՒՆՎԱՐԻ 14-20 ԵՎ**  
**2013թ. ՀՈՒՆՎԱՐԻ 21 - ՓԵՏՐՎԱՐԻ 16**

**ՄՃՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ** էին քանակական եւ որակական տվյալների վերլուծության միջոցով պարզել եւ սահմանել.

- ՀՀ նախագահական ընտրությունների նկատմամբ Քայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ների ուշադրության աստիճանը,

- հեռարձակվող ԶԼՄ-ները որքան ազատ եւ անկողմնակալ են տեղեկություններ տրամադրել ընտրազանգվածին՝ ՀՀ նախագահի թեկնածուների մասին, ապահովել նրանց մուտքը եթեր՝ իրենց հայացքների, կարծիքների արտահայտման համար,

- հեռարձակվող ԶԼՄ-ները որքանով են կատարել նախընտրական քարոզությունը կարգավորող օրենսդրության դրույթները,

- նախընտրական քարոզության ժամանակաշրջանում հեռարձակվող ԶԼՄ-ների կողմից ընտրությունների լուսաբանումը որքանով է համապատասխանել ՀՀ միջազգային պարտավորություններին:

Մշտադիտարկման վերոթվարկյալ խնդիրների իրականացման համար կիրառվել են դիտարկման քանակական եւ որակական մեթոդաբանություններ:

**ՔԱՆԱԿԱՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ** ներառում էր հեռարձակվող ԶԼՄ-ների բուն նյութերի հաշվարկն ու չափումները (քանակական դիտարկման իրականացման մեթոդաբանությունը՝ տես ստորեւ):

**ՈՐԱԿԱՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆ** իրենից ներկայացնում էր ստացված քանակական տվյալների վերլուծության եւ դիտարկման ժամանակահատվածում ԶԼՄ-ներում իրավիճակի գնահատման համադրում, որը հիմնվում էր ԶԼՄ-ների, քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ փորձագիտական հանրության ներկայացուցիչների հետ հարցազրույցների, ինչպես նաև ԶԼՄ-ներում ընտրարշավի լուսաբանմանը նվիրված հրապարակումների վերլուծության, նախընտրական շրջանում ԶԼՄ-ների գործունեության վերաբերյալ կուսակցությունների ներկայացուցիչների եւ քաղաքական գործիչների հայտարարությունների ուսումնասիրման վրա:

**ՎԵՐՈՆՇՅԱԼ ՀԵՌՈՒՏԱՌԱԴԻՌՈՎԵՐՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՆ ԵՆ-ԹԱՐԿՎԵԼ.**

**ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ (2013թ. հունվարի 14-20)** - երեկոյան փրայմ-թայմին հեռարձակվող տեղեկատվական/տեղեկատվական-վերլուծական հաղորդման

հիմնական թողարկումը եւ մեկ հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդում (ամենօրյա կտրվածքով)

**ԵՐՐՈՐԴ ՓՈԽԼՈՒՄ (2013թ. հունվարի 21 - փետրվարի 16) - Երեկոյան փրայմ-թայմին (18.00-01.00) հեռարձակվող բոլոր հաղորդումները, բացառությամբ նախընտրական քարոզության բլոկների, ինչպես նաև առեւտրային/սոցիալական գովազդի/հայտարարությունների ու վազող տողի:**

**ՄՃՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ** են եղել բոլոր այն հեռուստառադիոնյութերը, որոնցում անդրադարձ կար ՀՀ նախագահի թեկնածուներին:

## ՄՃՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I. Հետազոտության հիմնական միավորը **հեռուստա- եւ ռադիոնյութն է:**

**Հեռուստա- եւ ռադիոնյութ ասելով հասկանում ենք.**

Եթերի՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեռավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

ա. լրատվական ծրագրի առանձին սյուժեն,

բ. հաղորդավարական տեքստով ընթերցվող առանձին տեղեկատվությունը,

գ. հաղորդման՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեռավորմամբ (միջարկում, բյուս եւ այլն) առանձնացված մասը (բաժինը, սյուժեն), որն անդրադառնում է տարբեր թեմաների/խնդիրների,

դ. սյուժեների ծանուցումները (անոնսները) դիտարկվել են իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում են,

ե. հեռուստա- եւ ռադիոսյուժեին (ռեպորտաժին եւ այլն) նախորդող հաղորդավարական տեքստը դիտարկվել է իբրեւ այդ սյուժեի (ռեպորտաժի եւ այլն) մաս:

Ընդունակությունը կազմում է առանձին սյուժեների համար առանձին դիտարկություն և առանձին սյուժեների համար առանձին դիտարկություն:

- **Լրատվական եւ լրատվական-վերլուծական ծրագրերը** բաժանվել են սյուժեների, որոնցից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ:

- **Հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները**, ինչպես նաև տարբեր ուղղվածության հաղորդումները դիտարկվել են հետեւյալ կերպ:

1. Եթե հաղորդումն ամբողջովին նվիրված էր առանձին թեմայի, ապա այն դիտարկվել է որպես մեկ ինքնուրույն նյութ,

2. Եթե հաղորդումը կառուցված էր խճանկարային սկզբունքով, այն է՝ բաժանված էր ինքնուրույն թեմատիկ բաժինների, ապա այդ բաժիններից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ:

